ՀՀ ՏՄՊՊՀ

Հայաստանի Հանրապետության տնտեսական
մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

2020



ՀՀ ՏՄՊՊՀ

Հայաստանի Հանրապետության տնտեսական
մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

2020



ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
Gegham Gevorgyan / Գեղամ Գևորգյան
+374 60 830 840
www.competition.am
info@competition.am
ՀՀ ՏՄՊՊՀ

Բովանդակություն

Հանձնաժողովի մասին 8

Տնտեսական մրցակցության պաշտպանություն և վերահսկողություն 16

Համակենտրոնացում 36

Ոլորտային ուսումնասիրություններ 39

Արտակարգ դրություն 64

Օրենսդրական աշխատանքներ 76

Մրցակցային վիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ 81

Միջազգային համագործակցություն 86

Հանրային իրազեկում 89

Էլեկտրոնային համակարգ 91

2021 թվականի առաջնահերթությունները 92

Ֆինանսատնտեսական գործունեություն 94

Հավելված. 2020 թվականի վարչական վարույթները 96

Նախագահի ուղերձը

Բարեխիղճ մրցակցությունը, ազատ շուկաները նշանակալի ազդեցություն ունեն ինչպես տնտեսական աճի, բիզնեսի զարգացման, այնպես էլ մեր բոլորի՝ որպես սպառողների կյանքի և բարօրության վրա: Որքան մրցակցային են շուկաները, այնքան առողջ է տնտեսությունը և հեշտ է դիմագրավում մարտահրավերներին, որոնք ժամանակակից աշխարհում առավել անկանխատեսելի և դժվար կառավարելի են:

2020 թվականն այդ առումով քննություն էր երկրների տնտեսությունների, պետական ինստիտուտների համար: COVID-19 համավարակը փոխեց մեր կյանքը՝ ստիպելով դուրս գալ հարմարավետության գոտուց և խնդիրների լուծման գործընթացում առավել ճկուն և ոչ ստանդարտ մոտեցումներով առաջնորդվել: Տարվա մեծ մասը Հանձնաժողովն իրականացրել է ճգնաժամային կառավարում՝ աշխատելով համավարակի, հետո արդեն՝ ռազմական դրության պայմաններում, հաճախ՝ 24/7 ռեժիմով: Այսօր կարող ենք վստահաբար փաստել, որ կարողացանք հաղթահարել 2020-ին մեզ բաժին հասած խնդիրները, միաժամանակ այդ ընթացքում հաջողեցինք իրականություն դարձնել օրակարգային կարևոր նախագծեր, որոնք ուղղված են համակարգային հարցերի լուծմանը և Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես 2020-ին մշակվեց ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և շուրջ 20 հարակից օրենքների նախագծերի ծավալուն փաթեթ: Նախագծերի փաթեթն արդեն ընդունվել է և ուժի մեջ կմտնի այս տարվա մայիսի 31-ին: Նոր փոփոխությունները նախատեսում են ոլորտը կարգավորող մի շարք նորամուծություններ, որոնք կնպաստեն կանխատեսելի և արդյունավետ վարչարարության իրականացմանը՝ ի շահ թե՛ տնտեսավարող սուբյեկտի, թե՛ պետության և թե՛ քաղաքացու: Մեկնարկեց Հանձնաժողովի ներքին գործառույթների թվայնացման գործընթացը, իրականացվեցին էլեկտրոնային համակարգի մշակման ու ներդրման աշխատանքներ: Էլեկտրոնային գործիքակազմի ներդրմամբ հնարավորություն կտրվի քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին դիմել Հանձնաժողով նաև առցանց եղանակով: Այդ թվում՝ ներկայացնել հաշվետվություններ, ստանալ ծանուցումներ, տեղեկատվություն իրենց առնչվող

վարույթների ընթացքի վերաբերյալ, ծանոթանալ տվյալ գործի շրջանակում առկա փաստաթղթերին: Կունենանք այլ պետական մարմինների տվյալների շտեմարանների հետ փոխինտեգրված վարույթների վարման ներքին էլեկտրոնային հարթակ:

Տնտեսավարող սուբյեկտների հետ աշխատանքներում մեծ կարևորություն ենք տվել կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը նրանց հետ երկխոսության խրախուսման և փոխադարձ վստահության վրա հիմնված գործընկերային հարաբերություններ հաստատելու նպատակով: Մշակվել են խորհրդատվական բնույթի ուղեցույցներ, պարբերաբար կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ:

Բարեխիղճ և ազնիվ տնտեսավարողը մեր թիվ մեկ գործընկերն է, և մեր աշխատանքներն ուղղված են ու նաև 2021 թվականի առաջնահերթությունների ներքո ուղղված են լինելու շուկաներում տնտեսական մրցակցությունը խաթարող երևույթների բացահայտմանն ու բարեխիղճ, ազնիվ և արդար մրցակցային մշակույթի ամրապնդմանը:

Գեղամ Գևորգյան

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ

1. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասին

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը ստեղծվել է 2001 թվականին «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա: Հանձնաժողովը մրցակցության պաշտպանություն իրականացնող ինքնավար մարմին է, որն իր գործառույթներն ու լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն է:

Գործառույթները

Ապահովել

- Տնտեսական գործունեության ազատությունը,
- ազատ տնտեսական մրցակցությունը,
- բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրը:

Իրականացնել

- Սպառողների շահերի պաշտպանությունը:

Լիազորությունները

Խախտումների կանխում

- Հաստատում է տնտեսական մրցակցությանն առնչվող խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ,
- իրազեկում է հանրությանը տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի մասին,
- տալիս է պարզաբանումներ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ,
- օրենքով նախատեսված դեպքերում տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց գործողության, գործարքի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ ընդունում է եզրակացություն,
- տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց տալիս է զգուշացում այն գործողությունների և (կամ) վարքագծի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը կամ վնասել սպառողների շահերը,
- իրականացնում է ոլորտային ուսումնասիրություն:

Խախտումների բացահայտում և պատասխանատվության միջոցի կիրառում

- Հարուցում է տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ և օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր կողմից սահմանված ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն,
- օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ դիմում է պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերադասին, իսկ վերադաս չունենալու դեպքում՝ պետական մարմնին կամ դրա պաշտոնատար անձին:

Վերահսկողություն

- տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ,
- Հանձնաժողովի որոշման կատարման (պահպանման) նկատմամբ:

Հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովը կազմված է նախագահից և վեց անդամներից, որոնց նշանակում է Ազգային ժողովը: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Հանձնաժողովի անդամների պաշտոններն ինքնավար պաշտոններ են:

Գեղամ Գևորգյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու

2019թ. ապրիլի 23-ին նշանակվել է Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ 5 տարի ժամկետով:

Նախագահը

- Ներկայացնում է Հանձնաժողովը ՀՀ-ում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
- ղեկավարում և համակարգում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը, այդ նպատակով իր կողմից նշանակվող աշխատողներին տալիս է հանձնարարականներ, կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում Հանձնաժողովի անդամների միջև,
- հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում նիստի օրակարգը:

Հանձնաժողովի անդամը

- Մասնակցում է Հանձնաժողովի նիստերին և քվեարկում, Հանձնաժողովի նիստի ժամանակ կարող է հանդես գալ ելույթներով, հարցերով և առաջարկություններով,
- մեծամասնության կարծիքից տարբերվող կարծիք ունենալու դեպքում ներկայացնում է հատուկ կարծիք,
- Հանձնաժողովին և Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է առաջարկություններ,
- իր համակարգման լիազորությունների սահմաններում համակարգում է կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը կամ դրա կողմից իրականացվող աշխատանքները, տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն, ապահովում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականների իրականացումը:

Հայկ Կարապետյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու

2019թ. մայիսի 31-ին նշանակվել է Հանձնաժողովի անդամ 4 տարի ժամկետով:

Տիգրան Մարկոսյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու

2019թ. մայիսի 31-ին նշանակվել է Հանձնաժողովի անդամ 3 տարի ժամկետով:

Վահե Չիբուխչյան

Տնտեսագետ

2019թ-ի մայիսի 31-ին նշանակվել է Հանձնաժողովի անդամ 3 տարի ժամկետով:

Արեն Դանիելյան

Տնտեսագետ, ճարտարագետ

2019 թ-ի մայիսի 31-ին նշանակվել է Հանձնաժողովի անդամ 3 տարի ժամկետով:

Էդգար Ճաղարյան

Տնտեսագիտության թեկնածու

2019թ-ի հունիսի 28-ին նշանակվել է Հանձնաժողովի անդամ 2 տարի ժամկետով:

Կարեն Սեդրակյան

Տնտեսագիտության թեկնածու

2020թ-ի հուլիսի 8-ին կրկին նշանակվել է Հանձնաժողովի անդամ 5 տարի ժամկետով:

Հանձնաժողովի կառուցվածքը

Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը



Ընդհանուր քաղաքակա-նության և շուկաների վերլուծության վարչություն

- Ընդհանուր քաղաքա-կանության մշակման և մեթոդաբանության բաժին
- Շուկաների վերլուծության բաժին

Մրցակցության պաշտպանության վարչություն

- Գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների վերահսկողության բաժին
- Համակենտրոնացում-ների, պետական օժան-դակության, պետական գնումների վերահսկո-ղության բաժին

Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն

- Առաջին բաժին
- Երկրորդ բաժին

Իրավաբանական վարչություն

- Օրենսդրության վերլուծության և իրավական ապահովման բաժին
- Վարչական վարույթների և դատական ներկայացուցչության բաժին

Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Հանձնաժողովի թիմը 2020 թվականին համալրվել է նոր մասնագետներով տնտեսության տարբեր ճյուղերից:

Հանձնաժողովն ունի 86 հաստիքային միավոր, մասնավորապես՝

7 ինքնավար պաշտոն

59 քաղաքացիական ծառայող

10 հայեցողական պաշտոն

10 քաղաքացիական աշխատանք և տեխնիկական սպասարկում իրականացնող

Միացել են	6
Հեռացել են	13

50-65 տարեկան **6**

40-49 տարեկան **13**

30-39 տարեկան **25**

Մինչև 29 տարեկան **18**



Կին	36
Տղամարդ	26

Կառուցվածքային ստորաբաժանումներում փաստացի վբաղեցրած ղեկավար պաշտոններ

	Կին	Տղամարդ
Մասնագիտական ստորաբաժանումներ	6	5
Աջակցող ստորաբաժանումներ	4	

Իրավագետ	14
Տնտեսագետ	25
Այլ	23

Գիտ. թեկնածու	10
Մագիստրոս	21
Բակալավր	10
Դիպլոմավորված	17
Տեխն. սպասարկողներ	4



Մեր արժեքները

Անկախություն և անաչառություն

Հանձնաժողովն ինքնավար մարմին է և ապահովում է ազատ, բարեխիղճ և հավասար մրցակցություն բիզնեսի համար՝ անկախ քաղաքական կամ մասնավոր շահերից ու հետաքրքրություններից: Մեր որոշումները հիմնված են անաչառության, անկողմնակալության և օբյեկտիվության սկզբունքների վրա և կայացվում են մասնագիտական դիտանկյունից՝ հաշվի առնելով բացառապես գործին առնչվող իրավական և տնտեսական փաստարկներն ու հիմնավորումները:

Հանրային շահ

Մեր գործունեության գլխավոր նպատակակետը քաղաքացու բարօրությունն է, տնտեսության զարգացումը և երկրի առաջընթացը: Հանրային շահի առաջնայնության գաղափարը դրվում է որոշումների կայացման հիմքում:

Երկխոսություն

Մենք չենք աշխատում տպավորիչ վիճակագրություն ստանալու համար, խախտումներ հայտնաբերելն ու տնտեսավարողին պատասխանատվության ենթարկելն ինքնանպատակ չէ. այն պետք է նպաստի մրցակցային միջավայրի բարելավմանը և ոչ երբեք՝ հակառակը: Բիզնեսի հետ աշխատանքում որդեգրել ենք չվնասելու, համագործակցության ձեռք մեկնելու, երկխոսության ազդակ հաղորդելու մոտեցումը՝ կանխարգելելու հնարավոր խախտումները, միաժամանակ երաշխավորելով խաղի արդար կանոններ բոլորի համար: Բարեխիղճ և ազնիվ տնտեսավարողը մեր թիվ մեկ գործընկերն է:

Վստահություն

Մենք գիտակցում ենք, որ վստահությունն արդյունավետ աշխատանքի հիմնաքարն է, որի ամրությամբ է պայմանավորված բաց, գործընկերային և փոխշահավետ հարաբերությունների կառուցումը մեր բոլոր գործընկերների՝ միջազգային կառույցների, պետական կառավարման մարմինների, բիզնեսի և քաղաքացիների հետ: Վստահություն, որը պետք է լինի ամենօրյա ազնիվ, նվիրված և պատասխանատու աշխատանքի արդյունք: Մենք խստորեն պահպանում ենք բիզնեսի կողմից մեզ վստահված առևտրային գաղտնիքները:

Թափանցիկություն

Մենք աշխատում ենք բաց և թափանցիկ՝ մեծ կարևորություն տալով հանրային իրազեկմանը և լսարանի հետ արդյունավետ հաղորդակցության տարբեր գործիքների կիրառմանը: Գնահատում և խրախուսում ենք սպառողների և բիզնեսի հետ հետադարձ կապի ապահովումը և մշտապես կատարելագործում շփման հարթակները՝ հնարավորություն ստեղծելով առավել հարմար, մատչելի, նորարարական միջոցների կիրառմամբ հաղորդակցության համար:

Մենք հաշվետու ենք հանրության առջև և պարբերաբար հանդես ենք գալիս հրապարակումներով, մեր որոշումները հասանելի են բոլորին:

Առավելագույն արդյունք

Հավակնոտ ծրագրեր կազմել, ձգտել և հասնել հնարավոր առավելագույն արդյունքին՝ այս առաջ մղող գաղափարներն են ընկած մեր թիմի աշխատանքների հիմքում:

Մենք արձանագրում, սակայն չենք բավարարվում ընթացիկ ձեռքբերումներով՝ մշտապես լավարկելով իրավական դաշտն ու կարգավորումները, ընդունվող որոշումների որակը, աշխատանքային ընթացակարգերը՝ միջազգային լավագույն փորձին, նոր իրողություններին և նոր գիտելիքին համահունչ:

Թիմի յուրաքանչյուր անդամի մասնագիտական զարգացումն ու առաջխաղացումը մեզ համար առաջնահերթ մարտահրավեր է, որը մշտապես ուշադրության կենտրոնում է:

2. Տնտեսական մրցակցության պաշտպանություն և վերահսկողություն

2017–2020 թթ. վարչական վարույթները

	2017	2018	2019	2020*
Հակամրցակցային համաձայնություն	0	0	2	4
Գերիշխող դիրքի չարաշահում	5	3	20	20
Համակենտրոնացման հայտարարագրում	43	25	30	12
Չհայտարարագրված համակենտրոնացում	23	7	8	3
Անբարեխիղճ մրցակցություն	55	35	57	70
Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ	0	0	6	6
Պետական գնումներ	0	0	0	5
Տեղեկատվության չտրամադրում կամ ժամկետից ուշ տրամադրում	25	12	22	111
Հանձնաժողովին վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտում	0	0	0	2
Օրենքի խախտումները շտկելու վերաբերյալ հանձնարարականի չկատարում	0	0	0	4
Վարչական բողոքներ	3	3	4	10
Տուգանք, մլն ՀՀ դրամ	0	113	42	156

* Ներառյալ 31.12.2020թ. ընթացիկ վարույթները

2020 թվականի վարչական վարույթները*

	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ վարույթներ	2020թ. հարուցված փոխհատուցման վարույթներ	Լուծած և ավարտված վարույթներ	Պատասխանատվության միջոցներ**	Համակենտրոնացումների համար տրված թույլտվություններ	Կարճված վարույթներ	Ընթացիկ վարույթներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)
Հակամրցակցային համաձայնություն	1	3	4	2		2	
Գերիշխող դիրքի չարաշահում	6	14	13	7		8	7
Համակենտրոնացման հայտարարագրում	1	11	12		9	3	
Չհայտարարագրված համակենտրոնացում	1	2	2	1		1	1
Անբարեխիղճ մրցակցություն	24	46	59	42		20	11
Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ		6	4	3		2	2
Պետական գնումներ		5	3	1		2	2
Տեղեկատվության չտրամադրում կամ ժամկետից ուշ տրամադրում	1	110	87	76		11	24
Հանձնաժողովին վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտում		2	2	2			
Օրենքի խախտումները շտկելու վերաբերյալ հանձնարարականի չկատարում		4	4	4			
Վարչական բողոքներ		10	10				

* Մեկ վարույթի շրջանակներում կարող է կիրառվել մեկից ավելի պատասխանատվության միջոց և (կամ) վարույթի մասնակիցներից մեկի կամ մի քանիսի նկատմամբ վարույթը կարող է կարճվել

** Պատասխանատվության միջոցը ներառում է տրված նախազգուշացումները և կիրառված տուգանքները

Հակամրցակցային համաձայնություններ

Հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց բանավոր կամ գրավոր այն համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսավարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Հակամրցակցային համաձայնությունները լինում են՝

- **Հորիզոնական**, երբ հակամրցակցային համաձայնությունը կնքվում է միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև՝ առնչվելով տվյալ ապրանքային շուկային,
- **Ուղղահայաց**, երբ հակամրցակցային համաձայնությունը կնքվում է միևնույն ապրանքային շուկայում ձեռք բերող և իրացնող, մրցակից չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև՝ առնչվելով տվյալ ապրանքային շուկային,
- **Այլ**, երբ հակամրցակցային համաձայնությունը կնքվում է որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների միջև, ինչպես նաև օրենքով ուղղահայաց և հորիզոնական հակամրցակցային համաձայնություններ չհամարվող համաձայնությունները:

Հակամրցակցային համաձայնությունները տնտեսական մրցակցությանն առավել մեծ վնաս հասցնող դրսևորումներ են, որոնց արգելման պահանջն ամրագրված է ինչպես Օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ մասով, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ մասով:

	2017	2018	2019	2020
Վարույթներ	0	0	2	4
Պատասխանատվության միջոցներ	0	0	0	2

1. Հավի ձվի իրացմամբ զբաղվող ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարույթի հարուցման նախադրյալները

Հավի ձվի իրացման ոլորտում պարզվել է, որ մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել Օրենքի հնարավոր խախտումների, մասնավորապես՝ տնտեսա-

վարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման և (կամ) հակամրցակցային համաձայնության (չհիմնավորված կամ խտրական գների սահմանման և կիրառման, գների չհիմնավորված փոփոխությունների կամ պահպանման և այլն) հատկանիշներ:

2020 թվականի փետրվարի 20-ին Հանձնաժողովի «Մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 38-Ա որոշմամբ «Վարիանտ Գրուպ», «Լուսակերտ», «Լուսակերտի Էլիտ», «Գնթունիք», «Աշտարակ ձու» սահմանափակ պատասխանատվությամբ, «Արզնու տոհմային ԹՏՀ» բաց բաժնետիրական և «Արաքս թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից Օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ հարուցվել է վարչական վարույթ:

Գնային փոփոխությունները և դրանց հիմնավորվածության հանգամանքները

Վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների, գործում առկա ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում հաստատվել է, որ «Աշտարակ Ձու», «Արաքս Թռչնաֆաբրիկա», «Արզնի տոհմային ԹՏՀ», «Գնթունիք», «Լուսակերտ», «Լուսակերտի Էլիտ», «Վարիանտ Գրուպ» ընկերությունների կողմից 2019 թվականի դեկտեմբեր և 2020 թվականի հունվար, փետրվար ամիսների ընթացքում համաձայնեցված իրականացվել է հավի ձվի իրացման գնի պարբերական նվազեցում, իսկ 2020 թվականի մարտին նույն տնտեսավարող սուբյեկտների կողմից համաձայնեցված կատարվել է գնի բարձրացում: 2020 թվականի ապրիլի 1-ից մինչև օգոստոսի 27-ն ընկած ժամանակահատվածում ևս արձանագրվել են համաձայնեցված գնային քաղաքականության վարքագծի դրսևորումներ (գնի միաժամանակյա նվազեցում և բարձրացում):

Ընկերությունների կողմից կատարված գնային փոփոխությունները պայմանավորված չեն եղել ապրանքի ինքնարժեքի փոփոխությամբ կամ այլ տնտեսական գործոններով և (կամ) համաչափ չեն եղել ինքնարժեքի փոփոխությանը, ինչը հաստատվել է տնտեսավարող սուբյեկտներից, ՊԵԿ-ից, առևտրային ցանցերից և «Թռչնաբույծների միության» կողմից ստացված տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում:

Տնտեսավարող սուբյեկտների դիրքորոշումները

Վարչական վարույթի ընթացքում ներկայացված դիրքորոշումներում, ինչպես նաև Հանձնաժողովի նիստի ընթացքում գրեթե բոլոր ձու արտադրող տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչները հայտնել են, որ իրենց կողմից վարվող գնային քաղաքականությունը պայմանավորված է եղել շուկայի մասնակից այլ տնտեսավարող

սուբյեկտների գնային քաղաքականության փոփոխություններով: Ավելին, որոշ արտադրողներ նշել են, որ հետևում են այլ տնտեսավարող սուբյեկտների կողմից սահմանվող գներին և արդյունքում ձևավորում են իրենց գինը: Այսինքն, հաշվետու ժամանակահատվածում վարույթի շրջանակներում դիտարկվող ընկերությունների կողմից գնային փոփոխությունները պայմանավորված չեն եղել ծախսերի, ինքնարժեքի և/կամ այլ տնտեսական գործոնների փոփոխությամբ: Իրացման (մատակարարման) գների փոփոխությունը պայմանավորված է եղել նաև այլ սուբյեկտների վարքագծին հետևելու հանգամանքով, որը տնտեսական գործոն չի համարվում:

Ընկերությունների այն դիրքորոշումը, որ արձանագրված գնային փոփոխությունները որոշ չափով պայմանավորված են եղել նաև իրենց արտադրության ծավալների ավելացմամբ, հիմնավորված չէ: Ընկերությունների կողմից 2019 թվականին 2018 թվականի համեմատ արտադրվել է շուրջ 16 տոկոսով ավել հավի ձու: Արտադրության ծավալների համեմատաբար ավելի մեծ աճ ունեցել են «Արզնու տոհմային ԹՏՀ» և «Գնթունիք» ընկերությունները: «Գնթունիք» ընկերության առավելագույն մնացորդների ծավալն արձանագրվել է 2020 թվականի փետրվարին, սակայն ընկերությունը հավի ձվի իրացման գինը սկսել է համաձայնեցված նվազեցնել դեռևս 2019 թվականի դեկտեմբերից: «Արզնու Տոհմային ԹՏՀ» ընկերության մնացորդները 2020 թվականի մարտին հասել են իրենց առավելագույն ծավալին, սակայն ընկերության կողմից 2020 թվականի մարտին տեղի է ունեցել իրացման գնի բարձրացում: «Աշտարակ Ձու» և «Վարիանտ Գրուպ» ընկերությունների արտադրության ծավալները նույն ժամանակահատվածում նվազել են:

Ընկերությունները չեն հիմնավորել գնային փոփոխությունների տնտեսական գործոններով պայմանավորված լինելու հանգամանքը, իսկ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի շրջանակներում լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության արդյունքում գների փոփոխության տնտեսական հիմնավորումներ չեն արձանագրվել:

Վարչական վարույթի արդյունքները

Վարույթի շրջանակներում Հանձնաժողովն ամրագրել է, որ ընկերությունները դիտարկվող ժամանակահատվածում կատարել են ապրանքի իրացման համաձայնեցված գնային քաղաքականություն՝ միևնույն ժամանակահատվածում համաձայնեցված իջեցնելով, այնուհետև բարձրացնելով ապրանքի իրացման գինը, ինչը հիմնավորված չի եղել տնտեսական պայմաններով (գործոններով):

Վարչական վարույթի նյութերով հաստատվել է, որ 2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև օգոստոսի 27-ն ընկած ժամանակահատվածում ընկերությունների կողմից ձվի իրացման (մատակարարման) գործընթացների շրջանակներում իրականացվել են իրացման գնի համաձայնեցված փոփոխության գործողություններ, որոնք ուղղված են եղել նաև փոքր և միջին արտադրության ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտների շուկայից դուրս մղմանը, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների համար շուկայի մուտքի խոչընդոտներ են ստեղծել:

Մասնավորապես, ընկերությունների դրսևորած վարքագծի արդյունքում մի շարք տնտեսավարող սուբյեկտներ դուրս են մնացել «Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայից, ինչի մասին վկայում է նաև Թռչնաբույծների միության տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գործող և Թռչնաբույծների միությանն անդամակցող սննդային ձու արտադ-

րող փոքր ֆերմերային տնտեսությունները 31 էին, 2020 թվականի փետրվար-հունիս ամիսներին իրենց տնտեսական գործունեությունը դադարեցրել են 9 տնտեսավարող սուբյեկտ, որոշ տնտեսավարող սուբյեկտներ հարկադրաբար կրճատել են աճեցվող գլխաքանակը՝ կտրուկ իջեցնելով արտադրության ծավալները:

Այսպիսով՝ «Աշտարակ Ձու», «Արաքս Թռչնաֆաբրիկա», «Արզնի տոհմային ԹՏՀ», «Գնթունիք», «Լուսակերտ», «Լուսակերտի Էլիտ», «Վարիանտ Գրուպ» ընկերությունները 2019 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև օգոստոսի 27-ն ընկած ժամանակահատվածում համաձայնեցված դրսևորել են միևնույն վարքագիծը. ձվի գները համաձայնեցված, տնտեսական պայմանների փոփոխություններով չպայմանավորված կամ դրանց ոչ համարժեք իջեցրել և բարձրացրել են, ինչը համարվում է հորիզոնական հակամրցակցային համաձայնություն և Օրենքով նախատեսված է պատասխանատվության միջոց:

Պատասխանատվության միջոցը

Վերոնշյալ գործողությունները Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 368-Ա որոշմամբ որակվել են հակամրցակցային համաձայնություն, ինչի կապակցությամբ նշված ընկերությունների նկատմամբ կիրառվել է հանրագումարային 102 869 586 ՀՀ դրամ տուգանք:

2. Նարնջի, մանդարինի, կիվիի և կիտրոնի իրացմամբ զբաղվող ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարույթի հարուցման նախադրյալները

Հանձնաժողովը 2020 փետրվարի 1-ից ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածում նարնջի, մանդարինի, կիվիի և կիտրոնի գնային տատանումներով և դրանց նկատմամբ սպառողների պահանջարկով պայմանավորված իրականացրել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ ապրանքների իրացմամբ զբաղվող որոշ ընկերությունների գործողությունները կարող են պարունակել գերիշխող դիրքի չարաշահումների և (կամ) հակամրցակցային համաձայնությունների հատկանիշներ:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ 2020 թվականի մայիսի 23-ի «Գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և (կամ) հնարավոր հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 171-Ա որոշմամբ:

Վարչական վարույթի առանձնահատկությունը

Հանձնաժողովն ապրանքային շուկայի հատկորոշման ժամանակ հաշվի է առել այն հանգամանքը, որ սպառողների պա-

հանջմունքների իրավիճակային փոփոխությունների արդյունքում կարող են ձևավորվել առանձնահատուկ ապրանքային շուկաներ. նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սպառողները որպես դիմադրողականությունը բարձրացնող միջոց սկսել են շատ օգտագործել C վիտամին պարունակող նարինջ, մանդարին, կիտրոն և կիվի, ինչն էլ հանգեցրել է վերջիններիս նկատմամբ պահանջարկի էական աճին:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ «Բեստ ֆրութս ԱՄ», «Արտֆրուիտս», «Պրոմոութ» ընկերությունները դիտարկվող ժամանակաշրջանում համաձայնեցված կարգով բարձրացրել են նոր կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված առավել մեծ պահանջարկ ունեցող վերոնշյալ պտուղների իրացման գները, ինչը հատկապես առևտրային ցանցերում հանգեցրել է այդ ապրանքների իրացման գների էական բարձրացմանը:

Պատասխանատվության միջոցը

Վերոնշյալ գործողությունները Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 370-Ա որոշմամբ որակվել են հակամրցակցային համաձայնություն, ինչի կապակցությամբ նշված ընկերությունների նկատմամբ կիրառվել է 39 631 703 ՀՀ դրամ տուգանք:

Գերիշխող դիրքի չարաշահում

Տնտեսավարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

1. տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռք բերող չի հանդիպում էական մրցակցության և (կամ) իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ
2. ապրանքային շուկայում որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն 1/3-ը, կամ
3. ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող 2 տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք՝ որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն 1/2-ը, կամ
4. ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող 3 տնտեսավարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք՝ որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն 2/3-ը:

Արգելվում է տնտեսավարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը:

	2017	2018	2019	2020
Վարույթներ	5	3	20	13
Պատասխանատվության միջոցներ	3	2	1	7

1. Հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման ծառայությունների ոլորտում հարուցված վարչական վարույթներ

1.1 «Հիբրիդ Սոլյուշնս» ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

«Էֆ Նեթ» ընկերության դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Շանթ» հեռուստաալիքի վերահեռարձակման իրավունքի տրամադրման գործընթացներում «Հիբրիդ Սոլյուշնս» ընկերության հնարավոր հակամրցակցային գործողությունները պարզելու նպատակով:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ «Հիբրիդ Սոլյուշնս» ընկերությունը, ««Շանթ» հեռուստաալիքի տարածման իրավունքի տրամադրում (դիստրիբուցիա)» ապրանքային շուկայում ունենալով մենաշնորհ դիրք, չարաշահել է այն՝ այլ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ սահմանել կամ կիրառել է իրացման խտրական պայմաններ և գներ:

Պատասխանատվության միջոցը

Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովը 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 337-Ա որոշմամբ «Հիբրիդ Սոլյուշնս» ընկերության նկատմամբ նշանակել է 3 254 606 ՀՀ դրամ տուգանք:

1.2 «Վի Էմ Տելեպրոջեքթ» ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

«Հիբրիդ Սոլյուշնս» ընկերության դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Discovery» ընտանիքի մի շարք հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման գործընթացներում «Վի Էմ Տելեպրոջեքթ» ընկերության հնարավոր հակամրցակցային գործողությունները պարզելու նպատակով:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ընկերությունը, «Discovery Science», «Animal Planet», «Discovery Channel» «Eurosport 1» և «Eurosport 2» հեռուստաալիքների տարածման իրավունքի տրամադրում (դիստրիբուցիա) ապրանքային շուկաներում ունենալով մենաշնորհ դիրք, չարաշահել է այն: Մասնավորապես, «Հիբրիդ Սոլյուշնս» ընկերության հետ կնքվելիք պայմանագրի նախագծով

վերջինիս պարտադրել է այնպիսի պայմաններ, որոնք իրենց բնույթով չեն առնչվում պայմանագրի բուն առարկային կամ ուղղված են «Հիբրիդ Սոլյուշնս» ընկերության կողմից ապրանքի իրացման սահմանափակումներին: Վերոնշյալ հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման գործընթացում «Վի Էմ Տելեպրոջեքթ» ընկերությունն այլ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ սահմանել կամ կիրառել է խտրական պայմաններ և գներ:

Պատասխանատվության միջոցը

«Վի էմ Տելեպրոջեքթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 366-Ա որոշմամբ նշանակվել է 861 518 ՀՀ դրամ տուգանք:

1.3 Հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրմամբ զբաղվող մի շարք ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

«Էֆ Նեթ» ընկերության դիմումի հիման վրա Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ ՀՀ տարածում հեռուստաալիքների վերահեռարձակմամբ և հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրմամբ զբաղվող մի շարք ընկերությունների գործողություններում հնարավոր հակամրցակցային գործողությունների առկայությունը պարզելու նպատակով:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ «Հիբրիդ Սոլյուշնս», «Գլոբալ Քոնթենթ Սերվիս», «Ամեդիա», «Թի վի կոնտենտ սերվիս» և «Յուքոմ» ընկերությունները, մի շարք հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման ապրանքային շուկաներում ունենալով մենաշնորհ դիրք, չարաշահել են այն: Մասնավորապես, նշված ընկերությունների կողմից մի շարք հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման գործընթացում այլ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ սահմանվել կամ կիրառվել են խտրական պայմաններ և գներ:

Պատասխանատվության միջոցը

Հանձնաժողովը 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 367-Ա որոշմամբ վերոնշյալ ընկերությունների նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

Վարչական վարույթների առանձնահատկությունները

Վերոնշյալ 3 վարչական վարույթների շրջանակներում հատկորոշվել են ապրանքային շուկաներ, որոնց մեթոդական մոտեցումները նախադեպային են:

Մասնավորապես, Հանձնաժողովը եզրահանգել է, որ առանձին հեռուստաալիքը

կարող է հանդիսանալ առանձին ապրանք, հետևաբար վերջինիս վերահեռարձակման իրավունքի տրամադրումը կարող է դիտարկվել որպես առանձին ապրանքային շուկա: Հանձնաժողովը դիտարկել է հեռուստաալիքների բովանդակությունը (ուղղվածությունը), հեռուստաալիքների վարկանիշը, դրանում ներառված առանձին հեռուստահաղորդաշարերի վարկանիշը, հեռուստաալիքի սփռման տարածքը, սպառողների կողմից դրա փոխարինման հնարավորությունը, ինչպես նաև այլ առանձնահատկություններ: Վարչական վարույթների շրջանակներում դիտարկված հեռուստաալիքները Հանձնաժողովն իրենց մի շարք բնութագրերի համընդհանուր դիտարկման պարագայում փոխարինելի չի համարել այլ հեռուստաալիքներով:

Հանձնաժողովը կիրառված փորձը քննարկել է նաև ԵԱՏՄ անդամ երկրների մրցակցային մարմինների հետ, ինչն արժանացել է վերջիններիս հավանությանը:

ԵԱՏՄ գործընկերների հետ նաև քննարկման առարկա է դարձել մեկ այլ կարևոր հանգամանք: Մասնավորապես, հեռուստաալիքների վերահեռարձակման ոլորտում իրականացված վարչական վարույթների արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից իրավախախտումներն իրականացվում են վերջիններիս հետ պայմանագրային հարաբերություններ ունեցող միջազգային խոշոր հեռուստաալիքների իրավատեր ընկերությունների գործողությունների արդյունքում: Այսինքն՝ այդպիսի միջազգային խոշոր ընկերությունները երբեմն իրենց ներկայացուցիչների հետ փոխհարաբերություններում առաջ են քաշում այնպիսի պայմաններ, որոնք տվյալ տարածաշրջանի ներկայացուցչի մոտ հետագայում առաջացնում են և (կամ) կարող են առաջացնել օրենքի խախտման դեպքեր:

Վերոգրյալ երևույթի դրսևորումներն առավել դժվար է կառավարել փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների պարագայում, երբ հաճախ միջազգային խոշոր ընկերությունները չեն ունենում համապատասխան տնտեսական շահագրգռվածություն՝ իրենց կողմից իրականացվող քաղաքականությունը վերանայելու և մրցակցության պաշտպանության օրենսդրությանը համապատասխանեցնելու համար:

Հենց այս համատեքստում կարևորվել է մրցակցության ասպարեզում ԵԱՏՄ համագործակցությունն առավել խորացնելու գաղափարը, ինչը թույլ կտա ԵԱՏՄ անդամ ցանկացած երկրում նմանատիպ խնդրի ի հայտ գալու պարագայում միասնական քայլերի միջոցով կարգավորել այն:

Վարչական վարույթների արդյունքում ներկայացված առաջարկները

Հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման ոլորտում իրականացված 3 վարչական վարույթների արդյունքում արձանագրվել է, որ առկա են որոշ խնդիրներ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ մրցակցության վրա: Բացահայտված խնդիրների լուծման կապակցությամբ Հանձնաժողովը Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ներկայացրել է համապատասխան առաջարկություններ (**տես էջ 82**):

2. Շաքարավազի իրացմամբ զբաղվող ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

«Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ շաքարավազ իրացնող մի շարք ընկերությունների գործողութ-

յուններում առկա են հնարավոր հակամրցակցային գործողությունների առերևույթ հատկանիշներ: Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի արդյունքները

Վարույթի արդյունքում պարզվել է, որ Հանձնաժողովի կողմից դիտարկված ողջ ժամանակահատվածում՝ 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտ, «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը «Շաքարավազ» ապրանքային շուկայում չարաշահել է իր ունեցած գերիշխող դիրքը 3 դրսևորմամբ՝ գների չհիմնավորված իջեցում, խտրական պայմանների և գների կիրառում, ինչպես նաև այնպիսի այլ վարքագծի կիրառում, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Պատասխանատվության միջոցը

Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 31-ի թիվ 306-Ա որոշմամբ «Ալեքս Հոլդինգ» ընկերության նկատմամբ նշանակել է 24 780 000 ՀՀ դրամ տուգանք:

3. Կարագի իրացմամբ զբաղվող ընկերությունների նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

«Կարագ» ապրանքային շուկայում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ կարագ իրացնող մի շարք ընկերությունների գործողություններում առկա են հնարավոր հակամրցակցային գործողությունների առերևույթ հատկանիշներ, ինչի կապակցությամբ Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի արդյունքները

Վարույթի արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հուլիսից մինչև 2020 թվականի ապրիլը ներառյալ կարագի շրջանառության ոլորտում «Սիթի» ընկերության դրսևորած վարքագիծը խտրական պայմաններ է սահմանել և մուտքի խոչընդոտներ է ստեղծել այլ տնտեսավարող սուբյեկտների համար: Մասնավորապես, «Սիթի» ընկերությունը երկու ընկերություններից ձեռք բերված կարագի համեմատ այլ ներմուծող և (կամ) արտադրող տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերված կարագն իրացրել է խտրական պայմաններով՝ ավելի բարձր շահութաբերությամբ, առևտրային կետերի դարակաշարերում դրանք ներկայացրել է առավել փոքր քանակություններով, ինչն էլ հանգեցրել է այդ ապրանքների զգալի փոքր ծավալներով իրացմանը:

Միաժամանակ արձանագրվել է, որ «Ալեքս էնդ հոլդինգ» ընկերության կողմից 2018 թվականի օգոստոսից մինչև 2020 թվականի ապրիլը ներառյալ կարագի մեծածախ շրջանառության ոլորտում դրսևորված վարքագիծը խտրական մոտեցումներ է պարունակում մանրածախ շրջանառության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, ինչն ընկերության կողմից ապրանքատեսակների իրացման գների սահմանման հստակ չափանիշների բացակայության արդյունք է:

Պատասխանատվության միջոցը

Գերիշխող դիրքի չարաշահման համար Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 24-ի թիվ 295-Ա որոշմամբ «Սիթի» ընկերության նկատմամբ նշանակել է 17 600 597 ՀՀ դրամ տուգանք, իսկ «Ալեքս էնդ հոլդինգ» ընկերությանը տրվել է նախազգուշացում:

4. «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

Օդանավակայանային ծառայությունների ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության որոշ գործողություններ առերևույթ պարունակում են հակամրցակցային գործողությունների հատկանիշներ: Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության կողմից 2020 թվականի հունվարի 15-ին «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում մեքենաների ավտոկայանատեղիի ծառայության մատուցման սակագնի բարձրացումը պայմանավորված չի եղել տնտեսական գործոնների ազդեցությամբ, այսինքն՝ ընկերությունը չարաշահել է իր մենաշնորհ դիրքը:

Պատասխանատվության միջոցը

Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 20-ի թիվ 288-Ա որոշմամբ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության նկատմամբ նշանակել է 5 000 000 ՀՀ դրամ տուգանք:

Վարչական վարույթի առանձնահատկությունը

Վարչական վարույթի շրջանակներում, նախքան ընկերության գործողություններում Օրենքի խախտման հատկանիշների առկայության գնահատումը, հարկավոր է սահմանել համապատասխան ապրանքային շուկան(երը), որտեղ տեղի է ունեցել իրավախախտումը(ները): Հանձնաժողովը հատկորոշել է 5 ապրանքային շուկա, սակայն առանձնակի ուշադրության է արժանի ապրանքային շուկաների բնութագրիչների, մասնավորապես՝ աշխարհագրական սահմանի որոշման գործընթացը:

Օդանավակայանի հիմնական նշանակության, դրանում մատուցվող ծառայությունները (իրացվող ապրանքները) ձեռք բերող սուբյեկտների կազմի, օդանավակայանի ենթակառուցվածքի ամբողջության, ինչպես նաև մի շարք այլ հատկանիշների հիման վրա Հանձնաժողովը եզրահանգել է, որ օդանավակայանում իրականացվող գործա-

ռույթները (մատուցվող ծառայությունները), այդ թվում՝ ավիացիոն և ոչ ավիացիոն, դիտարկվում են որպես լոկալ (տեղային) մատուցվող ծառայություններ, ուստի համապատասխան ապրանքային շուկաների աշխարհագրական սահմանը հանդիսանում է հենց օդանավակայանի տարածքի սահմանը:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հաշվի է առել նաև այն, որ օդանավակայանում իրականացվող որոշ ապրանքների (մատուցվող ծառայությունների) դեպքում օդանավակայանի տարածքի դիտարկումը որպես աշխարհագրական սահման կարող է միանշանակ չլինել, քանի որ որոշ ծառայություններ հնարավոր է մատուցել օդանավակայանի մոտակա, հարակից տարածքներից: Սակայն այս հանգամանքը կարող է վերաբերել սահմանափակ ապրանքների իրացմանը (ծառայությունների մատուցմանը), օրինակ՝ սննդի կետերին, իսկ մյուս բոլոր գործառույթների իրականացման պարագայում աշխարհագրական սահմանը օդանավակայանի տարածքն է:

Անդրադառնալով ապրանքային շուկայի հատկորոշման և դրա բնութագրիչների սահմանման, այդ թվում աշխարհագրական սահմանի որոշման հարցերին՝ կարևոր է նաև նշել, որ Հանձնաժողովը, հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները, ուսումնասիրել է օդանավակայանի գործունեության ոլորտում շուկայի հատկորոշմանն առնչվող հարցերի վերաբերյալ կիրառվող միջազգային առաջադեմ փորձը և մոտեցումները: Դիտարկվել են այնպիսի երկրների օրինակներ, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Մալազիան և այլն: Ընդ որում, ապրանքային շուկայի և դրա բնութագրիչների հատկորոշման և սահմանման մի շարք մոտեցումները համընկնում են Հանձնաժողովի կիրառած մոտեցումներին:

Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները

Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի գործողությունները կամ վարքագիծը կամ ակտերը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, ինչպես նաև կարող են վնասել սպառողների շահերը, արգելվում են:

	2017	2018	2019	2020
Վարույթներ	0	0	6	4
Պատասխանատվության միջոցներ	0	0	1	3

Արտակարգ իրավիճակների նախարարության և «Սօս սիսթեմս» ընկերության գործողությունների առնչությամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

Ուսումնասիրելով Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կողմից միասնական հսկողական համալիր համակարգի ձեռքբերման, շահագործման, ծառայությունների մատուցման, գնային քաղաքականության գործընթացները՝ Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ հարուցել է վարչական վարույթ՝ պարզելու այդ գործընթացների շրջանակներում ԱԻՆ-ի, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի և «Սօս Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործողությունների բնույթը:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ ԱԻՆ-ի կողմից միասնական հսկողական համալիր համակարգի ձեռքբերման, շահագործման, ծառայությունների մատուցման, մասնավորապես՝ պայմանագրի կնքման և դրա շրջանակում «Սօս Սիսթեմս» ընկերությանը բացառիկ իրավունք տալու, մատուցված ծառայություններից գումար ստանալու գործընթացները սահմանափակել, կանխել կամ արգելել են տնտեսական մրցակցությունը:

Միաժամանակ արձանագրվել է, որ «Սօս Սիսթեմս» ընկերությունը չարաշահել է իր մենաշնորհ դիրքը՝ խտրական գների և պայմանների սահմանման կամ կիրառման, ապրանքի գնի չհիմնավորված պահպանման, չհիմնավորված բարձր գնի սահմանման գործողություններ իրականացնելու միջոցով:

Պատասխանատվության միջոցը

Հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 10-ի թիվ 251-Ա որոշմամբ ԱԻՆ-ին տրվել է նախազգուշացում և համապատասխան հանձնարարական: «Սօս Սիսթեմս» ընկերության նկատմամբ նշանակվել է 20 887 068 ՀՀ դրամ տուգանք:

Վարչական վարույթի առանձնահատկությունը

Հաճախ տնտեսական մրցակցությունը սահմանափակվում է պետական մարմինների կողմից իրականացված հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի արդյունքում: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովի առջև դրված պարտականություններից նաև կարևոր է տարանջատել հենց պետական մարմինների գործողությունների արդյունքում մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման դեպքերի բացահայտումը: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ 2020 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից բացահայտվել, իսկ որոշ դեպքերում նաև կանխվել են տարբեր պետական մարմինների իրականացրած և (կամ) իրականացվելիք հակամրցակցային բազմաթիվ գործողություններ:

Ելնելով Հանձնաժողովի աշխատանքային փորձից՝ անհրաժեշտ է փաստել, որ պետական մարմինների կողմից մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման գործողություններն առավելապես դրսևորվում են տնտեսավարող սուբյեկտ(ներ)ի նկատմամբ խտրական պայմանների սահմանման և (կամ) կիրառման եղանակով: Պետական մարմնի կողմից իրականացված գործողությունները հան-

գեցրել են նոր ապրանքային շուկայի ստեղծմանը, այդ շուկայում տնտեսավարող սուբյեկտի՝ մենաշնորհ դիրք ունենալուն և դրա չարաշահմանը:

Մեկ վարույթի շրջանակներում դիտարկված գործընթացների փոխկապակցվածությունը, պատճառահետևանքային կապը, բացահայտված իրավախախտման տարատեսակների առկայությունն առանձնացնում է վերոնշյալ վարչական վարույթը պետական մարմինների գործողություններում հնարավոր խախտման հատկանիշների բացահայտման նպատակով իրականացված այլ վարչական վարույթներից:

Վարչական վարույթի արդյունքում տրված հանձնարարականը

Հանձնաժողովը ԱԻՆ-ին հանձնարարել է տնտեսավարող սուբյեկտների համար ապահովել միասնական հսկողական համալիր համակարգում ծառայություններ մատուցելու գործընթացին հասանելիությունը մրցակցային պայմաններով (**տես էջ 81**):

Պետական գնումներ

	2017	2018	2019	2020
Վարույթներ	0	0	0	3
Պատասխանատվության միջոցներ	0	0	0	1

Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությամբ Հանձնաժողովին վերապահված կարևոր գործառույթներից է պետական գնումների նկատմամբ վերահսկողության իրականացումը: Պետական գնումների շրջանակներում առանձնակի կարևորություն է ներկայացնում մրցակցության սահմանափակման դեպքերի վերհանումը և կանխարգելումը, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվում ինչպես պետական կարիքների համար ծախսվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման, այնպես էլ բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորման համար:

Պետական գնումների ոլորտում 2020 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել են 5 վարչական վարույթներ (2 վարույթները 31.12.2020 թվականի դրությամբ ընթացիկ են), որոնք ընդգրկել են Էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների, ավտոմեքենաների, ֆաքսիմիլային սարքերի և օդորակիչների վերանորոգման և պահպանման, ինչպես նաև պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգերը:

Պետական գնումների ոլորտում Հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լայն տարածում ունի պատվիրատուների կողմից գնման ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերում սահմանափակող չափորոշիչների ներառումը, որի հետևանքով մրցույթի հնարավոր մասնակիցների համար չեն ապահովվում մրցակցության հավասար պայմաններ: Մասնավորապես, պատվիրատուներն իրենց կարիքների համար անհրաժեշտ ապրանքները և (կամ)

ծառայությունները նկարագրելիս հաճախ սահմանում են այնպիսի պահանջներ, որոնք խոչընդոտում են տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը:

Պետական օժանդակություն

Պետական օժանդակություն է համարվում պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին կամ տնտեսավարող սուբյեկտների որոշակի խմբին կամ որոշակի ապրանքի համար կամ որոշակի ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվող ցանկացած օժանդակություն (ներառյալ՝ սուբսիդիա, դրամաշնորհ, օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ, այլ ֆինանսական միջոցներ կամ այլ պայմաններ), որի պայմաններում տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվում են այնպիսի առավելություններ, որոնք ազատ տնտեսական մրցակցության պայմաններում տրամադրվող օժանդակության բացակայության դեպքում տնտեսավարող սուբյեկտները չէին ունենա:

Պետական օժանդակությունն արգելվում է՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Արգելված պետական օժանդակություն ստացած տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է հետ վերադարձնել որպես պետական օժանդակություն ստացած անհատապես որոշվող գույքը Հանձնաժողովի որոշմամբ սահմանած կարգով և ժամկետում: Այլ եղանակով ստացված պետական օժանդակությունը ենթակա է դադարեցման Հանձնաժողովի որոշմամբ սահմանած կարգով և ժամկետում:

Հանձնաժողովը վարում է պետական օժանդակության միասնական գրանցամատյան, որի ձևը և վարման կարգը հաստատվել է Հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 2-ի թիվ 228-Լ որոշմամբ 🖶:

Հանձնաժողովի 2020 թվականի առաջնահերթություններում կարևոր նշանակություն է ունեցել պետական օժանդակությունների վերահսկողության շարունակական իրականացումը և պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության ինստիտուտի զարգացումը, որի կապակցությամբ շարունակվել է օրենսդրական կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացը: Կառավարության կողմից 2020 թվականի մայիսին սահմանվել են պետական մարմինների կողմից պետական օժանդակության վերաբերյալ Հանձնաժողով տեղեկատվություն ներկայացնելու կարգն ու ժամկետները:

Վերոնշյալ իրավակարգավորումների նախատեսումից հետո Հանձնաժողովը ձեռնամուխ է եղել պետական մարմինների կողմից տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման և վերլուծության աշխատանքների կատարմանը: Նշված աշխատանքները հատկապես կարևոր են պետական օժանդակություն տրամադրելու արդյունքում որևէ ապրանքային շուկայում տնտեսական մրցակցության հնարավոր սահմանափակման, կանխման կամ արգելման, ինչպես նաև սպառողների շահերի վնասման դեպքերի բացահայտման գործում:

Անբարեխիղճ մրցակցություն

Անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

	2017	2018	2019	2020
Վարույթներ	55	35	57	59
Պատասխանատվության միջոցներ	54	33	19	42

1. Կաթնամթերքի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրություն

Սպառողների ծախսերի կառուցվածքում կաթնամթերքի վրա կատարվող ծախսերի մասնաբաժինը համեմատաբար մեծ է, հետևաբար կաթնամթերքի շրջանառության ոլորտում մրցակցության զարգացումը և բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը կարևոր է սպառողների համար որակյալ և համեմատաբար ցածր գներով կաթնամթերք ձեռք բերելու տեսանկյունից:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին կաթնամթերքի շրջանառության ոլորտում արձանագրվել են անբարեխիղճ մրցակցության՝ հասարակության մոլորեցման բազմաթիվ դրսևորումներ, որոնց արդյունքում ոտնահարվել են նաև սպառողների շահերը:

Հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքները՝ Հանձնաժողովը 2020 թվականին կաթնամթերքի շրջանառության ոլորտում իրականացրել է լայնածավալ և համակողմանի ուսումնասիրություն, որի շրջանակներում.

- ուսումնասիրվել են կաթնամթերքի որոշ տեսակների մակնշման օրենսդրական պահանջները,
- վերլուծվել են բուսական յուղ ներմուծողների, ձեռք բերողների և կաթնամթերքի որոշ տեսակներ արտադրողների կողմից բուսական յուղի օգտագործման ուղղությունները,
- իրականացվել են լաբորատոր փորձաքննություններ,
- ուսումնասիրվել են կաթնամթերքի փաթեթվածքի մակնշումները:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրները կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններով.

- ապրանքները մակնշել են որպես կաթնային մթերքներ (օրինակ՝ թթվասեր), մինչ-

դեռ տվյալ ապրանքի բաղադրության մեջ լաբորատոր փորձաքննության արդյունքների համաձայն օգտագործվել է կաթնայուղի փոխարինիչ (բուսական յուղ),

- կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների փաթեթվածքի մակնշման խնդիրներ՝
  - կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքները մակնշվել են «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության թիվ ՄՄ ՏԿ 033/2013 տեխնիկական կանոնակարգի պահանջների խախտմամբ,
  - կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների փաթեթվածքի վրա տվյալ ապրանքների անվանման մեջ համապատասխան կաթնային մթերքի սահմանված հասկացությունը մակնշված է ավելի մեծ տառաչափով, քան մնացած բառերը,
  - կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների փաթեթվածքի վրա տվյալ ապրանքների անվանման մեջ համապատասխան կաթնային մթերքի սահմանված հասկացությունը մակնշված է մնացած բառերից տարբերվող գույնով,
  - կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի փաթեթվածքի վրա տվյալ ապրանքի անվանման մեջ համապատասխան կաթնային մթերքի սահմանված հասկացությունը մակնշված է փաթեթվածքի առանձին դաշտում,
  - կաթնամթերքի փաթեթվածքի վրա մակնշված են «էկոլոգիապես մաքուր մթերք» կամ «էկո» արտահայտությունները, մինչդեռ տվյալ կաթնամթերքն օրգանական գյուղատնտեսության արտադրանքի համապատասխանության համար հավաստագիր (սերտիֆիկատ) չունի:

Վերը նշված խնդիրները Հանձնաժողովի կողմից որակվել են որպես հասարակության մոլորեցման՝ անբարեխիղճ մրցակցության գործողություններ: Այսինքն՝ արտադրողները մակնշման միջոցով փորձել են սպառողների մոտ ստեղծել թյուր տպավորություն առ այն, որ վերջիններս կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների (օրինակ՝ կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերք պատրաստված թթվասերի տեխնոլոգիայով) փոխարեն ձեռք են բերում կաթնային մթերքներ (օրինակ՝ թթվասեր): Հարկ է նշել, որ բուսական յուղի օգտագործումն ապահովում է ինքնարժեքի ավելի ցածր մակարդակ, և կաթ պարունակող մթերքը կաթնային մթերքի անվան ներքո և գնով իրացնելու պարագայում տնտեսավարող սուբյեկտները ստանում են անհարկի մրցակցային առավելություններ:

2. «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ-ի նկատմամբ հարուցված վարչական վարույթ

Ալկոհոլային խմիչքների շրջանառության ոլորտում հնարավոր անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ բացահայտելու նպատակով իրականացվող ուսումնասիրության շրջանակներում պարզ է դարձել, որ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության պաշտոնական կայքում (aipa.am) առկա տեղեկատվության համաձայն՝ «FINSKY» բառային ապրանքային նշանը 2014 թվականի օգոստոսի 2-ին գրանցվել և ՀՀ-ում իրավական պահպանություն է ստացել 33-րդ դասի (ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի)) ապրանքների և ծառա-

յությունների համար: Նշված ապրանքային նշանի իրավատերն է հանդիսանում «Սաիմաա Բեվրիջիս ՕՅ ԷլԹիԴի» ընկերությունը:

Նույն ուսումնասիրության շրջանակներում պարզ է դարձել, որ 2014 թվականի օգոստոսի 18-ին միջազգային ընթացակարգով գրանցվել և ՀՀ-ում իրավական պահպանություն է ստացել «GREY GOOSE» պատկերային ապրանքային նշանը, որի իրավատերն է հանդիսանում «Bacardi & Company Limited» ընկերությունը:

Իրականացված հսկիչ գնումներով ձեռքբերված «FINSKY» և «GREY GOOSE» ապրանքային նշաններով օղիների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ դրանք արտադրվել են «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից:

Ընկերության կողմից օգտագործված և չգրանցված «FINSKY» և «GREY GOOSE» ապրանքային նշանները նույնական են գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա «FINSKY» և «GREY GOOSE» ապրանքային նշաններին:

Ընկերության կողմից օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ հարուցված վարչական վարույթի շրջանակներում պարզվել է, որ Ընկերությունը «FINSKY» և «GREY GOOSE» ապրանքային նշանների օգտագործման թույլտվություն չունի և դրանք օգտագործում է առանց իրավատերերի համաձայնության:

Այսպիսով, Հանձնաժողովը ՀՀ-ում իրավական պահպանություն ստացած «FINSKY» և «GREY GOOSE» ապրանքային նշանների առանց իրավատերերի համաձայնության Ընկերության կողմից օգտագործումը որակել է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Պատասխանատվության միջոցը

Այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ շփոթություն առաջացնելու գործողության համար Հանձնաժողովը նշանակել է 16 207 000 ՀՀ դրամ տուգանք:

Ընկերությանը հանձնարարվել է վերացնել Օրենքի խախտումը, այսինքն՝ դադարեցնել «FINSKY» և «GREY GOOSE» ապրանքային նշաններով օղիների արտադրությունն ու իրացումը, իսկ առևտրային շրջանառության մեջ առկա օղիները հետ կանչել բոլոր առևտրային օբյեկտներից:

3. «Լենովո (Բեյջին) Լիմիթեդ» ընկերության գործողություններ առնչությամբ հարուցված վարչական վարույթ

Վարչական վարույթի հարուցման նախադրյալները

«Օազիս Կոմպյուտեր» ընկերության դիմումի հիման վրա Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ ընկերության կողմից «Lenovo» ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծման կասեցման գործընթացի շրջանակներում հնարավոր հակամրցակցային գործողությունների առկայությունը պարզելու նպատակով:

Վարչական վարույթի արդյունքները

Վարչական վարույթի արդյունքում պարզվել է, որ «Լենովո (Բեյջին) Լիմիթեդ» ըն-

կերությունը, ՀՀ-ում հանդիսանալով «Lenovo» ապրանքային նշանի իրավատեր, իրականացրել է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Մասնավորապես՝ ՀՀ «Lenovo» ապրանքային նշանով մակնշված ապրանքներ ներմուծող տնտեսավարող սուբյեկտներին ներմուծման թույլտվություն տալու համար «Լենովո (Բեյջին) Լիմիթեդ» ընկերությունը չի ունեցել հստակ սահմանված պահանջվող փաստաթղթերի, տեղեկատվության տեսակների ցանկ, գնահատման չափորոշիչներ, ինչպես նաև վերոնշյալ հարցում դրսևորել է կամայականություններ:

Պատասխանատվության միջոցը

Հանձնաժողովը 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 369-Ա որոշմամբ «Լենովո (Բեյջին) Լիմիթեդ» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում:

Վարչական վարույթի առանձնահատկությունը

Միջազգային խոշոր ընկերությունները հաճախ տարբեր տարածաշրջաններում որդեգրում են որոշակի քաղաքականություններ իրենց կողմից արտադրվող ապրանքների շրջանառության համար: Երբեմն նմանօրինակ քաղաքականությունը հանգեցնում է մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման:

Այս պարագայում՝ «Լենովո (Բեյջին) Լիմիթեդ» ընկերությունը, ՀՀ-ում հանդիսանալով «Lenovo» ապրանքային նշանի իրավատեր և հնարավորություն ունենալով միակողմանիորեն ազդելու «Lenovo» ապրանքային նշանով մակնշված ապրանքները ոչ ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ ներկրելու ընդհանուր պայմանների վրա, իրականացրել է այնպիսի գործողություններ, որոնք նպատակ են ունեցել կրճատելու այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքներ ոչ ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ ներմուծող տնտեսավարող սուբյեկտների քանակը: Արդյունքում «Lenovo» ապրանքային նշանով մակնշված ապրանքները ներմուծող «Օազիս Կոմպյուտեր» ընկերությանը, որը որոշակի պարբերականությամբ իրականացրել է այդ ապրանքների ներմուծումը, արգելվել է տնօրինել, տիրապետել և օգտագործել հայտարարագրով ձևակերպված ապրանքները:

Նշված վարչական վարույթը հատկանշական է նաև այն առումով, որ «Լենովո (Բեյջին) Լիմիթեդ» ընկերության գործողությունները եղել են ոչ թե Օրենքով արգելված՝ անբարեխիղճ մրցակցության գործողության առանձին դրսևորում

(հասարակության մոլորեցում, շփոթություն, տնտեսավարող սուբյեկտի համբավի, վարկարժեքի վնասում և այլն), այլ ընկերության գործողություններն անբարեխիղճ մրցակցություն են որակվել, քանի որ վերջինս առերևույթ իրացրել է իր քաղաքացիական իրավունքը՝ նպատակ հետապնդելով սահմանափակել մրցակցությունը, այսինքն՝ կատարել է Քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասով արգելված արարք:

3. Համակենտրոնացում

	2017	2018	2019	2020
Վարույթներ	43	25	30	12
Թույլատրված համակենտրոնացումներ	42	23	27	9

Չհայտարարագրված համակենտրոնացումներ

	2017	2018	2019	2020
Վարույթներ	23	7	8	2
Պատասխանատվության միջոցներ	23	7	7	1

2020 թվականին ավարտված վարչական վարույթները՝ ըստ տեսակների

	2020
Հորիզոնական	
Ուղղահայաց	2
Խառը	7

2020 թվականին ավարտված վարչական վարույթները՝ ըստ ոլորտների

	Համակենտրոնացում	Չհայտարարագրված համակենտրոնացում	Կարճում
Կառուցապատում, շինարարություն	3	1	1
Հեռահաղորդակցություն	1		1
Կենցաղային տեխնիկայի, կահույքի իրացում	1		
Պահածոների մեծածախ իրացում	1		
Հանրային սննդի կազմակերպում	1		
Ներդրումային ծրագրերի նախագծում և իրագործում, իրավաբանական և խորհրդատվական ծառայություններ	1		
Ծրագրային ապահովում	1		
Մալուխների իրացում			1
Մանրածախ առևտուր			1

Հանձնաժողովը 2020 թվականի ընթացքում շարունակել է համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացումը:

Տնտեսավարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովի կողմից կայացվել է համակենտրոնացումների թույլտվության 9 որոշում, ընդ որում՝ համակենտրոնացման 1 գործարք թույլատրվել է պայմանով:

Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների շրջանակներում պատասխանատվության են ենթարկվել համակենտրոնացման մասնակից տնտեսավարող սուբյեկտները, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումը:

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ և «ԹԻՄ» ՍՊԸ համակենտրոնացման թույլտվության ստացման վարչական վարույթ

Համակենտրոնացման թույլտվություն ստանալու նպատակով 2020 թվականի հունիսի 8-ին Հանձնաժողով են դիմել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական և «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ հայտնելով, որ «ԹԻՄ» ընկերությունը նախատեսում է ձեռք բերել «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը:

Համակենտրոնացման մասնակիցները, գործունեության ոլորտները

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «ՎԵՈՆ Արմենիա» ընկերությունն իրականացնում է ամրակցված, շարժական հեռախոսակապի և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում, սարքավորումների վաճառք: «ԹԻՄ» ընկերությունը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների նորաստեղծ օպերատոր է, նախատեսում է իրականացնել ամրակցված, լայնաշերտ ինտերնետի, IP հեռուստատեսության ծառայությունների մատուցում, սարքավորումների վաճառք: «ԹԻՄ» ընկերության հիմնադիրներն են ֆիզիկական անձինք Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը՝ 50-ական տոկոս փայաբաժնով:

Համակենտրոնացման արդյունքում «ԹԻՄ» ընկերությունը նախատեսում է կատարել «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության ենթակառուցվածքի զարգացմանն ու ծառայությունների բարելավմանն ուղղված ներդրումներ, ինչը հնարավորություն կտա սպառողների համար բարելավել արդեն իսկ առկա ծառայությունների որակը և առաջարկել լրացուցիչ նոր ծառայություններ, զարգացնել տեխնոլոգիական նոր սերնդի 4G ցանցի ծածկույթը, մինչև վերջնական սպառող (բազմաբնակարան շենքեր և առանձնատներ) կառուցել նոր օպտիկամանրաթելային ցանց, վերազինել «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության ենթակառուցվածքները:

Հեռահաղորդակցության ոլորտի ուսումնասիրության արդյունքները

Համակենտրոնացման գործարքի գնահատման նպատակով Հանձնաժողովն իրականացրել է հեռահաղորդակցության ոլորտի լայնածավալ ուսումնասիրություն, ուսումնասիրվել են տարիների ընթացքում ոլորտի զարգացումները, վերջին հինգ տարիների միջազգային փորձը, Հանձնաժողովի կողմից առանձնացվել են հեռահաղորդակցության ոլորտի վեց ապրանքային շուկաներ, հատկորոշվել են այդ ապրանքային շուկաների ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, գնահատվել է նշված ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը: Հեռահաղորդակցության ոլորտի ուսումնասիրությունն իրականացվել է 2017-2019 թվականների տվյալների հիման վրա: «ԹԻՄ» ընկերության կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության 100 տոկոս փայաբաժնի ձեռքբերումը, ըստ էության, հանդիսացել է սեփականատերերի փոփոխության գործարք, որը շուկայի կառուցվածքի փոփոխության չի հանգեցրել:

Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակներում իրականացրած ուսումնասիրության արդյունքում ամրագրել է, որ «ԹԻՄ» և «ՎԵՈՆ Արմենիա» ընկերությունների համակենտրոնացումը մրցակցությանը չի խոչընդոտում: Միաժամանակ, հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտի բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունը, ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակի պահպանման և բարելավման նպատակով Հանձնաժողովը նշված համակենտրոնացումը թույլատրել է պայմանով, որ Հայկ Հովիկի Եսայանը և Ալեքսանդր Հովիկի Եսայանը պարտավոր են համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո ձեռնպահ մնալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «զ», «է», «ը» կետերով և «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 15.6-րդ կետով նախատեսված իրավունքների իրականացումից, ինչպես նաև համակենտրոնացումը գործողության մեջ դնելուց հետո պարտավոր են ձեռնպահ մնալ «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության վերաբերյալ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկությունները պահանջելուց և ստանալուց:

4. Ոլորտային ուսումնասիրություններ

Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակներում իրականացնում է ուսումնասիրություններ որևէ ոլորտում կամ ապրանքային շուկայում, որի նպատակն է բացահայտել տվյալ ոլորտում կամ ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման կամ արգելման կամ սպառողների շահերի հնարավոր խախտման դեպքերը, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները:

Հանձնաժողովն իրականացրել է տարվա առաջնահերթություն սահմանված 5 ոլորտների ուսումնասիրություններ, ինչպես նաև Պետական գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման գործընթացների ուսումնասիրություն:

1. Ձվի շրջանառության ոլորտի ուսումնասիրություն

Նպատակը

Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն «Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայում, քանի որ հավի ձուն հանդիսանում է շուկայում լայն սպառման ապրանք, մտնում է նվազագույն սպառողական զամբյուղի պարենամթերքի կազմի մեջ, ունի կենսական կարևոր նշանակություն, ինչպես նաև հասարակության կողմից պարբերաբար մտահոգություններ են բարձրացվում այդ ոլորտում առկա մրցակցային հնարավոր խնդիրների մասին:

Ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները

Հանձնաժողովը «Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը համարել է արտադրական եղանակով ստացված կճեպով հավի ձվի ողջ տեսականին՝ անկախ ձվի ստացման, օգտագործման եղանակից և քաշից՝ բացառությամբ ինկուբացիոն ձվերի: Արտադրական նպատակով իրացվող ձվի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն արտադրվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով և իրացվում է շուկայում: Մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտների կողմից ձվի իրացումը տեղի է ունենում առևտրային ցանցերի և փոքր ու միջին խանութների միջոցով, իսկ գյուղացիական տնտեսությունները ձուն արտադրում են ոչ արտադրական նպատակով, բավարարում են սեփական պահանջարկը և ավելացված մասն իրացնում ոչ շուկայական մեխանիզմներով:

Հանձնաժողովը «Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայի աշխարհագրական սահման է համարել ՀՀ ողջ տարածքը, քանի որ ՀՀ-ում արտադրվող կճեպով հավի ձուն հավասարապես մատչելի է երկրի ողջ տարածքում, և ՀՀ մարզեր տեղափոխելու խոչընդոտներ գոյություն չունեն:

Իրավական դաշտը

Իրավական դաշտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ձվի շուկայի մուտքի խոչընդոտներ օրենսդրական դաշտի տեսանկյունից առկա չեն:

CR3



HHI

«Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայում 2019 թվականի տվյալներով գործունեություն է իրականացնում շուրջ 28 տնտեսավարող սուբյեկտ: 3 խոշոր ընկերությունները միասին զբաղեցնում են շուկայի 2/3-ը, այսինքն՝ շուկայում հանդիսանում են գերիշխող դիրք ունեցող, սակայն, հաշվի առնելով 3-րդ և 4-րդ ընկերությունների մասնաբաժինների ոչ էական տարբերությունը, Հանձնաժողովը որոշել է ուսումնասիրել շուկայում գործող առավել խոշոր հետևյալ 4 տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը՝ «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ, «Աշտարակ ձու» ՍՊԸ, «Արզնու տոհմային ԹՏՀ» ԲԲԸ և «Լուսակերտ» ՍՊԸ:



28 տնտեսավարող սուբյեկտներից 3-ը միասին զբաղեցնում են շուկայի 2/3-ը:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ «Հավի ձու կճեպով» ապրանքային շուկան բարձր կենտրոնացված է:

Ինքնարժեքը ձևավորող բաղադրիչների ուսումնասիրություն

«Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայում ձվի իրացման գների տատանումներ հաճախ են արձանագրվում, որի պատճառները բացահայտելու նպատակով Հանձնաժողովն ուսումնասիրել է ինքնարժեքը ձևավորող բաղադրիչները: Վերլուծությունը ցույց է տվել, որ բոլոր 4 խոշոր իրացում ապահովող ընկերությունների մոտ ինքնարժեքները միմյանցից էականորեն տարբերվում են, սակայն հատկանշական է այն հանգամանքը, որ բոլոր ընկերությունների մոտ ինքնարժեքի էական մասը կազմում են ուղղակի ծախսերը՝ շուրջ 79-87 տոկոս:

Հանձնաժողովի կողմից 2018 թվականի 1-ին կիսամյակի տվյալների հիման վրա իրականացված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ձվի ինքնարժեքի գրեթե 50 տոկոսը կազմում է հավի կերի ծախսը, այսինքն կերային բաղադրիչների գնային տատանումներն էական ազդեցություն կարող են ունենալ ձվի ինքնարժեքի, հետևաբար նաև իրացման գնի փոփոխության վրա: Հավի կերի հիմնական բաղադրիչներն են՝ ցորենը, եգիպտացորենը, արևածաղկի և եգիպտացորենի քուսպերը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարբեր ընկերությունների մոտ այս 4 բաղադրիչների համակցությունը տարբեր է, հետևաբար դա ևս կարող է ազդել ինքնարժեքի տարբեր լինելու վրա:

Եզրակացություն

- Խոշոր ընկերությունների կողմից գների չհիմնավորված իջեցումները կարող են մուտքի խոչընդոտ լինել շուկա նոր մուտք գործել ցանկացող ընկերությունների համար: Մասնավորապես, վերջիններս ինքնարժեքով կամ դրանից ցածր գնով վաճառք իրականացնելու փորձի դեպքում չեն կարողանա ծածկել բոլոր ծախսերը և դուրս կմղվեն շուկայից:

- «Հավի ձու կճեպով» ապրանքային շուկայում արտադրության ծավալների հետ կապված երբեմն կարող է լինել դեֆիցիտ և պրոֆիցիտ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շատ երկրներում ձվի դեֆիցիտը և պրոֆիցիտը կառավարելու և առողջ մրցակցային միջավայր ձևավորելու համար գերարտադրության դեպքերում իրականացվում է ձվի փոշու արտադրություն, որի արդյունքում շուկայում էական գնային տատանումներ տեղի չեն ունենում:

2. Ցորենի և ալյուրի շրջանառության ոլորտների ուսումնասիրություն

Նպատակը

Ցորենը և ալյուրը հանդիսանում են ռազմավարական նշանակության պարենային ապրանքներ և ներառված են սպառողական զամբյուղում («Ցորենի հացը» հանրապետության սպառողական զամբյուղում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքային խմբերից է՝ 4.7 տոկոս, «ցորենի ալյուր» և «լավաշ» ապրանքային խմբերի տեսակարար կշիռներն ավելացնելու դեպքում այն կկազմի զամբյուղի 6.4 տոկոս): Ցորենն ու ալյուրը «գին գոյացնող» ապրանքներ են, և դրանց գների փոփոխություններն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են ունենում այլ ապրանքների գների վրա: Այս ապրանքները հատկապես կարևոր նշանակություն ունեն սոցիալապես խոցելի խավի համար, ուստի ցորենի և ալյուրի շրջանառության ոլորտում մրցակցային հնարավոր խախտումների բացահայտումը կարող է պահանջել Հանձնաժողովի կողմից անմիջական և ուղղակի միջամտություն տվյալ շուկայում ազատ տնտեսական մրցակցության վերականգնման համար:

ՀՀ բնակչության կողմից սպառվող ալյուրի գերակշիռ մասն ապահովվում է տեղական արտադրության հաշվին, մինչդեռ վերջինիս հումք հանդիսացող ցորենի (պարենային ցորեն) նկատմամբ պահանջարկը հիմնականում բավարարվում է ներմուծման հաշվին: 2019 թվականին ՀՀ-ում ալյուրի ընդամենը 10 տոկոսն է ապահովվում ի հաշիվ տեղական արտադրության ցորենի, հետևաբար ներմուծված պարենային ցորենի ձեռքբերման գներն էական ազդեցություն կարող են ունենալ ալյուրի, ինչպես նաև հացի ու հացամթերքի գների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը «Պարենային ցորեն» և «Ցորենի ալյուր» ապրանքային շուկաներն ուսումնասիրել է որպես երկու փոխկապակցված և միմյանց վրա էական ազդեցություն ունեցող շուկաներ՝ կարևորելով դրանցում գործունեություն իրականացնող միևնույն տնտեսավարող սուբյեկտների դերը երկու ապրանքային շուկաներում:

«Պարենային ցորեն» ապրանքային շուկայի ուսումնասիրություն

Ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները

«Պարենային ցորեն» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է պարենային ցորենի ողջ տեսականին, քանի որ պարենային ցորենը չի համարվում վերջնական սպառման ապրանք, այլ հիմնականում օգտագործվում է որպես որոշ արտադրությունների համար հումք:

Ուսումնասիրության ընթացքում աշխարհագրական սահմանը համարվել է ՀՀ ողջ տարածքը, քանի որ տնտեսապես հնարավոր ու նպատակահարմար է այն ձեռք բերել ՀՀ ողջ տարածքում:

Աշխարհում յուրաքանչյուր տարի արտադրվում է մոտ 772 մլն տոննա ցորեն (մոտ 230 մլն հա տարածքից): Ցորենի համաշխարհային շուկայում խոշոր արտադրող



երկրներն են Չինաստանը (17.4%), Հնդկաստանը (12.8%), Ռուսաստանի Դաշնությունը (11.1%) և ԱՄՆ-ը (6.1%): Նշված երկրների կողմից ապահովվում է ցորենի համաշխարհային առաջարկի 47.4 տոկոսը:

ՀՀ-ում «Պարենային ցորեն» ապրանքային շուկան էապես կախված է Ռուսաստանի Դաշնությունից ներկրված ցորենից, քանի որ 2019 թվականի ընթացքում տնտեսավարող սուբյեկտները ցորենի ներմուծման 91 տոկոսն իրականացրել են Ռուսաստանի Դաշնությունից:

2019 թվականին ՀՀ ցորենի ներմուծումն ըստ երկրների[1]

Արտահանման երկիր	Ներմուծման քանակ (կգ)	Տեսակարար կշիռ (%)
ՌԴ	331 126 536	**91**
Ուկրաինա	17 398 440	**5**
Վրաստան	13 514 464	**4**
Բելառուս	24 500	**0.01**
Ընդամենը	362 063 940	**100**

Ցորենի ներմուծման առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող տնտեսավարող սուբյեկտներն են «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ-ն և «Մոդուս Գրանում» ՍՊԸ-ն: Երրորդ տնտեսավարող սուբյեկտի ներմուծման ծավալը կազմել է ընդհանուր ներմուծման ծավալի 3-4 տոկոսը: Հարկ է նշել, որ առաջատար երկու տնտեսավարող սուբյեկտները լուրջ մրցակիցներ են «Ցորենի ալյուր» ապրանքային շուկայում՝ որպես խոշոր արտադրողներ:

Վիճակագրական կոմիտեի և Էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների հիման վրա ուսումնասիրվել են ՀՀ-ում ցորենի արտադրության ծավալները և բերքատվության ցուցանիշները, ինչպես նաև ինքնարժեքի ձևավորման բաղադրիչները:

«Պարենային ցորեն» ապրանքային շուկայի ծավալը 2019 թվականին կազմել է 474 644 տոննա, որի 76 տոկոսը ներմուծվել է:

2019 թվականին ցորենի արտադրության ցուցանիշները ՀՀ-ում

	2019
Ցանքատարածություն (հազ. հա)	59.9
Բերքատվություն (գ/հա)	19.6
Համախառն բերք (հազ. տոննա)	112.6



1 ըստ ՊԵԿ-ի և տնտեսավարող սուբյեկտների ներկայացրած տեղեկատվության

Շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներն են «Բաղրամյան» ՍՊԸ-ն և «Մոդուս Գրանում» ՍՊԸ-ն, որոնց համատեղ մասնաբաժինը կազմել է 58 տոկոս: «Պարենային ցորեն» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան: Սակայն շուկայի բարձր կենտրոնացվածությունն ունի օբյեկտիվ պատճառներ. տարիների ընթացքում ալյուրի և դրա արտադրության համար անհրաժեշտ ցորենի պահանջարկը կայուն է, ինչը պայմանավորված է հայաստանյան շուկայի փոքր և սահմանափակ լինելով: Ընդ որում, երկու ընկերություններն էլ ցորենի հիմնական պաշարը որպես հումք օգտագործում են ալյուրի սեփական արտադրությունում:

CR3



HHI

2019
2468

Ինքնարժեքը ձևավորող բաղադրիչների ուսումնասիրություն

Ինքնարժեքի բաղադրիչների ուսումնասիրությունն իրականացվել է ըստ տնտեսավարող սուբյեկտների ներկայացրած տեղեկատվության: Պարզվել է, որ ներկրված ցորենի ինքնարժեքի 77-80 տոկոսը կազմում է ցորենի ձեռքբերման գինը, մնացածը՝ տեղափոխման և պահեստավորման ծախսերը:

«Ցորենի ալյուր» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն

Նվազագույն սպառողական զամբյուղում, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի, հացամթերքի օրական սպառման նորման 1 շնչի հաշվով կազմում է 0.355 կգ, որից 0.25 կգ-ը բաժին է ընկնում հենց հացին, սակայն հացամթերքի օրական փաստացի սպառումը 1 շնչի հաշվով ավելի մեծ է՝ 0.461 կգ[2]:

Մի շարք երկրներում մեկ անձի կողմից հացի տարեկան սպառման ծավալները (կգ)[3]



2 https://www.armstat.am/am/?nid=81&id=2236

3 https://www.statista.com

Մեկ անձի կողմից հացի տարեկան սպառման ծավալով Հայաստանը նշված երկրների ցանկում զբաղեցնում է երրորդ հորիզոնականը. ՀՀ-ում հացի տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով 91.3 կգ է (փաստացի սպառումը ավելի բարձր է):

Ալյուրը հացազգի, լոբազգի և այլ կուլտուրաների հատիկներն ու սերմերն աղալուց ստացվող մթերք է: Հացաբույսերի ալյուրն օգտագործվում է հաց, մակարոնեղեն և հրուշակեղեն պատրաստելու, իսկ հատիկակերային ալյուրը՝ համակցված կեր ստանալու համար: Ալյուրը լինում է ցորենի, աշորայի (տարեկան), եգիպտացորենի, գարու, վարսակի, հնդկացորենի, սոյայի:

Ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները

Ցորենի ալյուրը կիրառվում է և՛ տնային տնտեսությունների, և՛ հիմնականում տարբեր արտադրամասերի կողմից, սակայն ամենամեծ սպառումն ապահովում են հացի արտադրամասերը: Հացի արտադրամասերում օգտագործվում են ալյուրի բոլոր տեսակները (բարձր, 1-ին տեսակի, 2-րդ տեսակի և այլ), սակայն հացի տեսակից կախված՝ կիրառվում է մեկ կամ մի քանի տեսակի ալյուրի միախառնված զանգված: Ալյուրի տարբեր համակցություններից են ստացվում նաև մակարոնեղենի և հացաբուլկեղենի տարբեր տեսակները: Ցորենի բոլոր տեսակի ալյուրները փոխադարձ փոխարինելի են, ուստի ուսումնասիրության շրջանակում «Ցորենի ալյուր» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է ցորենի ալյուրի ամբողջ տեսականին (բարձր, առաջին, երկրորդ, այլ):

«Ցորենի ալյուր» ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը համարվել է ՀՀ ողջ տարածքը:

Ներմուծում և արտադրություն

Ցորենի ալյուրը, ինչպես ցորենը, հիմնականում ներմուծվում է ՌԴ-ից (98-99 տոկոս):

Ներմուծման երկիր	Ներմուծման քանակ (կգ)
ՌԴ	99%
Այլ (Ղազախստան, Իտալիա, Լեհաստան, Ֆրանսիա)	1%

2012-2015 թվականներն ընկած ժամանակահատվածում ցորենի ալյուր ներկրող տնտեսավարող սուբյեկտների թիվը փոքր է (23-30 տնտեսավարող սուբյեկտ), 2015 թվականից սկսած այն աստիճանաբար աճել է՝ 2019 թվականին հասնելով 169-ի:

2012-2019 թվականներն ընկած ժամանակահատվածում աճել են ցորենի ալյուրի ներմուծման ընդհանուր ծավալները՝ 1 286 տոննայից հասնելով 22 230 տոննայի: Սակայն ներմուծված ցորենի ալյուրի մասնաբաժինը ողջ ապրանքային շուկայում էական մաս չի կազմել. 2019 թվականին ներմուծված ցորենի ալյուրը կազմել է ողջ ապրանքային շուկայի ծավալի 11 տոկոսը: Ալյուրի ներմուծման ծավալների աճը, ներմուծող տնտեսավարող սուբյեկտների թվաքանակի աճը, դրան զուգահեռ առաջատար տնտեսավարող սուբյեկտի փոքր մասնաբաժինը վկայում են, որ ալյուր հիմնականում ներմուծվում է փոքր տնտեսավարող սուբյեկտների կողմից փոքր ծավալներով:

Ցորենի ալյուր արտադրող տնտեսավարող սուբյեկտների թվաքանակը 2015-2019 թվականների ընթացքում 26-ից դարձել է 28: Ի տարբերություն ցորենի ալյուր ներմուծող տնտեսավարող սուբյեկտների՝ ցորենի ալյուր արտադրող տնտեսավարող սուբյեկտների կազմն ավելի կայուն է, և «Ցորենի ալյուր» ապրանքային շուկայում «Բաղրամյան» ՍՊԸ-ն և «Մոդուս Գրանում» ՍՊԸ-ն ունեն էական դերակատարում:

2012-2019 թվականների ընթացքում ցորենի ալյուրի արտադրության ծավալները 235 000 տոննայից նվազել են 25 տոկոսով՝ հասնելով 177 235 տոննայի:

«Ցորենի ալյուր» ապրանքային շուկայի ծավալը 2019 թվականին կազմել է 199 465 տոննա, որի 89 տոկոսը տեղական արտադրության է:

«Ցորենի ալյուր» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներն են «Բաղրամյան» ՍՊԸ-ն և «Մոդուս Գրանում» ՍՊԸ-ն, քանի որ որպես իրացնող՝ իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի 80 տոկոսը: «Ցորենի ալյուր» ապրանքային շուկան 2019 թվականին ուներ կենտրոնացվածության բարձր աստիճան:





Եզրակացություն

«Պարենային ցորեն» և «Ցորենի ալյուր» ապրանքային շուկաներն ունեն որոշակի կայուն պահանջարկ, հետևաբար աճի սահմանափակ հնարավորություն: Շուկաները «հագեցած» են, և նոր տնտեսավարող սուբյեկտների մուտքի, գործունեության ընդլայնման և շուկայում հաստատման բացակայությունն ունի օբյեկտիվ պատճառներ:

3. Դեղերի շրջանառության ոլորտի ուսումնասիրություն

Նպատակը

Դեղերի շրջանառության ոլորտն ունի սոցիալական կարևոր նշանակություն, քանի որ այն անմիջականորեն կապված է մարդկային կյանքի և առողջության հետ: Ուսումնասիրության հիմնական նպատակն է ստանալ ոլորտի ապրանքային շուկաների արդի վիճակի ամբողջական պատկերը, գնահատել մրցակցային միջավայրը հաշվետու ժամանակահատվածի համար, ի հայտ բերել մրցակցությունը սահմանափակող հնարավոր խոչնդոտները և ներկայացնել մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված կարգավորման ուղիներ:

Ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները

Դեղերի շրջանառության ոլորտում ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանները հատկորոշելիս հաշվի են առնվել դեղերի ֆունկցիոնալ հատկանիշները, մասնավորապես՝ օգտագործման նպատակը, ազդեցությունը, սպառողական հատկանիշները, դեղերի փոխադարձ փոխարինելիությունը, համադրելիությունը և այլ հատկանիշներ: Տնտեսական մրցակցության տեսանկյունից շուկան հատկորոշելու համար դեղերի մի շարք դասակարգումներից Հանձնաժողովը նպատակահարմար է համարել դեղերը և (կամ) դեղագործական արտադրանքը դասակարգել ըստ դեղաբանական նշանակության, այսինքն՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ներդրված դեղերի դասակարգման ATC (Anatomical Therapeutic Chemical classification system) համակարգի դասակարգման 3-րդ մակարդակով:



ATC դասակարգման 3-րդ մակարդակի խմբերում ընդգրկված դեղանյութերը և դրանցից պատաստված արտադրանքը ընդհանուր առմամբ կարող են լինել փոխադարձ փոխարինելի բժշկական տեսանկյունից, սակայն որոշ դեպքերում դրանք փոխադարձ փոխարինելի չեն ֆինանսական տեսանկյունից՝ կախված դեղորայքի գներից: Մյուս կողմից՝ դեղերի շրջանառության ոլորտում բացարձակ փոխադարձ փոխարինելիությունը որոշելը դժվար է, քանի որ մեկ մարդու (կամ հիվանդի) համար նույն

դեղերը կարող են լինել փոխադարձ փոխարինելի, մեկ այլ մարդու (կամ հիվանդի) համար՝ ոչ: Դա կախված է տվյալ դեղորայքն օգտագործողի ուղեկցող հիվանդություններից, դեղորայքի և դրանցում առկա նյութերի նկատմամբ անհատական պատասխանից, դեղորայքի կողմնակի ազդեցություններից[1], այդ իսկ պատճառով յուրաքանչյուր դեղորայք օգտագործողի համար դեղերի փոխադարձ փոխարինելությունը յուրահատուկ է:

ՀՀ-ում դեղերի գրանցամատյանը վարվում է ATC դասակարգման 5-րդ մակարդակով՝ հիմք ընդունելով ակտիվ բաղադրատարրը[2]:

Առկա 5-րդ մակարդակի տվյալները Հանձնաժողովի կողմից խմբավորվել են ըստ ATC դասակարգման 3-րդ մակարդակի, որի արդյունքում ստացվել է 217 խումբ՝ ներառյալ անասնաբուժական դեղերը և պետրոլեում Դ5-ը (զտված նավթը): Ըստ այդ խմբերի՝ որոշվել են մի շարք ապրանքային շուկաներ[3], որոնցից 2020 թվականին ուսումնասիրելու համար ընտրվել են.

1. «M01A- ոչ ստերոիդային, ցավազրկող, հակաբորբոքային դեղամիջոցներ»,

2. «C07A- բետա ընկալիչների բլոկադորներ կամ արգելակիչներ (խումբը ներառում է սիրտ-անոթային հիվանդությունների ժամանակ կիրառվող բետա բլոկադորներ)»,

3. «J02A- հակաբակտերիալ (հակասնկային) միջոցներ՝ պարբերաբար օգտագործման համար» ապրանքային շուկաները:

Վերոնշյալ ապրանքային շուկաների աշխարհագրական սահման է համարվել ՀՀ ողջ տարածքը, քանի որ դեղախմբերը սպառողների համար տնտեսապես հնարավոր ու նպատակահարմար է ձեռք բերել ՀՀ ողջ տարածքում:

Լիազոր մարմինը և պետական կարգավորումը

ՀՀ-ում դեղերի շրջանառության ոլորտում պետական կարգավորում իրականացնող լիազոր մարմին է համարվում Առողջապահության նախարարությունը:



1 Օրինակ՝ հիվանդը կարող է ունենալ ալերգիա կամ տվյալ դեղորայքը և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի դեղորայքները մեկ օրգանի համար կարող են լինել արդյունավետ, մեկ այլ օրգանի համար՝ վնասակար:

2 http://pharm.am/index.php/am/2014-09-16-06-29-36/102-2015-04-06-14-11-25

3 Դասակարգման ընթացքում պարզվել է, որ գոյություն ունեն նախկին ԽՍՀՄ երկրների արտադրության դեղեր և (կամ) դեղանյութեր, որոնք դասակարգված չեն ATC համակարգում: Դրանք ներառվել են ATC համակարգի որևէ մակարդակում՝ հաշվի առնելով դեղանյութը:

ՀՀ-ում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են ՀՀ-ում, բացառությամբ դեղատանը պատրաստվող, ՀՀ-ից արտահանվող, միայն արտահանման նպատակով ՀՀ-ում արտադրվող, ցուցահանդեսներին ներկայացնելու նպատակով ներմուծվող և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում կիրառվող դեղերի, որոնց համար չի պահանջվում գրանցում[4]:

Ներմուծում և արտահանում

2018 և 2019 թվականների ընթացքում դեղերի ներմուծման կառուցվածքը՝ ըստ արտահանող երկրների



2018 և 2019 թվականների ընթացքում դեղերի ներմուծման կառուցվածքը՝ ըստ ծագման երկրների



4 «Դեղերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 16 և 23

Դեղերի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրությունների համեմատական վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ 2018 և 2019 թվականների ընթացքում ՀՀ դեղերի ներմուծման կառուցվածքում՝ ըստ արտահանող երկրների փոփոխություն տեղի չի ունեցել, մասնավորապես, նշված թվականներին դեղերը հիմնականում ներմուծվել են Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից և Հունգարիայից:

2018 և 2019 թվականների ընթացքում ՀՀ-ից դեղերի արտահանման կառուցվածքի համեմատական վերլուծությամբ կարող ենք փաստել, որ 2019 թվականին ավելացել է արտահանվող երկրների քանակը՝ 15-ից դառնալով 18, մինչդեռ 0,8 տոկոսով նվազել է արտահանման ծավալը՝ 51.9 մլն դրամ մաքսային արժեքով, իսկ Ռուսաստանի Դաշնություն արտահանվող դեղերի ծավալն ավելացել է շուրջ 13.6 տոկոսով՝ 452.2 մլն դրամ մաքսային արժեքով:

2018 և 2019 թվականների ընթացքում դեղերի արտահանման կառուցվածքը՝ ըստ ներմուծման երկրների



Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2018 թվականին ՀՀ-ից դեղ է արտահանել 27 ընկերություն, ըստ արտահանման ծավալների՝ խոշոր դեղ արտահանող ընկերություններն են «Լիկվոր» ՓԲԸ-ն, «Ֆարմաֆակտ» ՍՊԸ-ն և «Երևանի քիմիադեղագործական ֆիրմա» ԲԲԸ-ն:

2019 թվականի ընթացքում «M01A» ապրանքային շուկայում դեղամիջոցներ ներմուծող առաջին երեք խոշոր ընկերություններն են «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն, «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, որոնք ապրանքային շուկայում չեն ունեցել գերիշխող դիրք: Ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019-ին «M01A» ապրանքային շուկայում դեղեր է ներմուծել 31 ընկերություն: Դեղերի ուղիղ ներմուծումը կազմում է 92 տոկոս, իսկ զուգահեռ ներմուծումը՝ 8 տոկոս: «M01A» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին մակարդակ:

CR3



HHI

2019 թվականի ընթացքում «C07A» ապրանքային շուկայում դեղամիջոցներ ներմուծող առաջին երեք խոշոր ընկերություններն են «Վագա Ֆարմ»

ՍՊԸ-ն, «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, որոնք ապրանքային շուկայում զբաղեցրել են գերիշխող դիրք: 2019 թվականին «C07A» ապրանքային շուկայում դեղամիջոցներ է ներմուծել 17 ընկերություն: Ուղիղ ներմուծումը կազմել է շուրջ 99,8 տոկոս, իսկ զուգահեռ ներմուծումը՝ 0,2 տոկոս: «C07A» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր մակարդակ:

CR3



HHI

2019 թվականի ընթացքում «J02A» ապրանքային շուկայում դեղամիջոցներ ներմուծող առաջին երեք խոշոր ընկերություններն են «Ալֆա Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ն, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն, «Աստերիա» ՍՊԸ-ն, որոնք ապրանքային շուկայում չեն ունեցել գերիշխող դիրք: 2019 թվականին «J02A» ապրանքային շուկայում դեղեր է ներմուծել 11 ընկերություն: Ուղիղ ներմուծումը կազմել է շուրջ 99,99 տոկոս, իսկ զուգահեռ ներմուծումը՝ շուրջ 0,01 տոկոսը: «M01A» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին մակարդակ:

CR3



HHI

Եզրակացություն

1. Ոլորտը կարգավորող օրենսդրությունը նախատեսում է միայն փոխհատուցվող դեղերի գների կարգավորում և վերահսկողություն, մասնավորապես, փոխհատուցվող դեղերի հենակետային գներ և մեծածախ ու մանրածախ իրացման առավելագույն հավելագին: Այս կարգավորումն ամբողջությամբ նախատեսվում է կիրառել 2025 թվականից: Մինչդեռ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք եվրոպական երկրներում գործում է դեղերի առավելագույն և նվազագույն գների սահմանման փորձը, մասնավորապես, որոշ երկրներում դեղերի գրանցման ժամանակ տվյալ երկրի համապատասխան մարմնում (օրինակ՝ Ֆինանսների նախարարությունում կամ Առողջապահության նախարարությունում) միաժամանակ գրանցվում է նաև դեղի առավելագույն և նվազագույն գին, որից ավել կամ պակաս գնով չի կարելի իրացնել դեղերը: Դրանց սահմանումը և գրանցումը պայմանավորված է նրանով, որ լինելով սոցիալական կարևոր նշանակության ապրանքներ՝ դեղերի առավելագույն գնի սահմանմամբ պետությունն անուղղակիորեն կարգավորում է շուկան՝ զերծ պահելով տնտեսավարող սուբյեկտների կողմից գնի անհիմն և անտեղի թանկացումից և (կամ) վաճառքի մեծ մարժաների սահմանումից, իսկ նվազագույն գնի սահմանումը նպատակ ունի բացառելու դեմպինգային երևույթները:

2. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գործում են բարտերային երևույթներ, որոնց հստակ կարգավորման մեխանիզմները օրենսդրությամբ մշակված չեն: Մասնավորապես, դեղեր և (կամ) որոշ բժշկական սարքավորումներ ձեռք բերող և իրացնող տնտեսավարող սուբյեկտներն իրականացնում են բարտերներ միմյանց միջև, որոնց չկարգավորված լինելը կարող է հանգեցնել

հակամրցակցային համաձայնությունների: Առաջարկվում է այս մասով մշակել և ներդնել օրենսդրական հիմքեր և մեխանիզմներ՝ կարգավորելով ոլորտում բարտերների իրականացումը:

3. Արտակարգ դրության ժամանակահատվածում չկա հասանելի վիճակագրություն չգրանցված դեղերի ներմուծման մասով: Մասնավորապես այն մասով, թե ինչպես է իրականացվում կոնկրետ տնտեսավարող սուբյեկտներին չգրանցված դեղերի ներմուծման թույլտվության տրամադրումը կամ որոշումների մերժումը՝ շուկայում այլևս պահանջարկ չլինելու պատճառաբանությամբ:
4. «Դեղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասին վարվում է ինտերնետային կայք, որով տրամադրվում է սպառիչ տեղեկատվություն հիմնական դեղերի ցանկում ներառված դեղերի առկայության վերաբերյալ, այդ թվում՝ դեղի առևտրային անվանումը, դրանց մեծածախ առավելագույն հավելագինը, տվյալ պահին առկա քանակները: Սակայն մեծածախ առևտրով զբաղվող տնտեսավարող սուբյեկտների ինտերնետային կայքերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերը նշված տեղեկատվությունից մեծածախ առավելագույն հավելագնի փոխարեն նշվում են դեղերի գները:
5. Դեղերի շրջանառության ոլորտի և դեղորայքային արտադրանքի շուկայի վրա ազդում է նաև բժշկական և (կամ) առողջության ապահովագրության համակարգը, տվյալ երկրում գործող ապահովագրության փոխհատուցման տեսակները և չափերը: Օրինակ՝ փոխադարձ փոխարինելի թանկ և էժան դեղերի միջև կարող է առաջանալ մրցակցային խնդիր, եթե մեկը փոխհատուցվում է առողջության ապահովագրողի կողմից, իսկ մյուսը՝ ոչ: Մրցակցության սահմանափակում կարող է լինել նաև դեղատոմսով բարձր գներով և առանց դեղատոմսի ցածր գներով վաճառվող դեղերի միջև: Դեղերի գնման և փոխհատուցման քաղաքականությունը, տարբեր ընկերությունների կողմից վարվող բրենդային քաղաքականությունը, բաշխման տարբեր ռազմավարությունները, դեղերի պետական գնման համակարգը մեծ նշանակություն ունեն մրցակցային միջավայրի վրա:

Դեղերի շրջանառության ոլորտի այլ ապրանքային շուկաների ուսումնասիրությունը շարունակվում է 2021 թվականին:

4. Հանքարդյունաբերության ոլորտում ուսումնասիրություն

Նպատակը

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը բարձր հարկային եկամուտների ապահովման, արտահանումից ստացվող եկամուտների, օտարերկրյա ներդրումների և աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից առանցքային դեր ունի ազգային տնտեսության մեջ: Ոլորտի նշանակությունը ՀՀ-ի համար զգալի է հատկապես զարգացման և ներդրումային միջավայրի ստեղծման տեսանկյունից: Ջուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան վերջին տարիներին ցույց է տալիս, որ ներդրումների իրականացման հիմնական ոլորտներում առանձնանում են նաև հանքագործական արդյունաբերությունը և դրան հարակից գործունեությունը, ինչը շեշտում է ոլորտում մրցակցային առողջ միջավայր ապահովելու անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով ընդերքի հարստությունների սահմանափակ քանակը, ոլորտի սոցիալական և բնապահպանական ազդեցությանն առնչվող հանրային քննարկումնե-

րը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված հնարավոր խնդիրները՝ անհրաժեշտություն է առաջացել իրականացնել հանքարդյունաբերության ոլորտի ուսումնասիրություն:

Հանքարդյունաբերությունը բնութագրվում է որպես ընդերքից արժեքավոր օգտակար հանածոների արդյունահանմանը և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր:

ՀՀ հանքավայրերի տեսակները՝ ըստ օգտակար հանածոների տեսակների



Հանքային ջրեր
24

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր
44

Մետաղական
43

Ոչ մետաղական
760

Ընդհանուր
871

Հայաստանը հարուստ է տարատեսակ մետաղական և ոչ մետաղական հանքանյութերով: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայր (43 մետաղական, 760 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղցրահամ և 24 հանքային ջրերի), ինչպես նաև օգտակար հանածոների 580 հանքերևակում[5] (131 մետաղական և 449 ոչ մետաղական), օգտակար հանածոների ավելի քան 130 տեսակ, որից շուրջ 25-ը՝ մետաղական:

2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրվել է 373 թույլտվություն, որից 25-ը՝ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրվել է 36 իրավունք, որից 4-ը՝ նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար:

Օգտակար հանածոների արդյունահանման թույլտվությունների տրամադրման գործընթացը սկսվում է հանքարդյունաբերական ընկերության կողմից լիազոր մարմին օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումի ներկայացմամբ, որից հետո «մեկ պատուհանի» սկզբունքի ներքո ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացի վարչարարությունը մասնակիորեն փոխանցվում է Շրջակա միջավայրի նախարարություն շրջակա միջավայրի վրա ազդեցության և Արտակարգ իրավիճակների նախարարություն տեխնիկական անվտանգության փորձաքննություններ իրականացնելու համար:

Հիմք ընդունելով օգտակար հանածոների հիմնական տիպերի դասակարգման ուղեցույցները, դրանց ֆիզիկական հատկությունները, կիրառությունը՝ իրականացված ուսումնասիրության շրջանակում առանձնացվել են հետևյալ ենթաոլորտները.

Մետաղական հանքարդյունաբերությունում՝

- «Պղնձի խտանյութ» ենթաոլորտ
- «Մոլիբդենի խտանյութ և ֆերոմոլիբդեն» ենթաոլորտ
- «Ցինկի խտանյութ» ենթաոլորտ
- «Ոսկու խտանյութ, ոսկու և արծաթի համաձուլվածք» ենթաոլորտ

Ոչ մետաղական հանքարդյունաբերությունում՝

- «Շինարարական քարեր» ենթաոլորտ
- «Բետոնի լցանյութեր» ենթաոլորտ
- «Կապակցող նյութեր, ցեմենտի հումք» ենթաոլորտ
- «Քիմիական հումք» ենթաոլորտ
- «Կիսաթանկարժեք և բնագույն քարեր» ենթաոլորտ
- «Բազմանպատակային օգտագործման հումք» ենթաոլորտ

Առանձնացված ենթաոլորտների ապրանքային շուկաների հատկորոշումը կդիտարկվի հետագայում՝ առանձին ուսումնասիրությունների և վարույթների շրջանակներում:

5 Ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն:

Հանձնաժողովն ուսումնասիրել է բնական պաշարների արդյունահանումից մինչև դրա ունեցած ազդեցության հետ կապված հիմնական փուլերը, մասնավորապես թույլտվությունների ու իրավունքների տրամադրումը, շահառուների բացահայտումը, ֆինանսական և իրավական կարգավորումները, պետական բյուջե ուղղվող հարկերը և վճարները և այլն, որում բացահայտված էական խնդիրները ներկայացված են եզրակացությունում:

Հանքավայրերի համեմատաբար քիչ քանակից և անհրաժեշտ ներդրումների մեծությունից ելնելով՝ մետաղական հանքարդյունաբերության ենթաոլորտներում տնտեսավարող սուբյեկտների քանակը փոքր է, կազմը՝ հիմնականում անփոփոխ, սակայն փոփոխությունները տեղի են ունենում հանքավայրը շահագործող ընկերությունների իրական սեփականատերերի կառուցվածքում: Ընդերքօգտագործման իրավունք ստացած ընկերությունների քանակը «Պղնձի խտանյութ» ենթաոլորտում 8-ն է, «Մոլիբդենի խտանյութ և ֆերոմոլիբդեն» ենթաոլորտում՝ 6-ը, «Ցինկի խտանյութ» ենթաոլորտում՝ 1-ը, «Ոսկու խտանյութ, ոսկու և արծաթի համաձուլվածք» ենթաոլորտում՝ 16-ը: Սակայն ընկերությունների ներկայացրած հաշվետվություններից պարզվել է, որ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած ընկերությունների 56 տոկոսը վերջին տարիներին արդյունահանման աշխատանքներ չի իրականացրել:

Ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում հիմնականում իրականացվում է արդյունաբերական նշանակության հանածոների, լցանյութերի և շինարարարական քարերի արդյունահանում: Թույլտվությունների քանակը գրեթե 14 անգամ գերազանցում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտում տրված թույլտվությունների քանակը, սակայն ոլորտի տնտեսական նշանակությունը փոքր է, քանի որ ստացվող արտադրանքի արժեքը ծավալային մեծության համեմատ փոքր է: Ոլորտին հատուկ է մասնակիցների մեծ թիվը և կազմի ու կառուցվածքի հաճախակի փոփոխությունը: 2019 թվականին ոչ մետաղական հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական բարձր նշանակություն ունեցող տուֆի և բազալտի ապրանքային շուկաները կենտրոնացված չեն, ավազակոպճային նյութերի շուկան ունի կենտրոնացվածության միջին մակարդակ, իսկ քարաղի, պեռլիտի, կրաքարերի, կավերի և տրավերտինի շուկաները ունեն կենտրոնացվածության բարձր մակարդակ:

HHI



Եզրակացություն

1. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դեպքում, եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն

է տրվում այն դիմումատուին, ում դիմումն առաջինն է գրանցվել: Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ «**Ով առաջինն է դիմում, նա առաջինն է ստանում**» սկզբունքը կիրառելի է նաև այլ պետություններում և նպատակ ունի խրախուսել երկրաբանական ուսումնասիրությունների իրականացումը: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտնում է, որ երկրաբանական ուսումնասիրության թույլտվության վերոնշյալ ընթացակարգը կարող է սահմանափակել մրցակցությունը: Նշված գործընթացի կազմակերպումը մրցութային հիմունքներով կստեղծի հավասար պայմաններ տվյալ տարածքում երկրաբանական ուսումնասիրություն իրականացնել ցանկացող բոլոր ընկերությունների համար: Ոլորտը կարգավորող իրավական դրույթների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դեպքում տվյալ տեղամասի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու իրավունք կրողը (ով տվյալ իրավունքի ստացման համար դիմել է առաջինը) ունենում է արտոնյալ դիմումատուի[6] կարգավիճակ: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ նախապատվության տրամադրումը և արտոնյալ կարգավիճակի շնորհումն իրավաչափ է՝ հաշվի առնելով վերջինիս կողմից կատարած ներդրումները և սպասվող օգուտները:

2. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է **ընդերքօգտագործման իրավունքից հրաժարման** գործընթացը: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս ընդերքօգտագործման իրավունքից հրաժարման գործընթացը երկար է տևում, երբեմն տարիներ՝ դատական գործընթացներով պայմանավորված: Նման կարգավորման պայմաններում կարող են առաջանալ մուտքի խոչընդոտներ ընդերքօգտագործման իրավունքի հնարավոր նոր դիմումատուի համար: Ավելին, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման դեպքում հնարավոր է լիազոր մարմնի կողմից օպերատիվ միջամտության անհրաժեշտություն՝ հասարակության գերակա շահով և բնապահպանական նկատառումներով պայմանավորված: Ընդերքօգտագործման իրավունքից հրաժարման գործընթացն ինքնին առաջացնում է մի շարք հետևանքներ ոչ միայն այլ տնտեսավարող սուբյեկտների, այլ նաև շրջակա միջավայրի համար: Նման պայմաններում որպես հրաժարման հավաստագիր չտրամադրելու դեպք շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համար նախատեսված ողջ ծավալով հատկացումների չկատարումը նախատեսելը հավելյալ քննարկման կարիք ունի առաջացող հետևանքների համատեքստում: Կարծում ենք՝ նման դեպքերում լիազոր մարմինը կարող է կիրառել օրենքով նախատեսված այլ գործիքակազմեր:

3. Ոլորտում առկա են նաև հողօգտագործմանը վերաբերող խնդիրներ: Ընդերքօգտագործման հետ կապված **հողային հարաբերությունները** կարգավորվում են ՀՀ հողային օրենսգրքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը չի կարող սկսել հանքարդյունահանման աշխատանքներն առանց տվյալ տարածքի համապատասխան սեփականատիրոջ համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի»:

6 Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ արտոնյալ դիմումատու է համարվում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք կրողը, որը տվյալ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման համար իրավունք ձեռք բերելու դիմում է ներկայացրել լիազոր մարմին:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի դեպքում ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագիրը կնքվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, սակայն մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի դեպքում հանքարդյունահանողն ինքն է բանակցում հողի սեփականատիրոջ հետ այն վարձակալելու կամ գնելու նպատակով: Ընդերքօգտագործման համար կենսական նշանակություն ունեցող այս գործընթացի տարանջատված կարգավորման արդյունքում ընթացակարգային խնդիրներ են առաջանում ընդերքօգտագործման իրավունք ստացած ընկերությունների համար՝ իրենց իրավունքների իրականացման տեսանկյունից:

4. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 2020 թվականի հուլիսի 16-ին կատարված ՀՕ-397-Ն փոփոխությունների արդյունքում սահմանվել են **ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման նոր ժամկետներ** (մետաղական օգտակար հանածոների արդյունահանման դեպքում՝ 25 տարի, ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի արդյունահանման դեպքում՝ 20 տարի): Ընդ որում, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված 25 տարվա թույլտվությունը օրենքով նախատեսված դեպքերում կարող է հետաձգվել ևս 25 տարի ժամկետով: Նման պայմաններում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նման երկարաժամկետ հիմունքներով տրված իրավունքը շուկայում ստեղծում է երկարաժամկետ բարձր կենտրոնացվածություն, շուկա մուտք գործելու խոչընդոտներ, գործուն մեխանիզմներ կիրառելու անհրաժեշտություն է առաջանում, որը կապահովի երկկողմ երաշխիքներ պայմանագրում նշված իրավունքների և պարտականությունների լիարժեք կատարման համար:

5. Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով **ընդերքօգտագործման պայմանագրերի** ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թեև պայմանագրերը մեծամասամբ կրկնում են օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրի օրինակելի ձևը[7], դրանցից որոշներում բացակայող տեղեկատվությունն առաջացնում է հետագա ֆինանսական հետևանքներ: Մասնավորապես, «Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ» բաժինը, որից անմիջական կախվածության մեջ է ընկերության կողմից վճարվող մշտադիտարկումների իրականացման վճարի չափը, պայմանագրերի մեծ մասում բացակայում է կամ թերի է լրացված: Մշտադիտարկումների իրականացման հաշվարկային բազային չափ է համարվում հանքի փակման ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող մշտադիտարկումների ծրագրով նախատեսված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով իրականացվող մշտադիտարկումների նախահաշվային արժեքը[8]: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավո-

7 ՀՀ Կառավարության 2012 թվականի մարտի 22-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 437-Ն որոշում

8 ՀՀ Կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 22-Ն որոշում

րությունների չափը և կատարման ժամկետները նույնպես բացակայում է պայմանագրերի մի մասից: Ընդ որում ընկերությունների մեծ մասի համար հանքարդյունահանման պայմանագրով սոցիալ-տնտեսական ներդրումներ կատարելու պարտավորություն սահմանված չէ (18 ընկերություն), որոշների դեպքում այդպիսի ներդրումներ պայմանագրով նախատեսված են, սակայն ընկերությունները դրանք փաստացի չեն կատարում, կան նաև դեպքեր, երբ ներդրումներ կատարվում են՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք պայմանագրով չեն սահմանվել կամ ավելի քիչ են սահմանվել: Արդյունքում հանքարդյունահանող տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվում են գործունեության իրականացման անհավասար պայմաններ:

6. Դիտարկումները ցույց են տալիս, որ հանքարդյունաբերության ոլորտի ամբողջ տնտեսական ներուժը դեռևս չի օգտագործվում: Նախ՝ չեն կիրառվում օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման այնպիսի համակարգեր, որոնք կապահովեն հիմնական և ուղեկից օգտակար հանածոների պաշարների տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը: Չի օգտագործվում նաև Հայաստանում հանքարդյունաբերական հումքի վերամշակման հնարավորինս երկար արտադրական շղթայի հիմնադրման հնարավորությունը, որը թույլ կտա արտահանել զտված մետաղներ և մեծացնել ստացվող շահույթը:

   Բացի այդ, ընկերությունների ներկայացրած հաշվետվություններից պարզ է դարձել, որ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած մի շարք ընկերություններ (մետաղական հանքարդյունաբերությունում՝ 14 ընկերություն կամ 56 տոկոսը, ոչ մետաղական հանքարդյունաբերությունում՝ 99 ընկերություն կամ 33 տոկոսը) արդյունահանման աշխատանքներ չեն իրականացրել վերջին տարիներին, մինչդեռ օգտակար հանածոների արդյունահանումը տվյալ տեղամասից ոչ միայն ընկերության բացառիկ իրավունքն է, այլ նաև պարտականությունը՝ հաշվի առնելով, որ մի շարք այլ հավանական ընկերություններից ընդերքօգտագործման իրավունքը տրվել է տվյալ ընկերությանը, և ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսվել են պաշարների մարման տարեկան ծավալներ:

   Կան նաև ընդերքօգտագործողներ, որոնք հաստատված պաշարների համեմատ չնչին արդյունահանում են իրականացնում: Նշված խնդիրը կարող է հանքավայրի արդյունահանման թույլտվությունն առանց մրցույթի տրամադրելու հետևանքը լինել, քանի որ այդ դեպքում չեն համեմատվում տարբեր ընկերությունների տեխնիկական և ֆինանսական կարողությունները:

5. Հեռուստատեսության և թվային հարթակների միջոցով գովազդի տարածման ոլորտում ուսումնասիրություն

Գովազդային ծառայությունների մատուցման ոլորտում առանձնացվել են «Հեռուստատեսային գովազդ», «Ռադիոգովազդ» և «Ինտերնետային գովազդ» ապրանքային շուկաները:

Հեռուստատեսային գովազդ

«Հեռուստատեսային գովազդ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է հեռուստաընկերությունների միջոցով տարածվող գովազդային

ծառայությունները, քանի որ այդ ծառայությունները փոխադարձ փոխարինելի են իրենց գործածության նշանակությամբ, ֆունկցիոնալ, տեխնիկական և գնային հատկանիշներով, իսկ իրացման ձևը նույնն է:

«Հեռուստատեսային գովազդ» ապրանքային շուկայի աշխարհագրական սահման դիտարկվել է ՀՀ-ն:

Հանձնաժողովի ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ-ում գործունեություն են իրականացնում 28 հայկական հեռուստաալիքներ: Հանձնաժողովի կողմից «Հեռուստատեսային գովազդ» ապրանքային շուկայի շրջանակներում դիտարկվել են առավել մեծ լսարան ունեցող և մեծ ծավալի գովազդային ծառայություններ մատուցող հեռուստաընկերությունների վարքագիծը, որոնք սփռվածություն ունեն ամբողջ հանրապետությունում և Երևան քաղաքում: Համաձայն Հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրության՝ հեռուստաընկերությունների կողմից մատուցվող գովազդային ծառայությունների իրացման ծավալներով առաջին 3 ընկերությունների («ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲԸ, «ՇԱՆԹ» ՍՊԸ և «ԱՐ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ) ընդհանուր մասնաբաժինը 2018 և 2019 թվականներին կազմել է 74 տոկոս: Հանձնաժողովի կողմից 2018 և 2019 թվականներին «Հեռուստատեսային գովազդ» ապրանքային շուկայի կենտրոնացվածությունը գնահատվել է բարձր, իսկ 2020 թվականի հունվարից հուլիսն ընկած ժամանակահատվածի համար՝ միջին:



Եզրակացություն

1. Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հեռուստաընկերությունները հիմնականում չունեն գովազդի տեսակների գների ձևավորման և զեղչային քաղաքականության համար սահմանված չափանիշներ, իսկ ունենալու դեպքում էլ վերաբերում են գովազդի տեսակների նվազագույն գների սահմանմանը, ինչը չի կարող բացառել խտրական գնային քաղաքականության իրականացումը: Մասնավորապես «Հեռուստատեսային գովազդ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող հեռուստաընկերությունները, չունենալով հստակ սահմանված գովազդի տեսակների գների ձևավորման, զեղչային քաղաքականության և տնտեսավարող սուբյեկտների հետ անմիջապես կամ գովազդային գործակալությունների (այդ թվում՝ սեյլս հաուսների) միջոցով աշխատելու համար սահմանված չափանիշներ, կարող են խտրական մոտեցումներ ցուցաբերել տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ (ինչպես գնային քաղաքականության միջոցով, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտներին ուղղորդելով անմիջապես գործակալությունների կամ սեյլս հաուսների հետ աշխատելու)՝ խախտելով մրցակցային օրենսդրությամբ սահմանված դրույթները: Նշվածը վերաբերում է նաև տվյալ ապրանքային շուկայում գործող սեյլս հաուսներին, ինչի կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է ապահովել սեյլս հաուսների կողմից իրացվող գովազդի գնի ձևավորման և զեղչա-

յին քաղաքականության հստակ հրապարակային չափանիշներ: Միաժամանակ սեյլս հաուսների համար արհեստական խոչընդոտներ չստեղծելու նպատակով Հանձնաժողովը գտնում է, որ հեռուստաընկերությունները չպետք է բացառիկության պայմանով պայմանագրեր կնքեն նրանց հետ:

2. Հանձնաժողովի ուսումնասիրությունների համաձայն՝ գոյություն ունեն հեռուստա և ռադիոգովազդի (օրինակ՝ ուղիղ տեսակի գովազդ, PR, Product Placement և այլն) բազմաթիվ տեսակներ, որոնք օրենսդրությամբ կարգավորված չեն:

Ինտերնետային գովազդ

«Ինտերնետային գովազդ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է տնտեսավարող սուբյեկտների կողմից էլեկտրոնային կայքերի միջոցով մատուցվող գովազդային ծառայությունները (էլեկտրոնային կայքերում տեղադրվող գովազդ), քանի որ այդ ծառայությունները փոխադարձ փոխարինելի են իրենց գնային, տեխնիկական և ֆունկցիոնալ հատկանիշներով, գործածության նշանակությամբ, իսկ իրացման ձևը նույնն է:

«Ինտերնետային գովազդ» ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը տվյալ ապրանքային շուկայի ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը չի սահմանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային կայքերում տեղադրվող գովազդը կարող է տարածվել և ձեռք բերվել նաև ոչ ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտների կողմից, ըստ էության տվյալ գովազդի սպառող կարող են հանդիսանալ նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող անձինք: Այդուհանդերձ, տվյալ ոլորտին վերաբերող առանձին վարույթների և ուսումնասիրությունների շրջանակներում, ելնելով տվյալ ուսումնասիրության առանձնահատկություններից, Հանձնաժողովը կարող է սահմանել աշխարհագրական սահմաններ:

«Ինտերնետային գովազդ» ապրանքային շուկայի ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովն ինտերնետային հարթակների միջոցով գովազդային ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների կազմի ընտրությունն իրականացրել է հայտնի www.similarweb.com և www.alexa.com հարթակների հրապարակային տեղեկատվության, շուկայի ուսումնասիրության ընթացքում ստացված ազդակների և Հանձնաժողովի կողմից ձեռք բերված տվյալների համադրության արդյունքում, ինչի հետևանքով «Ինտերնետային գովազդ» ապրանքային շուկայի ծավալը հաշվարկվել է 33 էլեկտրոնային կայքեր տնօրինող 21 տնտեսավարող սուբյեկտի տվյալների հիման վրա:

CR3



Համաձայն Հանձնաժողովի ուսումնասիրությունների՝ էլեկտրոնային կայքերի միջոցով մատուցվող գովազդային ծառայությունների իրացման ծավալներով առաջին 3 ընկերությունների («ՆՅՈՒԶ ԷՅԷՄ» ՍՊԸ, «ՍԿԻԶԲ ՄԵԴԻԱ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ և «ԹԵՐԹ ԷՅ ԷՄ» ՍՊԸ) ընդհանուր մասնաբաժինը 2019 թվականին կազմել է 38 տոկոս, իսկ շուկայում կենտրոնացվածության մակարդակը ցածր է:

Եզրակացություն

1. Էլեկտրոնային կայքերը տնօրինող տնտեսավարող սուբյեկտները ևս մեծամասամբ չունեն գնային քաղաքականության, զեղչերի կիրառման և տնտեսավարող սուբյեկտների հետ անմիջապես կամ գովազդային գործակալությունների միջոցով աշխատելու համար սահմանված չափանիշներ, ինչի արդյունքում կարող են խտրական մոտեցումներ ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտների նկատ-

մամբ՝ խախտելով մրցակցային օրենսդրությամբ սահմանված դրույթները:

2. Ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ չնայած օրենսդրությամբ գովազդի նկատմամբ պահանջները ներկայացված են ընդհանրական ձևով, ինչից կարելի է ենթադրել, որ դրանք վերաբերում են նաև համացանցի միջոցով տարածվող գովազդին, այդուհանդերձ, առկա չեն ինտերնետ գովազդի հստակ կարգավորումներ (այդ թվում՝ էլեկտրոնային կայքերի միջոցով տարածվող գովազդի (օրինակ՝ Catfish, Native Impage, Native top, Fullscreen, PreRoll video և այլն) տեսակների վերաբերյալ) և օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկող լիազոր մարմին:

3. Տեղեկատվության տպագիր միջոցների համար օրենսդրությամբ սահմանված են այնպիսի պահանջներ, որոնք հրապարակային են դարձնում տվյալ տնտեսավարող սուբյեկտի գնային քաղաքականությունը: Նշված պահանջները չեն գործում էլեկտրոնային կայքերի միջոցով տարածվող գովազդի համար, ինչի հետևանքով տվյալ գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտները կարող են մատուցվող գովազդային ծառայությունների համար խտրական գներ սահմանել՝ որոշ դեպքերում թույլ տալով նաև մրցակցության օրենսդրության խախտումներ:

4. Գովազդային ծառայությունների մատուցման ոլորտի օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություններից ելնելով կարող ենք փաստել, որ համացանցի միջոցով գովազդի տարածում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հաշվառում չի կատարվում և վերջիններիս կողմից օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվում, ինչի արդյունքում ձևավորվում է անհավասար մրցակցային միջավայր:

Ռադիոգովազդ

Հանձնաժողովը որպես «Ռադիոգովազդ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման դիտարկել է ռադիոընկերությունների միջոցով տարածվող գովազդային ծառայությունները:

«Ռադիոգովազդ» ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը ՀՀ-ն է:

Հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գործունեություն են իրականացնում թվով 20 ռադիոընկերություններ: Հանձնաժողովը «Ռադիոգովազդ» ապրանքային շուկայում ներառել է ՀՀ-ում և Երևան քաղաքում սփռվածություն ունեցող ռադիոընկերություններին, որոնցից գովազդային ծառայությունների մատուցմամբ զբաղվում են 16-ը:

Ռադիոընկերությունների կողմից մատուցվող գովազդային ծառայությունների իրացման ծավալներով առաջին 3 ընկերությունների («ԱՎՏՈՌԱԴԻՈ» ՍՊԸ, «ՌԱԴԻՈ ՎԱՆ» ՍՊԸ և «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊԸ) ընդհանուր մասնաբաժինները 2018 և 2019 թվականներին կազմել են համապատասխանաբար 48 և 45 տոկոս: Շուկայում կենտրոնացվածության մակարդակը ցածր է:

Օրենսդրական մի շարք բացթողումներ և խնդիրներ

Առկա են տնտեսական գործունեության այնպիսի տեսակներ, որոնցով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները, հիմնական ծառայության մատուցման ընթացքում գովազդում են այլ ապրանքներ և(կամ) ծառայություններ (օրինակ՝ վճարահաշվարկային կազմակերպությունները վճարահաշվարկային տերմինալների միջոցով, առևտրային ցանցերը և հանրային սննդի օբյեկտները տոպրակների, անձեռոցիկների և այլ պարագաների միջոցով և այլն), որոնք օրենսդրությամբ չեն կանոնակարգվում, մասնավորապես չեն դասվում գովազդի տեսակներից որևէ մեկի շարքին և լիազոր մարմնի կողմից չեն վերահսկվում: Հետևաբար, նման գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքում կարող են խախտվել գովազդի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր պահանջները՝ տվյալ ընկերություններին գովազդային ծառայություններ մատուցող այլ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տալով մրցակցային առավելություններ:

6. Պետական գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման գործընթացների ուսումնասիրություն

ՀՀ պետական գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման տրամադրման գործընթացների դիտարկումները ցույց են տվել, որ առկա են վերջինիս կազմակերպման և իրականացման թափանցիկության, դրանց վերաբերյալ տվյալների հասանելիության և հրապարակայնության բացակայության հետ կապված հարցեր, որոնք որոշակի խնդիրների և անհամաչափությունների են հանգեցնում ինչպես տնտեսական մրցակցության, այնպես էլ ընդհանուր տնտեսության զարգացման տեսանկյունից:

Պետական և համայնքային գույքի վարձակալության տրամադրման գործընթացում առկա մրցակցային խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ արդյունավետ մոտեցումների վերհանման նպատակով Հանձնաժողովը իրականացրել է պետական կառավարման մարմինների, նրանց ենթակայության տակ գործող կազմակերպությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, հանրային այլ ռեսուրսների օգտագործման ընթացակարգերի ուսումնասիրություն:

Հանձնաժողովն ուսումնասիրել է ավելի քան 26555 պայմանագրեր և համաձայնագրեր՝ ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Ամփոփելով պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ինչպես նաև հանրային այլ ռեսուրսների օգտագործման տրամադրման գործընթացներին առնչվող ուսումնասիրությունը՝ Հանձնաժողովը բացահայտել է մի շարք խնդիրներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կարող են ազդեցություն ունենալ մրցակցային իրավիճակի վրա, մասնավորապես.

- Վարձակալությամբ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական գույքի կազմի մասին միասնական գրանցամատյանների տեղեկությունները հրապարակված չեն և այդպիսով մատչելի չեն հանրությանը, հետևաբար

առաջարկվել է հրապարակել գրանցամատյանները:

- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի (տարածքների, հողերի) վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործընթացներում բացակայում է ամբողջական և բոլոր ընթացակարգերը, գործընթացներն արտացոլող տվյալների բազա: Ուսումնասիրության արդյունքներից Հանձնաժողովը եզրակացրել է, որ տեղական ինքնակառավարման մարմիններից առնվազն յուրաքանչյուր համայնք պետք է ունենա անհատույց օգտագործման տրամադրման և վարձակալական ընթացակարգերի միասնական հրապարակային բազա: Բազան թույլ կտա ապահովել գործընթացների կազմակերպման թափանցիկությունը, կնպաստի վերլուծական աշխատանքների, կանխատեսումների իրականացմանը, անհրաժեշտության դեպքում կապահովի տեղեկատվության արագ հասանելիություն, լիազոր մարմինների կողմից արդյունավետ վերահսկողություն՝ բացառելով կոռուպցիոն ռիսկերը:
- Հանձնաժողովի կողմից համապարփակ ուսումնասիրվել են ինչպես պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը (գրանցամատյանները, պայմանագրերի օրինակները), այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների ներկայացրած անհրաժեշտ տեղեկատվությունը: Վճարահաշվարկային տերմինալների, սուրճի պատրաստման սարքավորումների կամ այլ սարքավորումների տեղադրման տարածքների տրամադրման պայմանագրերը կնքված են միևնույն նպատակով և համարվում են վարձակալական պայմանագրեր, որտեղ ծառայություններ մատուցվում են ֆիզիկական անձանց, այլ ոչ թե պետական մարմնին կամ վճարահաշվարկային ծառայություն մատուցող ընկերությանը, իսկ պայմանագրի առարկա է հանդիսանում տերմինալների տեղադրման նպատակով տարածքի տրամադրումը:
- Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալության նոր պայմաններ առաջադրելիս, օրինակ՝ վարձավճար սահմանելիս, հարկավոր է հաշվի առնել տվյալ գույքի կամ տարածքի օգտագործման նպատակը, մրցակցային առանձնահատկությունները և զարգացման տեմպը, հեռանկարը, ինչպես նաև տարածքը վարձակալել ցանկացող նոր թեկնածուների ի հայտ գալու հանգամանքը և հավանականությունը: Նոր պայմանագիր կնքելիս կամ պայմանագրի ժամկետը երկարաձգելիս գնային քաղաքականության հիմք պետք է հանդիսանա նաև տարածքի նախկին վարձակալի կատարած ներդրումները, գործարար համբավը:
- Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մրցույթների կազմակերպումը շատ դեպքերում կրում է ձևական բնույթ, քանի որ մրցույթները կամ աճուրդներն անցկացվել են մեկանձնյա կամ լավագույն դեպքում՝ երկու հայտով: Անհրաժեշտ է մրցույթի կազմակերպման մասին ապահովել հնարավորինս լայն զանգվածային իրազեկում, տեղեկատվության միասնական հարթակի կիրառում, որտեղ հասարակության համար հասանելի և հանգամանալից կնկարագրվի մրցույթի առարկա հանդիսացող գույքը:

5. Հանձնաժողովի գործունեությունն արտակարգ դրության պայմաններում

2020 թվականին Հանձնաժողովն աշխատել է COVID-19 համավարակի և ռազմական դրության պայմաններում:

1. COVID–19 համավարակ

Գլոբալ տնտեսության ճգտող ողջ աշխարհը 2020 թվականին բախվել է մի մարտահրավերի, որի հաղթահարման պայքարը դեռ շարունակվում է: COVID-19 համավարակը ստիպեց ազատ շուկայական տնտեսության և կատարյալ մրցակցության ճգտող պետություններին կիրառել սահմանափակումներ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում: Պետությունները հարկադրված որդեգրեցին նոր մոտեցումներ և կանոններ՝ ուղղորդվելով հանրային առողջության առաջնահերթությամբ և ստորադասելով բիզնեսի և տնտեսության շահերը:

Առաջին անհրաժեշտության և սոցիալական նշանակության ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների վարքագծի նկատմամբ ամենօրյա ուսումնասիրություններ ու վերահսկողություն իրականացնելու նպատակով Հանձնաժողովի նախագահի 2020 թվականի մարտի 19-ի թիվ 64-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Շուրջօրյա աշխատանքային խումբն ամենօրյա դիտանցումներ է իրականացրել 111 ապրանքատեսակների գծով 6 առևտրային ցանցերում: Տեղեկատվություն է հավաքագրվել 24 անուն ապրանքախմբերի վերաբերյալ 60 ներմուծող և արտադրող տնտեսավարող սուբյեկտներից: Ախտահանիչ միջոցների, պաշտպանիչ դիմակների, բժշկական սպիրտի և ձեռնոցների մասով տեղեկատվությունը հավաքագրվել է 7 դեղատնային ցանցերից, ինչպես նաև ախտահանիչ միջոցներ արտադրող 4 տնտեսավարող սուբյեկտներից՝ արտադրության ծավալների և իրացման գների վերաբերյալ: ՀՀ մարզպետարանների աջակցությամբ ամենօրյա տեղեկատվություն է հավաքագրվել մարզային խոշոր առևտրային օբյեկտներում իրացվող 35 անուն ապրանքատեսակների իրացման գների և պաշարների մնացորդների վերաբերյալ, որը վերլուծվել է, գնային բարձրացումներ հայտնաբերվելու դեպքում կատարվել են մանրամասն ուսումնասիրություններ, օպերատիվ կարգով տնտեսավարող սուբյեկտներից պահանջվել են հիմնավորումներ և բացատրություններ, իրականացվել են համապատասխան հաշվարկներ, անհրաժեշտության դեպքում՝ կրկնակի դիտանցումներ:

Ֆիզիկական շփումը սահմանափակելու նպատակով Հանձնաժողովը որոշել է բնականոն աշխատանքները և նիստերը կազմակերպել հեռավար, Հանձնաժողովի և քաղաքացիների ու տնտեսավարող սուբյեկտների միջև փաստաթղթաշրջանառութ-

յունն իրականացնել միայն էլեկտրոնային եղանակով:

Հանձնաժողովը մարտի սկզբից ստանում էր մտահոգություններ՝ կապված տնտեսավարող սուբյեկտների կողմից սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների գների հնարավոր բարձրացման, ապրանքային շուկաներում ապրանքների հնարավոր պակասորդի առաջացման հետ: Հանձնաժողովի 2020 թվականի մարտի 17-ի 109-Ա որոշմամբ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին տրվել է զգուշացում՝ ձեռնպահ մնալու իրենց գործունեության ընթացքում այնպիսի գործողություններից և վարքագծից, որոնք կարող են խախտել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթները: Միաժամանակ, Հանձնաժողովը զգուշացրել է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ հայտարարված արտակարգ դրության պայմաններում տնտեսավարող սուբյեկտների կողմից իրավախախտում կատարելու փաստը կարող է դիտարկվել որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք: Հանձնաժողովի հետևողական աշխատանքների արդյունքում հիմնականում հաջողվել է շուկայում ապահովել կայունություն, կանխարգելել տնտեսավարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության օրենսդրության խախտման դրսևորումները (հակամրցակցային համաձայնություններ, գերիշխող դիրքի չարաշահում, այդ թվում՝ արհեստական պակասորդի ստեղծման կամ պահպանման դեպքեր):

Սոցիալական կարևոր նշանակություն ունեցող պարենային (շաքարավազ, կարագ, ձեթ, ալյուր, ձու) և ոչ պարենային (բենզին, դիզելային վառելիք) ապրանքների գնային տատանումները մշտապես գտնվել են Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում, իրականացվել են բազմակողմանի ուսումնասիրություններ մեծածախ և մանրածախ գնային տատանումների հիմնավորվածությունը պարզելու նպատակով, և ուսումնասիրությունների արդյունքները պարբերաբար ներկայացվել են հանրությանը:

Ախտահանիչ միջոցների նկատմամբ աճող պահանջարկը բավարարելու և ապրանքային շուկայի հնարավոր դեֆիցիտը կանխելու նպատակով Հանձնաժողովը բանակցել է բժշկական սպիրտ արտադրող ընկերությունների հետ սպիրտն առաջնահերթության սկզբունքով ախտահանիչ միջոցներ արտադրող ընկերություններին մատակարարելու նպատակով:

Ապրանքների սպառման ծավալները և ընդհանուր ապրանքաշրջանառության դինամիկան պարզելու նպատակով առևտրային ցանցերից պահանջվել է տեղեկատվություն օրական կտրվածքով ապրանքների իրացման ծավալների և գների վերաբերյալ: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ COVID-19-ով վարակակիրների թվի կտրուկ աճի օրերին էականորեն աճել են նաև ապրանքների իրացման ծավալները: Հանձնաժողովը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով այն մասին, որ մեծաքանակ գնումներ կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ մշտական կապի մեջ է հանրապետության խոշոր առևտրային ցանցերի, առավել խոշոր մատակարարների, խոշոր արտադրողների, ներմուծողների հետ և պարբերաբար իրականացնում է պարենային, ոչ պարենային ապրանքների պաշարների ու գների մշտադիտարկումներ, հաշվարկում է պարենային անվտանգության ցուցանիշը: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովն իրականացրել է աշխատանքներ մի շարք լայն սպառման ապրանքների և հումքի մատակարար ընկերությունների լոգիստիկ հարցերին առնչվող խնդիրների լուծման ուղղությամբ:

Հանձնաժողովն առաջին անհրաժեշտության ապրանքների, ձեռնոցների, պաշտպանիչ դիմակների, ախտահանիչ միջոցների գների և պակասորդի ճշգրտման նպատակով ստացած տվյալները համադրել է նախորդ տվյալների հետ և խնդիրներ նկատելիս իրականացրել է խորը ուսումնասիրություններ:

Պաշտպանիչ դիմակների գնի բարձրացման պատճառների վերաբերյալ ուսումնասիրություն

Պաշտպանիչ դիմակների իրացման գների հիմնավորվածությունը պարզելու նպատակով Հանձնաժողովը 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 195-Ա որոշմամբ գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և (կամ) հնարավոր հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ հարուցել է վարչական վարույթ պաշտպանիչ դիմակների արտադրությամբ և իրացմամբ զբաղվող մի շարք ընկերությունների նկատմամբ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում դիտարկվել են 2019 թվականի դեկտեմբեր և 2020 թվականի հունվար-մայիս ամիսներին դիմակների մեծածախ և մանրածախ ձեռքբերման և իրացման գները, ուսումնասիրվել են խոշոր ընկերությունների տեղական արտադրության պաշտպանիչ դիմակների գինը ձևավորող բաղադրիչները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պաշտպանիչ դիմակների արտադրությամբ և իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների կողմից 2019 թվականի դեկտեմբերին 2020 թվականի մայիսի համեմատ վերադիրների ավելացում տեղի չի ունեցել: Տեղական արտադրության պաշտպանիչ դիմակների բարձր գները պայմանավորված են եղել միջազգային շուկաներում հումք-նյութերի գների, իսկ ներմուծված պաշտպանիչ դիմակների գների բարձրացումը՝ դրանց պահանջարկի մեծացման արդյունքում միջազգային գների բարձրացմամբ:

Պաշտպանիչ դիմակները սպառողների համար ավելի հասանելի և մատչելի դարձնելու նպատակով Հանձնաժողո-

վը համագործակցել է պաշտպանիչ դիմակ արտադրող տեղական ընկերության և ավտոմատ ապարատների միջոցով վաճառք իրականացնող ընկերության հետ, որի արդյունքում պաշտպանիչ դիմակները վաճառվել են նաև ավտոմատ ապարատների միջոցով:

Բժշկական ձեռնոցների գնի բարձրացման պատճառների վերաբերյալ ուսումնասիրություն

Հանձնաժողովը 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 196-Ա որոշմամբ գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և (կամ) հնարավոր հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ հարուցել է վարչական վարույթ լատեքսից ու նետրիլից պաշտպանիչ և բժշկական ձեռնոցների իրացմամբ զբաղվող մի շարք ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի շրջանակներում դիտարկել է 2019 թվականի դեկտեմբեր և 2020 թվականի հունվար-մայիս ամիսներին ձեռնոցների մեծածախ և մանրածախ ոլորտներում ձեռքբերման և իրացման գները:

Իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում Հանձնաժողովն ամրագրել է, որ ձեռնոցների գների էական բարձրացումներ հիմնականում տեղի չեն ունեցել, իսկ մասնավոր դեպքերում ձեռնոցների գների բարձրացումը պայմանավորված է եղել տնտեսական գործոններով, մասնավորապես.

- ձեռնոցների ձեռքբերման գների բարձրացմամբ,
- լրացուցիչ ծախսերի ավելացմամբ, որոնք պայմանավորված են կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և դրան ուղղված միջոցառումների կազմակերպման և իրականացման գործընթացներով (մասնավորապես, տարածքների ախտահանման ծախսեր, լրացուցիչ տրանսպորտային ծախսեր և այլն):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից 2019 թվականի դեկտեմբերին 2020 թվականի մայիսի համեմատ վաճառքի վերադիրների էական ավելացում տեղի չի ունեցել, սակայն տեղի է ունեցել ձեռնոցների բարձր գներով ձեռքբերում (ներմուծում և (կամ) ձեռքբերում), որը հանգեցրել է ձեռնոցները վերջնական սպառողին բարձր գներով իրացնելուն:

COVID-19 ախտորոշման նպատակով կիրառվող թեստերի ներմուծումների վերաբերյալ ուսումնասիրություն

Հաշվի առնելով արտակարգ դրության ընթացքում նոր կորոնավիրուսային հիվանդության վարակակիրների թվի աճի բարձր տեմպը և դրա հետևանքով COVID-19 ախտորոշման նպատակով լաբորատոր հետազոտությունների իրականացման պահանջարկի մեծացումը՝ Հանձնաժողովն ուսումնասիրել է հիվանդության ախտորոշման նպատակով կիրառվող թեստերի (ԱՏԳ ԱԱ 3002 15, ԱՏԳ ԱԱ 3002 19 և ԱՏԳ ԱԱ 3822 ծածկագրերին դասվող ապրանքներ) ներմուծման գործընթացները:

Մասնավորապես, Պետական եկամուտների կոմիտեն Հանձնաժողովին տրամադրել է տեղեկատվություն 2020 թվականի մարտից մինչև սեպտեմբեր (ներառյալ) ընկած ժամանակահատվածում վերոնշյալ ապրանքների ներմուծման ծավալների և արժեք-

ների, այդ ապրանքների ներմուծման աշխարհագրության, նշված ապրանքների ներմուծում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կազմի մասին:

Հաշվի առնելով իրականացված ուսումնասիրության արդյունքները՝ Հանձնաժողովում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում COVID-19 ախտորոշման թեստավորման ծառայություն մատուցելու լիցենզիա ունեցող 9 լաբորատորիաների ղեկավար կազմի հետ, որի շրջանակներում քննարկվել է թեստավորման նկատմամբ բնակչության շրջանում ձևավորված մեծ պահանջարկի և ծառայության մատուցման գնի հարցը:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում լաբորատորիաները մատուցվող ծառայության գինը 20 000-30 000 ՀՀ դրամից նվազեցրել են 25 տոկոսով, և այն կազմել է առավելագույնը 15 000 ՀՀ դրամ:

Նարնջի, մանդարինի, կիվիի, կիտրոնի և կոճապղպեղի գնե–րի բարձրացման պատճառների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն

Հանձնաժողովը 2020 թվականի փետրվարի 1-ից մինչև ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածում նարնջի, մանդարինի, կիվիի, կիտրոնի և կոճապղպեղի (այսուհետ՝ ապրանքներ) գնային տատանումներով և դրանց նկատմամբ սպառողների պահանջարկով պայմանավորված իրականացրել է ուսումնասիրություն **(տես էջ 21)**:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը տեղեկատվություն էր պահանջել ապրանքների շրջանառության ոլորտում ձեռք բերող, ինչպես նաև մանրածախ և մեծածախ իրացման գործընթացներ իրականացնող մի շարք տնտեսավարող սուբյեկտներից:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ապրանքների մանրածախ և մեծածախ իրացման ոլորտներում մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել Օրենքի հնարավոր խախտումների, մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման և (կամ) հնարավոր հակամրցակցային համաձայնության (չհիմնավորված կամ խտրական գների սահմանման և կիրառման, գների չհիմնավորված փոփոխությունների կամ պահպանման և այլն) հատկանիշներ:

Տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են Օրենքի հնարավոր խախտման հետևյալ դրսևորումները.

- առևտրային ցանցերի կողմից ապրանքների իրացման գներն ամբողջ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարբերաբար փոփոխվել են, ինչը որոշ դեպքերում համարժեք չի եղել վերջիններիս կողմից դրանց ձեռքբերման գների տատանումներին,
- միջնորդներն առևտրային ցանցերին ապրանքները մատակարարել են զգալի տատանվող գներով, չնայած ձեռքբերվող ապրանքների գներն էականորեն չեն փոխվել (որոշ դեպքերում առհասարակ չեն ենթարկվել փոփոխության),

- ներմուծողների կողմից առևտրային ցանցերին մատակարարված ապրանքների իրացման գները պարբերաբար տատանվել են, ինչը համարժեք չի եղել վերջիններիս կողմից ապրանքների ձեռքբերման գների տատանումներին,
- միջնորդները և ներմուծում իրականացնող որոշ տնտեսավարող սուբյեկտներ որոշ ապրանքներ նույն օրը տարբեր առևտրային ցանցերին մատակարարել են տարբեր գներով:

Վերոնշյալ գնային քաղաքականությունների արդյունքում նկատվել են ապրանքների իրացման գների զգալի բարձրացումներ: Մասնավորապես, նարնջի գինը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջինում 534 դրամից դարձել է միջինում 828 դրամ, մանդարինի գինը՝ միջինում 659 դրամից միջինում 986 դրամ, կիվիի գինը՝ միջինում 667 դրամից միջինում 1 652 դրամ, կիտրոնի գինը՝ միջինում 826 դրամից միջինում 1 619 դրամ, կոճապղպեղի գինը՝ միջինում 2 709 դրամից միջինում 14 476 դրամ:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Հանձնաժողովը 2020 թվականի մայիսի 23-ին հարուցել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի շրջանակներում պարզվել է, որ ապրանքների իրացմամբ զբաղվող 3 տնտեսավարող սուբյեկտ «Կիվի, կիտրոն, նարինջ և մանդարին» ապրանքային շուկայում ծավալած գործունեության շրջանակներում հակամրցակցային համաձայնության հետևանքով հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բարձրացրել է նշված ապրանքների գները: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը նշված 3 տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ կիրառել է 39 631 703 ՀՀ դրամ տուգանք:

2. Ռավմական դրություն

Հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ լայն սպառման ապրանքների (պարենային և ոչ պարենային) իրացման պայմանների՝ ներառյալ գների, ինչպես նաև դրանց պաշարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ անհրաժեշտ լրացուցիչ գործառույթների իրականացման անհրաժեշտությունը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը, ստեղծել է աշխատանքային խմբեր, որոնք աշխատել են 24/7 ռեժիմով՝ հերթափոխով:

2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած Հանձնաժողովը խոշոր առևտրային ցանցերում՝ «ՍԱՍ», «Էվրիկա», «Երևան Սիթի», «Նոր Զովք» առևտրի կետերում, իրականացրել է ամենօրյա մշտադիտարկում շուրջ 31 ապրանքային խմբի գծով, որն իր մեջ ներառում է շուրջ 106 ապրանքատեսակ: Հանձնաժողովը դիտարկել է նշված ապրանքների մանրածախ իրացման գները, համադրել նախորդ օրվա տվյալների հետ և գնային բարձրացումներ արձանագրելու դեպքում առանձին ապրանքատեսակների գծով իրականացրել ուսումնասիրություններ:

Հանձնաժողովը դիմել է ներմուծում և արտադրություն իրականացնող շուրջ 32 խոշոր ընկերությունների, ամենօրյա կտրվածքով հավաքագրել է շուրջ 20 ապրանքային խմբի 129 ապրանքատեսակի մեծածախ իրացման գների և պաշարների մնացորդ-

ների վերաբերյալ տեղեկատվություն, որը վերլուծվել է, և գնային բարձրացումներ հայտնաբերելու դեպքում իրականացվել են մանրամասն ուսումնասիրություններ, օպերատիվ կարգով տնտեսավարող սուբյեկտներից պահանջվել են հիմնավորումներ և բացատրություններ, իրականացվել են համապատասխան հաշվարկներ, անհրաժեշտության դեպքում՝ կրկնակի դիտանցումներ:

Մշտադիտարկումների ընթացքում արձանագրված գնային բարձրացումների պատճառների բացահայտման, ինչպես նաև այդ թանկացումների հիմնավորվածությունը պարզելու և գնահատելու նպատակով Հանձնաժողովն իրականացրել է բազմակողմանի ուսումնասիրություն, որի շրջանակներում տեղեկատվություն է պահանջվել խոշոր առևտրային ցանցերից, այդ ապրանքատեսակների առավել խոշոր մատակարարներից, խոշոր արտադրողներից, ներմուծողներից, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեից:

Գնային բարձրացումների հիմնավորվածությունը պարզելու նպատակով Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև ներմուծվող ապրանքների միջազգային գների դինամիկան, ինչպես նաև դրանց վճարման արժույթի փոխարժեքի տատանումները: Պարզվել է, որ գնային բարձրացումներ ունեցող ներմուծվող ապրանքների վճարման հիմնական արժույթը ԱՄՆ դոլարն է, որը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին արժևորվել է ՀՀ դրամի նկատմամբ (համաձայն Կենտրոնական բանկի տվյալների):

Դրամի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ իր ազդեցությունն է ունեցել հիմնականում ԱՄՆ դոլարով ներմուծվող բոլոր տեսակի ապրանքների գների բարձրացումների վրա:

Դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ (սեպտեմբեր-հոկտեմբեր 2020)



Դրամի արժեզրկումը կազմել է շուրջ 1,2% (սեպտեմբերի առաջին տասնօրյակի միջին փոխարժեքի և հոկտեմբերի 20-30-ը միջին փոխարժեքի համեմատության դեպքում):

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրություններն ուղղված են եղել սոցիալական կարևոր նշանակություն ունեցող պարենային և ոչ պարենային ապրանքների գնային բարձրացումների պատճառների բացահայտմանը և դրանց հիմնավորվածության գնահատմանը:

Շաքարավազի գնի բարձրացման պատճառների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն

Հանձնաժողովը մշտադիտարկումների արդյունքում արձանագրել է, որ որոշ խոշոր առևտրային ցանցերին պատկանող առևտրի կետերում տեղի է ունեցել կիլոգրամով

(չփաթեթավորված) իրացվող շաքարավազի իրացման գնի բարձրացում 6-7 տոկոսով:

Իրացման գների փոփոխությունների հիմնավորվածությունը և համաչափությունը գնահատելու նպատակով Հանձնաժողովը համապատասխան տեղեկատվություն է պահանջել խոշոր առևտրային ցանցերին շաքարավազ մատակարարող և ներմուծող 3 տնտեսավարող սուբյեկտներից: Ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ այս ապրանքատեսակի շահութաբերությունն առևտրային ցանցերում մնացել է գրեթե անփոփոխ, և շաքարավազի գնի բարձրացումը պայմանավորված է մատակարար ընկերությունների կողմից շաքարավազի իրացման գնի բարձրացմամբ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է մատակարար ընկերությունների կողմից շաքարավազի ձեռքբերման գների դինամիկան գների բարձրացման հիմնավորվածությունը պարզելու նպատակով: Արձանագրել է, որ ռազմական դրության ժամանակ շաքարավազի գնի բարձրացումները պայմանավորված են եղել մատակարար ընկերությունների կողմից շաքարավազի ներմուծման և ՀՀ-ում արտադրվող շաքարավազի ձեռքբերման գների բարձրացմամբ: Շաքարավազի միջազգային գների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրա իրացման գների բարձրացում է արձանագրվել նաև ՀՀ ներմուծվող շաքարավազի հիմնական արտահանման երկիր հանդիսացող Ռուսաստանի Դաշնությունում, Լոնդոնի միջազգային բորսայում (Սպիտակ շաքարի գնի ինդեքս):

Արդյունքում արձանագրվել է, որ շաքարավազի իրացման գնի բարձրացումն առավելապես պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով, մասնավորապես՝ ներմուծվող շաքարավազի ձեռքբերման գնի բարձրացմամբ, դրամի արժեզրկմամբ, միջազգային գների բարձրացմամբ և այլն:

Կարագի գնի բարձրացման պատճառների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ խոշոր առևտրային ցանցերին պատկանող առևտրի կետերում տեղի է ունեցել կիլոգրամով իրացվող «Նորզելանդական» և «Անքոր» տեսակների կարագի իրացման գնի բարձրացում՝ մինչև 1 տոկոս:

Իրացման գների փոփոխությունների հիմնավորվածությունը և համաչափությունը գնահատելու նպատակով Հանձնաժողովն առևտրային ցանցերից պահանջել է կարագի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթեր: Միաժամանակ, համապատասխան տեղեկատվությունը պահանջվել է խոշոր առևտրային ցանցերին կարագ մատակարարող և կարագի առավել խոշոր ներմուծման ծավալներ ունեցող տնտեսավարող սուբյեկտից: Ներկայացված տեղեկատվության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ առևտրային ցանցերում կարագի գնի բարձրացումը պայմանավորված է մատակարար ընկերության կողմից կարագի իրացման գնի բարձրացմամբ, որն էլ իր հերթին բխում է կարագի ներմուծման գների բարձրացումից:

Միաժամանակ, Հանձնաժողովն ուսումնասիրել է կարագի միջազգային գները:

Հարկ է նաև նշել, որ սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում կարագի միջազգային բորսայական գների որոշակի բարձրացում է արձանագրվել:

Տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզվել է, որ կարագի իրացման գնի բարձրացումը մի շարք օբյեկտիվ գործոնների, մասնավորապես՝ կարագի ներմուծման և միջազգային գների բարձրացման, դրամի արժեզրկման և այլն, հետևանք է:

Ձեթի գնի բարձրացման պատճառների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն

Հանձնաժողովը մշտադիտարկումների արդյունքում արձանագրել էր, որ որոշ խոշոր առևտրային ցանցերին պատկանող առևտրի օբյեկտներում տեղի է ունեցել արևածաղկի և եգիպտացորենի ձեթի որոշ տեսակների գների բարձրացում՝ 2-ից 7 տոկոսով:

Իրացման գների փոփոխությունների հիմնավորվածությունը և համաչափությունը գնահատելու նպատակով Հանձնաժողովն առևտրային ցանցերից պահանջել է ձեթի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերը՝ միաժամանակ համապատասխան տեղեկատվությունը պահանջելով խոշոր առևտրային ցանցերին ձեթ մատակարարող և ներմուծող 2 տնտեսավարող սուբյեկտից:

Ներկայացված տեղեկատվության վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ առևտրային ցանցերում ձեթի գնի բարձրացումը պայմանավորված է մատակարար ընկերությունների կողմից ձեթի իրացման գնի բարձրացմամբ: Վերջինս էլ իր հերթին պայմանավորված է ձեթի ներմուծման

գների բարձրացմամբ և ձեթի միջազգային գների էական աճով:

Հանձնաժողովն ուսումնասիրել է ձեթի միջազգային գների դինամիկան և արտահանող հիմնական երկրներում ձեթի գների բարձրացման պատճառները:

2020 թվականի հոկտեմբերի համեմատությամբ նոյեմբերին 1 տոննա արևածաղկի ձեթի գինը բարձրացել է 200 ԱՄՆ դոլարով, իսկ փետրվարի համեմատությամբ՝ 400-470 ԱՄՆ դոլարով:

Միաժամանակ, արտահանող հիմնական երկրներում՝ Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում, COVID-19-ի սահմանափակումների արդյունքում արևածաղկի բերքահավաք սահմանված քանակով չի իրականացվել և պահեստավորվել, առաջնահերթ համալրվել են սեփական երկրի ձեթի պաշարները, ռուբլու կուրսի արժեզրկումը հանգեցրել է արտահանվող արևածաղկի պահանջարկի կտրուկ բարձրացմանը (նախորդ տարվա համեմատությամբ շուրջ 4 անգամ), որն էլ իր հերթին հանգեցրել է նշված երկրներում ձեթի գների բարձրացմանը:

Վերոգրյալ գործոնների համադրության և վերլուծության արդյունքում պարզվել է, որ ձեթի իրացման գնի բարձրացումն առավելապես պայմանավորված է ներմուծման և միջազգային գների բարձրացմամբ:

Ալյուրի գնի բարձրացման պատճառների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն



Հանձնաժողովը մշտադիտարկումների արդյունքում արձանագրել էր, որ որոշ խոշոր առևտրային ցանցերին պատկանող առևտրի կետերում 1 կիլոգրամ ալյուրի իրացման գինը բարձրացել է շուրջ 7 տոկոսով:

Իրացման գների փոփոխությունների հիմնավորվածությունը և համաչափությունը գնահատելու նպատակով Հանձնաժողովն առևտրային ցանցերից պահանջել է ալյուրի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթեր և պարզել, որ խոշոր առևտրային ցանցերում ալյուրի գնի բարձրացումը պայմանավորված է մատարարարների կողմից գների բարձրացմամբ:

Ալյուրի արտադրությամբ զբաղվող 2 խոշոր տնտեսավարող սուբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ցորենի ձեռքբերման գներն էական աճել են: Մասնավորապես, 2020 թվականի օգոստոսի սկզբին տնտեսավարող սուբյեկտները Ռուսաստանից ցորեն են ձեռք բերել 1 կիլոգրամի դիմաց վճարելով 84 ՀՀ դրամ, իսկ նոյեմբերին՝ շուրջ 104 ՀՀ դրամ (նշված ժամանակահատվածում ցորենի ներմուծման գինը բարձրացել է շուրջ 24 տոկոսով): Ցորենի գնի բարձրացումը նպաստել է ալյուրի իրացման գնի բարձրացմանը, քանի որ արտադրվող ալյուրի ինքնարժեքի շուրջ 80 տոկոսը կազմում է ցորենի գինը:

Հանձնաժողովը Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում արձանագրել է, որ տնտեսավարող սուբյեկտները ռուսական ծագման ցորեն ՀՀ ներմուծում են ինչպես Ռուսաստանի Դաշնությունից, այնպես էլ Վրաստանից, որի դիմաց վճարում են հիմնականում ԱՄՆ դոլարով: ՀՀ դրամի արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ ազդել է ալյուրի ներմուծման գների բարձրացման վրա:

Ձվի գնի բարձրացման պատճառների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն



Խոշոր առևտրային ցանցերին պատկանող առևտրի կետերում հավի ձվի իրացման գների բարձրացման հիմնավորվածությունը և համաչափությունը գնահատելու նպատակով Հանձնաժողովն առևտրային ցանցերից պահանջել է ձվի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթեր: Իրականացված ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ առևտրային ցանցերում հավի ձվի գնի բարձրացումը պայմանավորված է այդ տնտեսավարող սուբյեկտների կողմից ձվի ձեռքբերման գների բարձրացմամբ:

Հավի ձվի արտադրությամբ զբաղվող 4 խոշոր տնտեսավարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ձվի իրացման գների բարձրացումը պայմանավորված է արտադրվող ձվի ինքնարժեքի, մասնավորապես՝ կերի ձեռքբերման գների բարձրացմամբ: Հավի ձվի ինքնարժեքի ձևավորման մեջ էական տեսակարար կշիռ ունեն որոշակի կերային բաղադրիչներ, մասնավորապես՝ ցորենը, եգիպտացորենը, արևածաղկի և սոյայի քուսպերը:



Հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 20-ի «Մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին»

թիվ 38-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում ուսումնասիրվել է հավի ձու արտադրող 7 տնտեսավարող սուբյեկտների կողմից հավի ձվի գնի նվազեցման տնտեսական հիմնավորվածությունը **(տես էջ 18)**:

Ծաղիկների շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ

Ուսումնասիրության շրջանակներում դիտանցումներ են իրականացվել Երևան քաղաքում գործող ծաղիկի 2 մեծածախ (Հրազդանի շուկա և Չարբախի շուկա) և շուրջ 22 մանրածախ վաճառակետերում: Դիտանցումների արդյունքում պարզվել է, որ թանկացել են հատկապես ծաղկեպսակների համար կիրառվող ծաղիկների իրացման գները: Մեծածախ իրացում իրականացնող ջերմոցային տնտեսությունների սեփականատերերը որպես իրացման գնի բարձրացման հիմնավորում ներկայացրել են շուկայում ծաղկի պակասորդի և ջերմոցներում որոշակի ծաղկատեսակների համար ջերմոցների ջեռուցմամբ պայմանավորված ծախսերի ավելացումը: Արձանագրվել է նաև Հանձնաժողովի աշխատակիցների ներկայությամբ վաճառակետերում բանավոր նշվող, սակայն նրանց բացակայության դեպքում փաստացի կիրառվող գների էական տարբերություն: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը դիմել է նշված տնտեսավարող սուբյեկտներին՝ առաջարկելով յուրաքանչյուր տեսակ ծաղկի համար սահմանել և գնորդին տեսանելի վայրերում փակցնել գնապիտակներ՝ նշելով իրացման առավելագույն գինը: Միաժամանակ, Հանձնաժողովում աշխատանքային քննարկում է կազմակերպվել ծաղիկ արտահանող մի շարք տնտեսավարող սուբյեկտների հետ, ինչի արդյունքում արտահանում իրականացնող ընկերությունները պատրաստակամություն են հայտնել ներքին շուկայի պահանջարկը բավարարելու նպատակով էապես կրճատել արտահանման ծավալները:

Հանձնաժողովի կողմից ձեռնարկված և իրականացված միջոցառումների արդյունքում շուկայում ծաղիկների գները նվազել են 2-2.5, իսկ որոշ տեսակների գծով՝ մինչև 4 անգամ:

Զինվորական համազգեստի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ

Հանձնաժողովը, հաշվի առնելով զինվորական համազգեստի մեծ պահանջարկը, ուսումնասիրություն է իրականացրել զինվորական համազգեստի շրջանառության ոլորտում:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովն իրականացրել է դիտանցումներ (բազմակի այցեր) զինվորական համազգեստի իրացման ոլորտում մասնագիտացված 7 տնտեսավարող սուբյեկտների մոտ:

Դիտանցումների արդյունքում արձանագրվել են տվյալ պահի դրությամբ առևտրի կետերում առկա տեսականու իրացման գները: Ընդ որում՝ տեղեկատվությունը մշակվել է զինվորական համազգեստի 4 ենթախմբի համար՝ ամառային համազգեստ շարքային կազմի, ամառային համազգեստ սպայական կազմի, ձմեռային համազգեստ շարքային կազմի, ձմեռային համազգեստ սպայական կազմի համար: Դիտանցումների արդյունքում դիտարկվել են նաև վաճառակետերում առկա առաջին անհրաժեշ-

տության զինվորական պարագաների իրացման գները:

Միաժամանակ, Հանձնաժողովը 2020 թվականի հոկտեմբերի 14-ին գրություններով դիմել է վերոնշյալ տնտեսավարող սուբյեկտներին՝ ստանալու տեղեկատվություն 2020 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև նշված գրությունները ստանալու օրը ներառյալ զինվորական համազգեստի և զինվորական այլ պարագաների մանրածախ իրացման գների վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկված տնտեսավարող սուբյեկտների մի մասը հանդիսանում է նաև արտադրող, Հանձնաժողովը դիտանցումներ է իրականացրել նաև զինվորական համազգեստի արտադրության համար կիրառվող կտորեղենի իրացմամբ զբաղվող 7 տնտեսավարող սուբյեկտների մոտ:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում վերոնշյալ 13 տնտեսավարող սուբյեկտների մոտ զինվորական համազգեստի, զինվորական պարագաների, ինչպես նաև կտորների իրացման գների բարձրացում չի արձանագրվել, իսկ արձանագրված բարձր գները հիմնականում եղել են նախկինում առկա էժան խմբաքանակների սպառման և այդ ժամանակահատվածում ավելի թանկ խմբաքանակի իրացման արդյունքում ստեղծված տպավորության հետևանք:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովն ուսումնասիրության շրջանակներում հրապարակել է զինվորական համազգեստի շրջանառության ոլորտում մասնագիտացված առևտրի կետերի ցանկ՝ նշելով վերջիններիս անվանումները, գործունեության հասցեները, ինչպես նաև ապրանքատեսականին և իրացման գները:

Բժշկական պարագաներ

Բանակի կարիքների համար անհրաժեշտ դեղերի և բժշկական պարագաների արհեստական դեֆիցիտը շուկայում բացառելու, ինչպես նաև գների տնտեսական հիմնավորվածությունը ճշգրտելու նպատակով ամենօրյա կտրվածքով մեծածախ և մանրածախ շուրջ 18 խոշոր դեղատնային ցանցերից պահանջվել է ներկայացնել տեղեկատվություն վիրակապական նյութերի, բետադինի, նատրիումի քլորիդի, կաթետերների, բեկակալների (շինաների), կպչուն ժապավենի (սանտավիկի) և լարանի (ժգուտի) առկա պաշարների և գների վերաբերյալ: Ներկայացված տվյալների վերաբերյալ ամենօրյա կտրվածքով իրականացվել են հաշվարկներ և վերլուծություններ, խնդրահարույց դեպքեր չեն բացահայտվել:

6. Օրենսդրության վերլուծություն և իրավական ապահովում

1. Օրենսդրական բարեփոխումներ

2020 թվականին Հանձնաժողովը մշակել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը մի կողմից ուղղված է առկա կարգավորումների կատարելագործմանը, բացերի և սողանցքների հաղթահարմանը, մյուս կողմից ՀՀ մրցակցային օրենսդրության՝ Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը ներդաշնակեցմանը: Առկա հիմնախնդիրների լուծման, օրենսդրական բացերի, թերի կարգավորումների հաղթահարման նպատակով մշակվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և շուրջ 20 հարակից օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ծավալուն փաթեթ:

Նախագծերի փաթեթը 2021 թվականի մարտի 3-ին ընդունվել է Ազգային ժողովի երկրորդ ընթերցմամբ, մարտի 30-ին ստորագրվել է ՀՀ նախագահի կողմից: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» նոր օրենքը (այսուհետ՝ Նոր օրենք) ուժի մեջ կմտնի 2021 թվականի մայիսի 31-ին:

Նոր օրենքով, ի թիվս այլնի, նախատեսված են ոլորտը կարգավորող մի շարք նորամուծություններ, որոնք կնպաստեն կանխատեսելի և արդյունավետ վարչարարություն իրականացնելուն՝ ի շահ թե՛ տնտեսավարող սուբյեկտի, թե՛ պետության և թե՛ քաղաքացու: Ընդ որում, Նախագծերի փաթեթի փոփոխությունները մշակելիս Հանձնաժողովն առաջնորդվել է ոչ թե մրցակցությունը խաթարող, սահմանափակող գործունեության համար պատժելու, այլ այն բացառելու առաջնահերթությամբ, մասնավորապես.

Բանակցային ուժեղ դիրքի ինստիտուտի ներդրում.

Այսպես, Նոր օրենքով նախատեսվում է ներդնել բանակցային ուժեղ դիրքի ինստիտուտը: Տնտեսավարող սուբյեկտը կունենա բանակցային ուժեղ դիրք, եթե՝

1) համապատասխան ոլորտում իր էական ազդեցության կամ ենթակառուցվածքի շնորհիվ կարող է ապահովել համապատասխան ապրանքների մուտքն իրացման շուկա, և նրա հետ պայմանագիր կնքած կամ կնքել ցանկացող տնտեսավարող սուբյեկտը չունի հնարավորություն առանց տվյալ տնտեսավարող սուբյեկտի հետ համագործակցության սպառողներին իրացնելու այդ ապրանքները, կամ բացակայում է այլընտրանքի տնտեսական նպատակահարմարությունը, կամ

2) տվյալ տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր կառավարման ներքո են չորս կամ ավելի առևտրային օբյեկտներ (առևտրային ցանց), որոնցում իրացման տարեկան հասույթը գերազանցում է ընդհանուր երեք միլիարդ դրամը, կամ

3) տվյալ տնտեսավարող սուբյեկտին պատկանող կամ նրա կողմից օգտագործվող միևնույն ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործում են չորս կամ ավելի առևտրային օբյեկտներ (առևտրային ցանց), որոնցում իրացման տարեկան հասույթը գերազանցում է ընդհանուր երեք միլիարդ դրամը:

Նոր օրենքով նախատեսվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից բանակցային ուժեղ դիրքի չարաշահման դրսևորումները, և արգելվում է դրա չարաշահումը:

Բանակցային ուժեղ դիրքի ինստիտուտի ներդրումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մանրածախ առևտրի ոլորտում գնորդի/ձեռքբերողի (օրինակ՝ առևտրային ցանցերի) բանակցային ուժեղ դիրքի չարաշահման և առևտրային ցանց-մատակարար փոխհարաբերություններում անբարեխիղճ առևտրային գործողությունների իրականացման արդյունքում տնտեսական մրցակցությունը սահմանափակվում և արգելվում է, իսկ գործող օրենքը չէր նախատեսում բանակցային ուժեղ դիրք ունեցող

տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող չարաշահումներն արգելելու հնարավորություն:

Հարկ է նշել, որ նման իրավակարգավորումները սահմանելու, բանակցային ուժեղ դիրքի չարաշահումը արգելելու անհրաժեշտությունն ամրագրվել են ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (UNCTAD) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) մի շարք զեկույցներում, ինչպես նաև համապատասխան իրավակարգավորումներ նախատեսված են շուրջ 40 զարգացած և զարգացող պետությունների օրենսդրությամբ:

Համակենտրոնացման թույլատրում պարզեցված կարգով.

Գործող օրենքը համակենտրոնացումների գնահատման համար նախատեսում է միասնական կարգ, մինչդեռ որոշ դեպքերում այդ գործընթացը հնարավոր է իրականացնել նաև պարզեցված կարգով՝ խնայելով Հանձնաժողովի և վարույթի մասնակիցների ռեսուրսները. որոշ ապրանքային շուկաների մասնակիցների համակենտրոնացումը շուկայի վրա ազդեցություն չի ենթադրում, հետևաբար խորը ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտություն չկա:

Նոր օրենքով ամրագրվում է, որ խառը համակենտրոնացումը և անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը թույլատրվում է իրականացնել պարզեցված ընթացակարգով, եթե առերևույթ բացակայում են համակենտրոնացումը մերժելու հիմքերը:

Արագացված վարույթի ներդրում.

Համաձայն Նոր օրենքի՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում վարույթով պատասխանողն իրեն վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով:

Արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանձնաժողովը վարույթի արդյունքում որոշումը կայացնում է արագացված վարույթ կիրառելու մասին որոշման ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում՝ առանց վարույթի մասնակիցներին լսման նպատակով նիստ հրավիրելու:

Ավելին, Նոր օրենքով ամրագրվել է, որ արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի 50 տոկոսը: Այսինքն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս նախատեսվում է իրականացնել կանխատեսելի և արդյունավետ վարչարարություն՝ ի շահ թե՛ տնտեսավարող սուբյեկտի, թե՛ պետության և թե՛ քաղաքացու:

Հանձնաժողովի հետ համագործակցության նախատեսում պատասխանատվության միջոցների կիրառման համատեքստում.

Մյուս փոփոխությունը վերաբերում է Հանձնաժողովի որոշման կատարմանը, երբ պատասխանատվության ենթարկված տնտեսավարող սուբյեկտը Հանձնաժողովի որոշմամբ նշանակված տուգանքի 75 տոկոսը վճարում է որոշումն ուժի մեջ մտնելուց

հետո երկամսյա ժամկետում, տուգանքի վճարման պարտականությունը համարվում է պատշաճ կատարված:

Հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելու հիմքերի վերանայում.

Համաձայն Նոր օրենքի՝ Հանձնաժողով ներկայացված դիմումը ինքնին վարույթի հարուցման հիմք չէ: Դրա հիման վրա Հանձնաժողովը սկսում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և առերևույթ խախտման հատկանիշներ նկատելու դեպքում միայն կարող է հարուցել բուն վարույթը:

Հարկ է ընդգծել, որ Նախագծերի փաթեթը ներկայացվել է բոլոր շահագրգիռ մարմիններին և կազմակերպություններին, այդ թվում՝ պետական մարմիններին, Փաստաբանների պալատին, գիտական հանրույթին և հասարակական կազմակերպություններին դիրքորոշում ստանալու նպատակով:

Փաթեթը հրապարակվել է նաև Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Նախագծերի փաթեթը մեծ հետաքրքրություն է առաջացրել շահագրգիռ անձանց, կազմակերպությունների և պետական մարմինների շրջանում: Դրա մասին է վկայում փաթեթի վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտարկումներն ամփոփող շուրջ 500 էջանոց ամփոփաթերթը:

Ներկայացված դիտարկումների արդյունքում լրամշակված փաթեթը ներկայացվել է Եվրասիական տնտեսական միությանը: Տեղի է ունեցել նաև քննարկում տեսահամաժողովի ձևաչափով Հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում մանրամասն քննարկվել են Նախագծերով ամրագրված կարգավորումները Եվրասիական տնտեսական միության նորմատիվ իրավական բազայի լույսի ներքո:

Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ընդունվելու են մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտեր, ինչի արդյունքում Հանձնաժողովի գործունեությունը կդրվի նոր հիմքերի և նոր որակի վրա, ինչպես նաև կստեղծվեն տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրի և սպառողների շահերի պաշտպանության համար արդյունավետ կառուցակարգեր և ընթացակարգեր:

2. Ուղեցույցների մշակում

Վերջին տարիներին արագ տեմպերով զարգանում և ընդլայնվում է խոշոր առևտրային ցանցերի գործունեությունը: Առևտրային ցանցերի մուտքը մի կողմից դրական ազդեցություն է ունեցել սպառողների շահերի տեսանկյունից՝ բարձրացնելով սպասարկման որակը, ապահովելով ապրանքների պահպանման պայմանները, գնումներ կատարելու համար առավել հաճելի միջավայր, սակայն, մյուս կողմից, հանգեցրել է սպառողական ապրանքների կենտրոնացմանը:

Առևտրային ցանցերի զարգացման առկա տեմպերի պայմաններում ստեղծվել է մի իրավիճակ, երբ առևտրային ցանցերի և մատակարարների միջև գոյություն ունեցող բանակցային դիրքերի անհամաչափությունն առաջ է բերում այնպիսի երևույթներ,

ինչպիսիք են առևտրային ցանցերի կողմից մատակարարների ընտրության հարցում խտրական մոտեցումները, մրցակցության պայմանների խաթարումը, շուկայից միջին և փոքր բիզնեսի դուրսմղումը, նոր տնտեսավարող սուբյեկտների մուտքի սահմանափակումը, գների անհիմն տատանումները, ինչպես նաև հավասար մրցակցային պայմանների այլ խախտումներ: Այլ կերպ ասած, շուկայավարման առկա վիճակն իր մեջ ռիսկեր է պարունակում խաթարելու տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել հավասարակշռելու առևտրային ցանցերի և մատակարարների շահերը, զսպելու հնարավոր ռիսկերը և ապահովելու բարեխիղճ, արդար և մրցակցային միջավայր:

Պատահական չէ, որ վերոնշյալ ռիսկերի լուծման նպատակով ամբողջ աշխարհում լայն տարածում է գտել խորհրդատվական բնույթի կանոնակարգերի (Ռուսաստանի Դաշնություն) կամ նորմատիվ բնույթի իրավական ակտերի (Լիտվա, Սլովակիա, Հունգարիա, Ավստրալիա և այլն) մշակումը:

Մշակված ուղեցույցը քննարկվել է առևտրային ցանցերի և մատակարարում իրականացնող խոշոր, միջին և փոքր տնտեսավարող սուբյեկտների հետ, որոնց կողմից ներկայացված առաջարկությունները և դիտարկումները քննարկվել և ներառվել են ուղեցույցում:

Ուղեցույցը Հանձնաժողովի կողմից հաստատվել և հրապարակվել է 2021 թվականի մարտի 23-ին:

Վիճակագրական տվյալներ Հանձնաժողովի կողմից դատական գործերի վերաբերյալ

2020թ. ընթացքում սկսված դատական գործեր

28

31.12.2019 թ. դրությամբ ընթացիկ դատական գործեր

23

վարչական	*13*
վերաքննիչ	*8*
վճռաբեկ	*2*

31.12.2020թ. դրությամբ ընթացիկ դատական գործեր

40

վարչական	*31*
վերաքննիչ	*6*
վճռաբեկ	*3*

2020 թվականի ընթացքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ավարտված դատական գործեր

11

մնացել են օրինական ուժի մեջ	*7*
ամբողջությամբ անվավեր են ճանաչվել	*2*
մասնակի անվավեր են ճանաչվել	*2*

7. Մրցակցային վիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ոչ միայն բացահայտում է տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման դեպքերը և օրենքը խախտելու համար պատասխանատվության է ենթարկում տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց, այլև վերացնում է բացահայտված խնդիրները և կանխարգելում հետագա խախտումները: Որդեգրելով «չվնասելու սկզբունքը» և նախապատվություն տալով առավելապես կանխարգելիչ մեթոդների կիրառմանը՝ Հանձնաժողովը պարբերաբար մրցակցային վիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ է ներկայացնում համապատասխան մարմիններին և տնտեսավարող սուբյեկտներին:

2020 թվականի առավել ուշագրավ առաջարկներն են.

1. Արտակարգ իրավիճակների նախարարության և «Սօս Սիսթեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ Հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 10-ի թիվ 251-Ա որոշում

Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում արձանագրվել էր, որ ԱԻՆ-ի և «Սօս Սիսթեմս» ընկերության միջև 2012 թվականին կնքված պայմանագրով վերջինիս տրվել էր միասնական հսկողական համալիր համակարգի ձեռքբերման, շահագործման և պայմանագրի շրջանակներում այլ ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք: Գործընկեր տնտեսավարող սուբյեկտին մրցակցային եղանակով չընտրելու և «Սօս Սիսթեմս» ընկերությանը բացառիկ իրավունք տալու արդյունքում սահմանափակվել էր այլ տնտեսավարող սուբյեկտների կողմից վերոնշյալ ծառայությունների մատուցման հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը 2020 թվականի հունիսի 10-ի թիվ 251-Ա որոշմամբ ԱԻՆ-ին հանձնարարել էր տնտեսավարող սուբյեկտների համար ապահովել միասնական հսկողական համալիր համակարգում ծառայություններ մատուցելու գործընթացին հասանելիությունը մրցակցային պայմաններով: Նշվածի կատարման նպատակով ԱԻՆ-ի կողմից մշակվել և Հանձնաժողովի դիրքորոշմանն է ներկայացվել պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի նախագիծ, ինչի իրագործման նպատակով ներկայումս իրականացվում են համապատասխան աշխատանքներ:

2. ««Նոր սերնդի դպրոց» հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Ալոյանի կողմից 2020 թվականի հունիսի 5-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճելու և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կատարելագործման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելու մասին» Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 325-Ա որոշում

Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում արձանագրվել է, որ հանրակրթական դպրոցների համար նախատեսված էլեկտրոնային մատյաններում առկա տեղեկություններն օգտագործելու միջոցով հնարավոր է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, եթե այդ գործունեությունը ներառված չէ վարչական ռեգիստրների վարման և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կրթական գործընթացներում:

Միաժամանակ պարզվել է, որ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ելնելով իր գործառույթներից, արդեն իսկ տիրապետում է էլեկտրոնային մատյաններում առկա անհրաժեշտ տեղեկություններին և ձեռնարկատիրական գործունեության իրականացման դեպքում այլ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ կարող է ունենալ մրցակցային առավելություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն առաջարկել է ընձեռել հավասար հնարավորություններ բոլոր տնտեսավարող սուբյեկտների, այդ թվում՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համար էլեկտրոնային մատյաններում ներառվող տեղեկությունները ստանալու գործընթացում, եթե այդ տեղեկությունները օգտագործվեն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով: Միաժամանակ, առաջարկվել է տարանջատել այդ ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու սահմանները և պայմանները վարչական ռեգիստրների վարման գործառույթի և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կրթական գործընթացում ներառվող գործունեության իրականացումից:

3. «Հիբրիդ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 337-Ա որոշում

«Վի Էմ Տելեպրոջեքթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ» Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 366-Ա որոշում

Հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման ոլորտում Հանձնաժողովի իրականացրած վարչական վարույթների արդյունքում արձանագրվել է, որ առկա են որոշ խնդիրներ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցության վրա: Բացահայտված խնդիրների լուծման կապակցությամբ Հանձնաժողովը Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը ներկայացրել է համապատասխան առաջարկություններ: Մասնավորապես.

- Արձանագրվել են դեպքեր, երբ միևնույն տնտեսավարող սուբյեկտը միաժամանակ հանդիսանում է որևէ հեռուստաալիքի դիստրիբյուտոր և վերահեռարձակող, ինչի հետևանքով մրցակցային առավելություն է ձեռք բերում այլ օպերատորների նկատմամբ: Նշված հանգամանքը նաև խնդիրներ է ստեղծում հակամրցակցային գործողություններին հակազդելու և կանխարգելելու տեսանկյունից, քանի որ խոչընդոտում է բացահայտել, գնահատել և կանխարգելել տվյալ դիստրիբյուտորի վարքագիծը խտրական դրսևորումների, մասնավորապես իր՝ որպես օպերատորի և այլ օպերատորների նկատմամբ հեռուստաալիքների իրացման գները և այլ պայմանները սահմանելու գործընթացում: Միաժամանակ

այս հանգամանքը կարող է խնդիրներ առաջացնել այն առումով, որ օպերատորները ստիպված են իրենց բաժանորդների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել հեռուստաալիքի դիստրիբյուտորին, որը նաև հանդիսանում է օպերատոր և միևնույն շուկայում փաստացի գործունեություն իրականացնող մրցակից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն առաջարկել է նախատեսել հստակ կառուցակարգեր, որոնցով կբացառվի միևնույն տնտեսավարող սուբյեկտի կողմից հեռուստաալիքի դիստրիբյուցիայի և օպերատորական (վերահեռարձակման) ծառայություններին առնչվող գործընթացների միաժամանակյա իրականացումը:

- Հանձնաժողովն արձանագրել է, որ վերահեռարձակողները դիստրիբյուտորական պայմանագրեր են կնքում հանրային մուլտիպլեքսում ներառված հեռուստաալիքների վերահեռարձակման կամ դրա իրավունքի տրամադրման նպատակով, որի հետևանքով այդ հեռուստաալիքները, որոնք հեռուստադիտողներին հասանելի են նաև անվճար եղանակներով, այլ վերահեռարձակողների և վերջիններիս բաժանորդների համար վճարովի բնույթ են ստանում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն առաջարկել է բացառել հանրային մուլտիպլեքսում ներառված այն բոլոր հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքը վճարովի իրացնելու հանգամանքը, որոնք իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներում հեռուստադիտողներին հասանելի են նաև անվճար եղանակներով, քանի որ տվյալ պարագայում օպերատորները զրկվում են հանրային մուլտիպլեքսով հեռարձակվող հեռուստածրագրերն անխոչընդոտ և անվճար իրենց սպառողներին վերահեռարձակելու հնարավորությունից: «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում արդեն իսկ ներառված են վերոնշյալ 2 խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան կարգավորումներ:
- Դիստրիբյուտորները Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթների շրջանակներում հայտնել են, որ օպերատորներին հեռուստաալիքի տարածման իրավունքները տրամադրելիս հիմնականում հիմք են ընդունում վերջիններիս կողմից իրենց բաժանորդների վերաբերյալ հայտնած տեղեկատվությունը: Ընդ որում, վերոնշյալ տեղեկատվությունը դիստրիբյուտորներին տրամադրվում է բացառապես օպերատորների կողմից, և դիստրիբյուտորները այդ տեղեկատվության հավաստիությունը ստուգելու որևէ հնարավորություն չունեն, քանի որ այն պարտադիր հրապարակման ենթակա չէ, ներառված չէ որևէ հաշվետվության մեջ և որևէ պետական մարմին, նույնիսկ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը չի տիրապետում այդ տեղեկատվությանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն առաջարկել է դիտարկել օպերատորների բաժանորդների քանակի վերաբերյալ տեղեկատվության հաշվառման նպատակահարմարությունը և հնարավորությունը:
- Հանձնաժողովն արձանագրել է, որ դիստրիբյուտորների կողմից օպերատորներին տարբեր հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման ծառայությունների գինը հաճախ սահմանվում է հեռուստաալիքների փաթեթի մասով՝ առանց հստակ նշելու, թե յուրաքանչյուր հեռուստաալիք ինչ գին ունի և որքան է նրա տեսակարար կշիռը այդ հավաքական գնի ձևավորման մեջ: Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ իրավական համապատասխան կառուցակարգերի բացակայությունը կարող է խնդիրներ ստեղծել հակամրցակցային գործողություններին հակազդելու և կանխարգելելու տեսանկյունից՝ Հանձնաժողովն առաջարկել է ներդնել այնպիսի մեխանիզմներ,

որոնց արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքի տրամադրման գնի ձևավորման գործընթացը փաթեթների դեպքում յուրաքանչյուր ալիքի մասով լինի որոշակի և օբյեկտիվ, ինչպես նաև բացառվի տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ խտրական վարքագիծ կիրառելու հնարավորությունը:

4. Աղի շրջանառության ոլորտի ուսումնասիրության արդյունքում ՀՀ կառավարությանը ներկայացված առաջարկություններ

2020 թվականին Հանձնաժողովն իրականացրել է աղի շրջանառության ոլորտի ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2019 թվականի օգոստոսի 29-ի դիմումը, որում նշվում է, որ կերակրի աղի շրջանառության ոլորտում առկա են մի շարք խնդիրներ:

Ուսումնասիրության արդյունքներն ամփոփելով՝ Հանձնաժողովն առանձնացրել է հետևյալ խնդիրները.

- Կառավարության թիվ 353-Ն որոշման համաձայն՝ կերակրի չյոդացված աղի ներմուծումը ՀՀ տարածք արգելվում է, սակայն սպառումը հատուկ դեպքերում թույլատրվում է, մասնավորապես, նույն որոշման 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ հանրային սննդի օբյեկտները կամ սննդի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ՀՀ-ում իրացման համար արտադրվող սննդամթերքի մեջ օգտագործել միայն յոդացված կերակրի աղ (բացառությամբ այն դեպքերի, երբ յոդացված կերակրի աղի օգ-

տագործումը չի թույլատրվում արտադրության տեխնոլոգիայով):

- Կառավարության թիվ 353-Ն որոշման ընդունմամբ ի սկզբանե ստեղծվել են անհավասար մրցակցային պայմաններ կերակրի աղ արտադրողների և ներմուծողների միջև. ՀՀ չյոդացված կերակրի աղ ներմուծելը արգելվում է, սակայն արտադրել և իրացնել թույլատրվում է:
- ՀՀ-ում կերակրի չյոդացված աղի պահանջարկը բավարարում է միայն «Ավանի աղի կոմբինատ» ընկերությունը: Կառավարության թիվ 353-Ն որոշմամբ փաստացի սահմանափակվել է մրցակցությունը կերակրի չյոդացված աղի շրջանառության ոլորտում՝ սպառողին զրկելով այլ տնտեսավարող սուբյեկտից չյոդացված աղ գնելու հնարավորությունից:
- Հնարավոր է, որ տնտեսավարող սուբյեկտները արդյունաբերական աղի կամ տեխնիկական աղի անվան տակ իրականում ներմուծեն կերակրի չյոդացված աղ (առանց որևէ դիտավորության կամ դիտավորյալ սահմանային վերահսկողության ընթացակարգերից խուսափելու համար): Կերակրի աղը սահմանային վերահսկողության ենթարկված չլինելու պարագայում կարող է չհամապատասխանել գործող տեխնիկական կանոնակարգերին կամ կարող է պարունակել վնասակար նյութեր (ինչի կապակցությամբ Հանձնաժողովն ունեցել է մի շարք վարույթներ):
- «Կերակրի աղ: Տեխնիկական պայմաններ» ՀՍՏ 239-2005 ստանդարտում տեխնիկական և արդյունաբերական աղը կամ արտադրական նպատակների համար նախատեսված աղը հստակ սահմանված չէ, ինչը դժվարեցնում է ապրանքի ներմուծումից մինչև իրացում վերահսկողությունը:



Հաշվի առնելով ոլորտի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև դիտարկելով վերհանված խնդիրները՝ Հանձնաժողովն առաջարկել է շուկայում առկա անհավասար մրցակցային իրավիճակը շտկելու ուղղությամբ իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Ուժը կորցրած ճանաչել Կառավարության թիվ 353-Ն որոշումը կամ որոշման համապատասխան կետերը, որոնցով սահմանվում են կերակրի չյոդացված աղի ներմուծումների նկատմամբ սահմանափակումներ,
- ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելիս բացառել տնտեսական մրցակցությունը սահմանափակող գործողությունները,
- աղի շրջանառության ոլորտը կարգավորող ակտերում և ընթացակարգերում հստակեցնել աղի հասկացությունները և դասակարգումները,
- խստացնել սահմանային պետական վերահսկողությունը՝ կերակրի աղի նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխան,
- իրականացնել վերահսկողություն ներմուծված չյոդացված կերակրի աղի, արդյունաբերական կամ տեխնիկական աղի իրացման նկատմամբ՝ սննդում դրանց օգտագործումը բացառելու նպատակով:

Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքները տրամադրել է ՀՀ կառավարությանը համապատասխան առաջարկություններով:

8. Միջազգային կազմակերպությունների և մրցակցային մարմինների հետ համագործակցության շրջանակներում իրականացված և նախատեսվող տեխնիկական աջակցության ծրագրեր

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի համատեղ ջանքերով, ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Բյուջե՝ 470 000 եվրո

Ծրագրի տևողությունը՝ 27 ամիս

Հիմնական նպատակները

- ՀՀ մրցակցության օրենսդրությունը միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով առաջարկների տրամադրում,
- Հանձնաժողովի գործունեությանն օժանդակելու նպատակով մեթոդական 3 ուղեցույցների մշակում,
- Հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- վարույթների շրջանակներում իրականացվող ապրանքային շուկաների ուսումնասիրություններին աջակցություն,
- Հանձնաժողովի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու քարոզչությանն ուղղված մեխանիզմների մշակմանն աջակցություն,
- Հանձնաժողովի աշխատակիցների՝ արտերկրի մրցակցային մարմիններ այցերի, կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներին և մրցակցության վերաբերյալ միջազգային միջոցառումներին մասնակցելուն աջակցություն:

Ակնկալվող արդյունքը

- ՀՀ մրցակցության օրենսդրության մոնիթորինգ և համապատասխան առաջարկ-

ների տրամադրում,

- Շուկայի սահմանման, տուգանքների նշանակման մեթոդաբանության և պատասխանատվության միջոցներից ազատման համար դիմումների ներկայացման գործընթացի, չհիմնավորված բարձր և չհիմնավորված ցածր գների հատկորոշման գործընթացի, համակենտրոնացումների տնտեսական գնահատման վերաբերյալ ուղեցույցների մշակում,
- Հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով գերիշխող դիրքի գնահատման, գերիշխող դիրքի չարաշահման գնահատման, ապրանքային շուկաների ուսումնասիրության մեթոդաբանության, հանկարծահաս այցերի (dawn raids) իրականացման ուղղություններով վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- 3 ապրանքային շուկաների ուսումնասիրությունների իրականացում,
- Հանձնաժողովի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու քարոզչությանն ուղղված ռազմավարության մշակում, թիրախային խմբերի հետ սեմինարների կազմակերպում,
- Ավստրիայի, Լիտվայի, Գերմանիայի և Հունաստանի մրցակցային մարմիններ Հանձնաժողովի աշխատակիցների ուսումնական այցերի, միջազգային համաժողովներին Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցություն:

«Համաշխարհային բանկի խումբ ԵՄ գործընկերության առաջարկ. 2017–2020 թվականներին Հայաստանին միասնական աջակցության շրջանակ. տնտեսական կառավարում ծրագիր»

Բյուջե՝ 250 000 եվրո

Ծրագրի տևողությունը՝ մինչև 3 տարի

Ուղղությունները

Հանձնաժողովին աջակցությունը տրամադրվելու է երկու բաղադրիչով՝

1. պետական օժանդակության վերահսկման նպատակով իրավական և տնտեսական աջակցություն հետևյալ ուղղություններով.

- գործիքակազմի վերանայում և պետական օժանդակության վերահսկման գործառույթն իրականացնելու համար առաջարկների ներկայացում,
- պետական օժանդակություն տրամադրող մարմիններից տրամադրված օժանդակության մասին տեղեկատվության հավաքագրում և հրապարակման մեխանիզմների մշակում,
- պետական օժանդակության վերաբերյալ օրենսդրական փաթեթի լրամշակում,
- միջազգային լավագույն փորձի կիրառմամբ պետական օժանդակության գնահատման իրականացում մեկ օրինակով,
- տրամադրվելիք (ex ante) պետական օժանդակության գնահատման վերաբերյալ ուղեցույցի մշակում դրանց հնարավոր ազդեցությունը մրցակցության վրա բա-

ցահայտելու նպատակով,

- թեմատիկ աշխատաժողովների կազմակերպում:

2. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից հակամրցակցային գործողություններին վերաբերող դրույթների կիրարկման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակմանն ու իրականացմանն ուղղված աջակցություն հետևյալ ուղղություններով.

- համատասխան ուղեցույցների մշակում,
- Հանձնաժողովի կարողությունների զարգացման նպատակով աշխատաժողովի անցկացում:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման համար ԹԱՅԵՔՍ գործիքի «Սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրության բարելավման և անբարեխիղճ մրցակցության գործողությունների կանխարգելման հիմնարար սկզբունքերի վերաբերյալ ԵՄ լավագույն փորձը» թեմայով ԵՄ փորձագիտական առաքելության ծրագիր:

Ծրագրի շրջանակում քննարկվելու են.

- անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, մասնավորապես՝ զեղչերի կիրառման ընթացքում տնտեսավարող սուբյեկտների կողմից հասարակության մոլորեցման դեպքերը և այդ համատեքստում սպառողների շահերի պաշտպանության ապահովմանն ուղղված քայլերը,
- ինտերնետ հարթակում մոլորություն առաջացնող և համեմատական գովազդի հետ կապված հարցեր,
- շփոթության աստիճանի գնահատման գործիքները և մեթոդները,
- շուկայի վերահսկողության, ապացույցների հավաքագրման հետ կապված հարցեր:

Կորեայի Հանրապետության արդար առևտրի հանձնաժողով

Հանձնաժողովը հայտ է ներկայացրել մասնակցելու՝

- Կորեայի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Կորեայի զարգացման ինստիտուտի տրամադրած գիտելիքների փոխանակման

ծրագրին «Գնումների գործընթացում հնարավոր հակամրցակցային համաձայնությունների բացահայտման համակարգի (BRIAS) ներդրում» թեմայով,

- Կորեայի արդար առևտրի հանձնաժողովի կողմից կազմակերպվող վերապատրաստման ծրագրին և տեխնիկական աջակցության ծրագրին (փորձագետի տրամադրում):

Հանձնաժողովն իր անդամակցության շրջանակներում 2020 թվականին շարունակել է համագործակցել հետևյալ կազմակերպությունների հետ.

- Եվրասիական տնտեսական միություն,
- ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդ,
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD),
- ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողով (UNCTAD),
- Միջազգային մրցակցության ցանց,
- Էներգետիկ համայնքի մրցակցության ցանց:

Հանձնաժողովը ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ 8-րդ համաժողովին հանդես է եկել անդրսահմանային հակամրցակցային համաձայնագրերի (կարտելների) դեմ պայքարի վերաբերյալ ցեկույցով:

Հանձնաժողովը 2020 թվականին դարձել է ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի անդրսահմանային կարտելների աշխատանքային խմբի անդամ:

Հանձնաժողովը շարունակել է երկկողմ համագործակցությունը հետևյալ երկրների գործընկեր կառույցների հետ.

- Ռուսաստանի Դաշնություն,
- Վրաստան,
- Ֆրանսիա,
- Գերմանիա,
- Լեհաստան:

9. Հանրային իրազեկում

2020 թվականին Հանձնաժողովը շարունակել է իրականացնել պրոակտիվ հանրային իրազեկման աշխատանքներ՝ հիմնվելով բաց, թափանցիկ, հաշվետու և հրապարակային գործելաոճի ապահովման սկզբունքի վրա: Հարկ է նշել, որ հաշվետու տարում տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստված և զանգվածային լրատվության միջոցներով տարածված հաղորդագրությունները նախորդ տարվա համեմատությամբ կրկնապատկվել են: Հակիրճ անդրադառնանք հանրային իրազեկման որոշ միջոցառումների՝

- Նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված արտակարգ դրութ-

յան ժամանակահատվածում ՀՀ կառավարությունում ստեղծված Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնում պարբերաբար կազմակերպվել են Հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ մամուլի ասուլիսներ, որոնց ընթացքում հանրությանը օպերատիվ տեղեկատվություն է տրամադրվել տարբեր ապրանքային շուկաներում տիրող իրավիճակի, Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ, պատասխաններ են տրամադրվել տվյալ ժամանակահատվածում հանրությանը հուզող հարցադրումներին: Բացի վերոնշյալ պաշտոնական հարթակից, զուգահեռ կազմակերպվել են նաև Հանձնաժողովի նախագահի մասնակցությամբ հարցազրույցներ հանրապետության տարբեր զանգվածային լրատվության միջոցներով՝ տեղեկատվության առավել լայն ու թիրախային լուսաբանումն ապահովելու նպատակով (հեռուստատեսություն, ռադիո, առցանց լրատվամիջոցներ):

- Պարբերաբար հանրությանը տեղեկատվություն է տրամադրվել Հանձնաժողովում ստեղծված շուրջօրյա աշխատանքային խմբի կողմից խոշոր տնտեսավարող սուբյեկտների մոտ շուրջ 44 անուն պարենային ապրանքների, դեղատներում դիմակների, ախտահանիչ նյութերի գների և պաշարների մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ՝ գրաֆիկական պատկերների և տեքստային հաղորդագրությունների միջոցով: Դրանք, մասնավորապես, վերաբերել են ձեռքի ախտահանիչ միջոցների, բժշկական դիմակների, ձեռնոցների, բենզինի և դիզելային վառելիքի, կարագի, բուսական յուղի, ալյուրի, ցիտրուսային մրգերի, հավի ձվի, կաթնաշոռի, թթվասերի, այլ լայն սպառման ապրանքների գծով խոշոր առևտրային ցանցերում արձանագրված գնային փոփոխություններին: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարզերի խոշոր քաղաքների առևտրային կետերում մի շարք ապրանքների գծով ՀՀ մարզպետարանների հետ համագործակցությամբ կատարված մոնիտորինգի արդյունքներին:

- Պատրաստվել են անիմացիոն հոլովակներ Հանձնաժողովի աշխատանքների առավել լայն հանրային իրազեկումն ապահովելու նպատակով: Հոլովակներից մեկը զգուշացում-հորդոր է տնտեսավարող սուբյեկտներին, որը նպատակ ունի կանխարգելելու արտակարգ դրության ընթացքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթները խախտող հնարավոր գործողություններն ու վարքագիծը, մյուսը ներկայացնում է Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների գործընթացը՝ ուղղված Հանձնաժողովի գործառույթների և առաքելության մասին հանրության շրջանում ճիշտ պատկերացում և սպասելիքներ ձևավորելուն: Դրանք տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել Հանձնաժողովի պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում և Յութուբ կայքում՝

https://www.youtube.com/watch?v=-c-TIqGEWxY
https://www.youtube.com/watch?v=BBRDJP38Mdc

- Մշակվել է ուղեցույց խոշոր առևտրային ցանցերի ներկայացուցիչների համար կաթնամթերքի իրացման փուլում սպառողների մոլորության, անբարեխիղճ մրցակցության հնարավոր դրսևորումների կանխելարգելման նպատակով, որը մասնավորապես վերաբերում է կաթնային յուղի փոխարինիչով մթերքները կաթնային մթերքներից առանձին ցուցադրելուն: Դրա հետ կապված Հանձնաժողովում կազմակերպվել է հանդիպում առևտրային ցանցերի ներկայացուցիչների հետ, նրանց տրամադրվել է խորհրդատվական աջակցություն, հեռուստառե-

պորտաժի միջոցով ներկայացվել են ցանցերից մեկում կատարված աշխատանքի արդյունքները: Տնտեսավարող սուբյեկտների հետ արդյունավետ երկխոսությունը, համագործակցային մթնոլորտի ստեղծումը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով քննարկում-հանդիպումների կազմակերպումը շարունակական գործընթաց է և ակտիվորեն իրականացվում է նաև ընթացիկ տարում: Արդեն իսկ հանդիպումներ են տեղի ունեցել խոշոր առևտրային ցանցերի և մատակարարների, կանթամթերքի ոլորտի ընկերությունների հետ:

- Լայն և բազմակողմանի քննարկումներ են անցկացվել ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի առնչությամբ: Նախքան նախագծի մշակումը Հանձնաժողովը դիմել է հանրապետության բուհերին, գիտական կազմակերպություններին գործող իրավակարգավորումների վերաբերյալ իրենց տեսակետն ու դիրքորոշումները ներկայացնելու նպատակով: Նախագիծը կարծիքի է ներկայացվել ինչպես բոլոր շահագրգիռ պետական մարմիններին, այնպես էլ ոլորտի հասարակական կազմակերպություններին, միություններին, ՀՀ փաստաբանների պալատին, ՄԻՊ-ին և այլն: Նախաձեռնվել են հանդիպումներ տնտեսավարող սուբյեկտների հետ վերջիններիս մտահոգությունները լսելու, պարզաբանումներ տալու և նախագծում լրամշակումներ կատարելու նպատակով, այդ թվում՝ կայացել է հանդիպում խոշոր առևտրային ցանցերի ներկայացուցիչների հետ: Թեմայի վերաբերյալ կազմակերպվել են Հանձնաժողովի անդամների մասնակցությամբ հարցազրույցներ:
- Շարունակվել է համագործակցությունը կրթական հաստատությունների հետ: Տարբեր բուհերի ուսանողներ հյուրընկալվել են Հանձնաժողովում, մասնակցել նիստերին, տեղում ծանոթացել Հանձնաժողովի գործունեությանը:
- Քաղաքացիական հասարակության և բիզնես ոլորտի ներկայացուցիչների հետ համագործակցությունը խորացնելու և ընդլայնելու նպատակով աշխատանքներ են իրականացվում Հանձնաժողովին կից ստեղծված տնտեսական մրցակցության հարցերով հասարակական խորհրդի կազմի համալրման և հանրության հետ երկխոսության այս հարթակի աշխատանքների ակտիվացման ուղղությամբ:

10. Էլեկտրոնային համակարգ

2020 թվականին Համաշխարհային բանկի՝ ՀՀ պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի իրականացման շրջանակում մեկնարկել է Հանձնաժողովի ներքին գործառույթների թվայնացման գործընթացը, իրականացվել են Հանձնաժողովի համար էլեկտրոնային համակարգի մշակման ու ներդրման աշխատանքներ:

Մշակվող համակարգն ունի երկու հիմնական բաղադրիչ՝

- արտաքին կայք,
- վարույթների վարման ներքին էլեկտրոնային հարթակ:

Էլեկտրոնային գործիքակազմի ներդրումը նպատակ ունի արդիականացնել Հանձ-

նաժողովի գործընթացները, ապահովել դրանց թափանցիկությունն ու մատչելիությունը հասարակության համար, պարզեցնել վարչարարությունը, հնարավորություն ընձեռել քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին դիմել Հանձնաժողով կամ փոխանակել տեղեկատվություն վերջինիս հետ նաև առցանց եղանակով:

Մշակվող նոր պաշտոնական կայքը միտված է բարձրացնելու հանրության իրազեկվածության մակարդակը Հանձնաժողովի վերաբերյալ, հասարակությանը մասնակից դարձնելու արդար և բարեխիղճ մրցակցության հաստատմանն ուղղված գործընթացներին՝ առցանց դիմումների, բողոքների ներկայացման, տեղեկատվության փոխանակման միջոցով, ինչպես նաև պատշաճ կերպով տրամադրելու հանրությանը հուզող հարցերի պատասխաններն ու տեղեկությունները, այդ թվում՝ լայն սպառման ենթակա մի շարք ապրանքատեսակների գների ամենօրյա մշտադիտարկման արդյունքները, գների դինամիկան և այլն: Տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն կունենան նախապես գրանցված անձնական էջերով ներկայացնել համապատասխան հաշվետվություններ, ստանալ ծանուցումներ, տեղեկատվություն իրենց առնչվող վարույթների ընթացքի վերաբերյալ, ծանոթանալ տվյալ գործի շրջանակում առկա փաստաթղթերին:

Էլեկտրոնային համակարգը փոխինտեգրված է լինելու այլ պետական մարմինների տվյալների շտեմարանների հետ, որոնցից տվյալների ավտոմատ ներբեռնումը կթեթևացնի վարչական վարույթների բեռը, առավել արագ և արդյունավետ կդարձնի փաստաթղթաշրջանառությունը՝ հնարավորություն ստեղծելով առավել ռացիոնալ օգտագործել ժամանակն ու ռեսուրսները:

Համակարգի գործարկումը նախատեսված է 2021 թվականին:

11. 2021 թվականի առաջնահերթությունները

Հաշվի առնելով ոլորտային և ձեռնարկատիրական միջավայրի զարգացման մարտահրավերները և միտումները, ինչպես նաև Հանձնաժողովի ռեսուրսների հասանելիությունը և աշխատանքային ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովը 2021 թվականի համար սահմանել է առաջնահերթության հետևյալ հիմնական ուղղությունները.

1. **Ոլորտային ուսումնասիրությունների շարունակական իրականացում**. ազատ տնտեսական մրցակցությունը սահմանափակող երևույթների կանխարգելման, վերահսկման արդյունավետ և նորարարական գործիքակազմերի ներդրման նպատակով Հանձնաժողովը 2021 թվականին նախատեսում է իրականացնել ազգային տնտեսության համար էական նշանակություն ունեցող և Հանձնաժողովի անմիջական միջամտություն պահանջող հետևյալ ոլորտների ուսումնասիրություններ.

- Թռչնամսի շրջանառություն,
- Կաթի և կաթնամթերքի շրջանառություն,

- Դեղերի շրջանառություն,
- Ախտորոշիչ ծառայությունների մատուցում,
- Առևտրային ցանցերի գործունեություն:

2. **Երշիկ և նրբերշիկ ապրանքային շուկաներում** նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն արտադրության և իրացման ընթացքում առկա անբարեխիղճ մրցակցության դրսևորումների վերհանման, մրցակցային միջավայրի վրա իրավական կարգավորումների ազդեցության գնահատման նպատակով: Ուսումնասիրությունը միտված է բացահայտել պիտակների և (կամ) փաթեթավորման թաղանթների մակնշումների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, ինչպես նաև երշիկների և նրբերշիկների բաղադրությունների մեջ օգտագործված բաղադրիչների համապատասխանությունը պիտակների և (կամ) փաթեթավորման թաղանթների վրա մակնշված բաղադրիչներին հասարակության մոլորեցման դեպքերը բացառելու նպատակով:
3. **««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»** օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթն ուժի մեջ մտնելուց հետո նախատեսվում է շուրջ 40 ենթաօրենսդրական **նորմատիվ իրավական ակտերի մշակում**: Մի շարք ակտերի մշակումը նախատեսվում է իրականացնել տարբեր ծրագրերի շրջանակներում ներգրավված միջազգային և տեղական փորձագետների հետ համատեղ:
4. **Պետական օժանդակությունների վերահսկման համակարգի բարելավում**. նախատեսվում է «Համաշխարհային բանկի խումբ – ԵՄ գործընկերության առաջարկ. 2017-2020 թվականներին Հայաստանին միասնական աջակցության շրջանակ. տնտեսական կառավարում» ծրագրի շրջանակներում ներգրավված Համաշխարհային բանկի փորձագետների օժանդակությամբ ներդնել համակարգ օժանդակությունների համալիր տեղեկատվական շտեմարան ձևավորելու, ինչպես նաև տնտեսական մրցակցությունը խաթարող պետական օժանդակության հնարավոր դեպքերը վերհանելու, ուսումնասիրելու և դրանց գնահատական տալու նպատակով:

12. Ֆինանսատնտեսական գործունեություն

1034-11001 «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում և վերահսկողություն» միջոցառում

1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ
2	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ
3	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում
4	Էներգետիկ ծառայություններ
5	Կոմունալ ծառայություններ
6	Կապի ծառայություններ
7	Ապահովագրական ծախսեր
8	Գույքի և սարքավորումների վարձակալություն
9	Ներքին գործուղումներ
10	Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր
11	Համակարգչային ծառայություններ
12	Տեղեկատվական ծառայություններ
13	Կառավարչական ծառայություններ
